Սեղ. Բերդեանցի-ի

գանձեր

1914թ

891.99
Շ-66

1814

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ № 79

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ՆԱՄՈՒՍ

Դրամա չորս արարածով, փոխադրուած հեղինակի ձեռքով իւր նոյնանուն վէպից

ԳԻՆԸ 75 Կ

ԹԻՖԼԻՍ
Տպարան ՀԷՊՕՒՆԻ Քուզկիսան փող № 8
1914.

891.99
Շ-66

891.99
Շ-66

10 NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ № 79

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ԴԱՄՈՒԱ

Դրամա չորս արարածով փոխադրուած հեղինակէ
ձեռքով իւր նոյնանուն վէպից

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷՊՕԽԱՆ» Մուզէյեան փող. № 8
1914.

ARMENIAN BOOK STORE
P. O. BOX 84, STA. A BOSTON

15 JUL 2013

48323

Настоящая пьеса подъ заглавіемъ „Намусъ“ (Честь), соч. Ширванзаде, разрѣшена намѣстникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ для представленія на сценахъ края (отзывъ канцеляріи за № 19789. 27 сентября 1911 года) г. Тифлисъ.

Այս պիեսի ներկայացման իրաւունքը վերապահուած է հեղինակին։ Գաւառներում և այլուր ներկայացնողները պարտաւոր են հեղինակին ուղարկել վարձ 15% ներկայացման ընդհանուր հասոյթից, այլապէս կենթարկուեն օրինական պատասխանատուութեան տէրութեան ընդհանուր օրէնքների հիման վրայ։ Հեղինակի հասցէն՝ Тифлисъ, *А. Ширванзаде.*

5327-70

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

ՆԻՐՈՒՄ Է

ԱԶԵՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԽԱՏԻՍԵԱՆԻՆ

ՀԵՂԻՆԱԿԸ

ԱՆՁԻՆՔ

1) ԲԱՐԽՈՒԴԱՐ, Ասիական դերձակ, առաջ 48 յետոյ . . . . . 57 տար.
2) ՍՄԲԱՏ, Նրա որդին, առաջ 12 յետոյ 21 տարեկ.
3) ՀԱՅՐԱՊԵՏ, կաւէ ամաններ ծախող, առ. 45 յետ. 54 տ.
4) ՍԷՅՐԱՆ, Նրա որդին, առաջ 11 յետոյ 20 տարեկ.
5) ՌՈՒՍՏԱՄ. Վաճառական, 32 տարեկան.
6) ԶԱՒԱԴ, } Ոստիկանք՝ 35 տար.
7) ՄԱՐՏԻՐՈՍ, } Անորոշ տարիքով
8) ԶԱՀԱՆԳԻՐ, } Ռուստամի հասակակից
9) ԵԳՈՌ. } 25 տարեկ.
10) ՀԱՄԲԱՐՁՈՒՄ—Ռուստամի ծառան. . 25 տ.
11) ԱՂԱԲԷԳ, Հարսանիքի հիւր. . . . 18 տ.
12) ՍԷՐԳԷՅ-ԲԷԳ, Հարսանիքի թամադա. . 40 տ.
13) ԽԱՉԵՂԲԱՅՐ, Երիտասարդ։
14) Ա. Հիւր } Երիտասարդներ՝ տղամարդիկ։
15) Բ. Հիւր }
16) Գ. Հիւր }

ԿԱՆԱՅՔ

1) ԳԻՒԼՆԱԶ, Բարխուդ. կինը, առ. 38 տ. յետոյ 47 տ.
2) ՍՈՒՍԱՆ, Բարխուդ. աղջիկը, առ. 9 յետոյ 18 տ.
3) ՄԱՐԻԱՄ, Հայրապետի կինը, առ. 40 յետոյ 49 տ.
4) ՍԱՆԱՄ, Ռուստամի մայրը . . . . 50 տ.
5) ՇՊՊԱՆԻԿ, Միջնորդ կին . . . . 40 տ.
6) Ա. Հիւր } Միջին տարիքի կանայք։
7) Բ. Հիւր }
8) Գ. Հիւր }

ԱՆԽՕՍ

Հիւրեր, հարևաններ, անցորդներ—երկու սեռից։
Քահանաներ, տիրացուներ, երգ ժիշտներ, ոտնաւորներ*)

Գործողութիւնը կատարւում է Շամախի քաղաքում 1859—69 թուականներին։ Նախերգանքի և առաջին արարածի մէջ անցնում է ինը տարի։

*) Ոտնաւորներ կոչւում են այն հիւրերը, որոնք սպասաւորի դեր են կատարում։

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՍՈՒՍԱՆԻ ԵՒ ՍԷՅՐԱՆԻ ՆՇԱՆԻԼԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՅԵՏՈՅ

Երկու տնակների մէջ եղած պարիսպը նոր խորտակւել է երկրաշարժից և նրանց կանաչաղարդ գաւիթները բեմի առաջին մասում միացել են։ Դէպի աջ Բարխուդարի միյարկանի տնակն է տափակ կտուրով և երկու լուսամուտներով։ Ձախ Հայրապետի մի յարկանի տնակն է տափակ կտուրով և մի լուսամուտով—դէպի գաւիթ։ Երկու տնակների առջև նեղ քարաշէն սաքուներ։ Գաւիթների յետին մասը ներկայացնում է խորտակւած պարսպի աւերակը, յետոյ փայտեայ ցանկապատ երկու ծուռ ու մուռ դռնակներով դէպի փողոց, որոնցից ձախ կողմինը տանում է դէպի Հայրապետի, աջ կողմինը դէպի Բարխուդարի տնակը։ Աւանսանից սկսած գաւիթների երկու երրորդական մասը դէպի խորքը ծածկւած է խաչքներով, թաղիքներով և հասարակ կապերտներով, որոնց վրայ խառն ի խուռն դարսած են մեծ քանակութեամբ բարձեր, վերմակներ, ներքնարկներ և այլն։ Մի չթեայ վարագոյր բեմը կիսում է երկու մասի։ Այդ վարագոյրը ամբողջ ժամանակ ժողոված է, միայն գործողութեան վերջումն են բաց անում։ Խորքում, պարսպի աջ և ձախ կողմերում երկու մեծ թթենիներ, որոնցից մէկը Բարխուդարի, միւսը Հայրապետի տնակին է պատկանում։ Ցանկապատի ետեր փողոց է, այնուհետև քաղաքի աւերակները։ Վաղ երեկոյ է, արեգակի դեղնագոյն ճառագայթները ոսկեզօծել են հեռաւոր աւերակները։ Օդի մէջ թանձր փոշի, օրը հետզհետէ մթնում է։

ՏԵՍԻԼ 1.

Վարագոյրը բարձրանալիս խուռ դղրդոցներ, գոռում-գոչիւններ, բարձր լացի եւ զանգերի ձայներ։—Այս բոլորը սկզբում խլացուցիչ է, ապա գնալով թուլանում եւ վերջապես դադարում է, երբ մութը բոլորովին տիրում է։—Փողոցով անցնում են խումբ-խումբ տղամարդիկ եւ կանայք, մեծ մասամբ ոտաբաց, գլխաբաց, փոշով ծածկուած։Շատերը բեռնաւորուած են տնային իրերով։—Կանայք գրկած կամ մէջքների վրայ տանում են երեխաներին։ Մի քանի պատգարակներ, վրան դիակներ եւ վիրաւորուածներ։—Պատգարակների առջեւ եւ ետեւից լացող եւ կուրծք ծեծող կանայք զգգուած մազերով։

ՍՄԲԱՏ։ (Վարագոյրը բացուելուց բաւական անցած գալիս է յոգնած, փոշոտ, քրտինքը սրբելով։ Տասներկու տարեկան պատանի է, հագած կապտագոյն արխալուղ, կարճ ջուխալով, մէջքին արծաթեայ գօտի, գլխին Բուխարայի մորքուց ցածր եւ կլոր գդակ, որ այն ժամանակ «գարիբալդի» անունն էր կրում։ Ոտներին ճասարակ ռուսական կօշիկներ, որոնց աններկ անկարուրդի մէջ են մտցրած վարդիկի ծայրերը։ Առաջ է գալիս եւ նստում է Սուսանի ու Սէյրանի անկողինների միջեւ յատակի վրայ, դրակը գլխից վերցնելով)։ *Օ՜հ, ոտներս կոտրուեցին, հոգիս բերանս եկաւ։*

ՍԷՅՐԱՆ։ (Նստած է ձախ, յատակի վրայ փռած անկողնի մէջ հալուստով։Տասնուամեկ տարեկան պատանի է։ Հագած է ամարային ապիտակ արխալուղ ջրից, մէջքին արծաթեայ գօտի, ոտներին հասարակ ռուսական կօշիկներ։ Գլուխը փաթաթած է կապոյտ թաշկինակով։ Մի քանի ժամ առաջ նրան դուրս են բերել փլատակների տակից, ուստի փոշոտ է)։ *Գնացէ՛ք Թուրքերի թաղը։*

ՍՄԲ։ Հէնց այնտեղից եմ գալիս։ Էլ տեղ չթողեցի. Շելի, Մէյդանլի, Սարի-Թորփաղ։ Տեսայ քանդուած մեչիդները, բաղնիքները, քարուանսարաները։

ՍՈՒՍԱՆ։ (Նստած է հագստով աջ կողմի անկողնի մէջ։ Ինքը տարեկան սիրուն աղջիկ է, հագին կարմիր շապիկ, մանիշակագոյն մետաքսեայ արխալուղ բաց կրծքով եւ տերեւաձեւ թեւերով։ Գլխին կապած է ճուրխի։ Ոտներին կոպիտ եւրոպական կօշիկներ)։ *Ասում են Թուրքերից շատ մարդ է սպանուել, ճշմարիտ է։*

ՍՄԲ։ Շատ, շատ-շատ։ Ղալա-բազարի բաղնիքից տասնուչորս մարդ դուրս բերեցին տափակած, սրբենաթաթախ։ Աչքովս տեսածը համբեցի մինչև վաթսուն։ Էհ, շատ է, ինչ հարիւր, ինչ երկու հարիւր։ Հայերից քիչ մարդ է սպանուել, այն էլ բազարում։ Հօրէն տանում են նրանց դիակները։ Դէհ, հիմի դուք պատմեցէք, ինչպէս մնացիք հողի տակ։ (գրպանից դուրս է բերում մի խնձոր եւ կրծոտելով ուտում է)։

ՍԷՅՐԱՆ։ Մենք մեր փողոցումն էինք։ Ես Սուսանի համար մեր ծառից թութ էի թափ տալիս քարերով ու փայտերով։ Առաջ առաջ երկինքը որոտաց։

ՍՈՒՍԱՆ։ (վրդովւելով) *Էլի ասաց երկինքը։ Տափի տակից էր, տափի տակից, կարմիր կոմշ էր մռնչում։* (գրպանից հանում է ծամոն եւ սկսում է ծամել)։

ՍՄԲԱՏ։ Լաւ, թող պատմի։

ՍԷՅՐԱՆ։ (ժպտալով) *Շները ոռնացին, հաւերը կչկչալով դէս ու դէն փախան։ Տափը լիլիաց, տները օրօրւեցին։ Ես վախից կուչ եկայ։ Սուսանը վազեց, փեշիցս բռնեց, «վայ մամա, վայ մամա» կանչելով։*

ՍՄԲ։ Յետոյ, յետոյ։

ՍԷՅՐ։ Յետոյ փախանք։

ՍՄԲ։ Փողոցի մէջտեղով պիտի փախչէիք։

ՍԷՅՐ։ Շեարուել էինք, մոռացանք, պատերի տա-

կով փախանք։ Շափալեանց տան առաջ գլխիս վրայ մի մեծ բան ընկաւ։

ՍՈՒՍ։ Հէնց Շափալեանց դուռն էր։

ՍԷՅՐ։ Գլուխս պտտեց, աչքերս մթնեցին, ընկայ երեսիս վրայ։

ՍՈՒՍ։ Ես էլ ընկայ։

ՍԷՅՐ։ Մէկ էլ յանկարծ գիւռ-գիւռ հող, քար, փայտ թափուեցին մեր գլխին։

ՍՄԲ։ (դէն գցելով կերած խնձորի միջուկը) Ուշքդ չգնաց։

ՍԷՅՐ։ Չէ, գլուխս ջարդուել էր, արիւն էր գնում։ Աստծու ողորմութիւնով դուռը մեր վրայ էր, չթողեց, որ ճխլուենք։ Բայց շունչս կտրուում էր։ Սուսանը լաց էր լինում։ Սիրտս մղկտում էր։ Ուզում էի խօսել, ձայնս փորիցս դուրս չէր գալիս. վերջը աչքերս մթնեցին, էլ ոչինչ չտեսայ։

ՍՈՒՍ։ Ես տեսնում էլ էի, լսում էլ էի։

ՍՄԲ։ Ի՞նչ էիր տեսնում։

ՍՈՒՍ։ Կարմիր կովին։

ՍԷՅՐ։ Կարմիր կով չկար։

ՍՈՒՍ։ (վիրաւորուած սրտմտութեամբ) Սուտ ես ասում, կար, աչքովս տեսայ։ Նա մեր տնից մեծ էր, մեր ծառից բարձր։ Աչքեր ունէր—արիւնով լիքը գաւաթների պէս, բերան ունէր—վառած թոնրի նման։ Ալով էր դուրս գալիս այնտեղից վռվռալով։ Լեզուն այսքան էր, այ, էլ աւելի. պոզերը սուր-սուր, ծուռ-ծուռ։ Մի մռնչում էր, որ մազերս փչաքաղւում էին, մարմինս զարդանդում էր։

ՍԷՅՐ։ (ճանգիստ) Ես քեզ ասում եմ տափի տակին կարմիր կով չկար։ Եթէ լինէր, ես էլ կտեսնէի։

ՍՈՒՍ։ Ես էլ քեզ ասում եմ կայ, կայ ու կայ։ Դու չգիտես, որ աշխարհը այդ կարմիր կովի մէջքի վրայ է կանգնած։ Նա հազար ոտներ ունի։ Երբ մենք

դարուքիւն ենք անում, մեր ծնողների խօսքը չենք հասում, կարմիր կովը կատաղում է, մէջքը թափահարում է, տափը շարժւում է. տները թափւում են, մարդիկ սակն են մնում։ Թող Սմբատը ասէ, եթէ ինձ չես հաւատում։

ՍՄԲ։ Ես մի օր մեր վարժապետին հարցրի, նա ասաց, որ տափի տակին ոչ կարմիր կով կայ, ոչ էլ սպիտակ. (վեր է կենում)։

ՍՈՒՍԱՆ։ (վշտանալով, դաց է անում աչ ձեռի ճինգ մատերը օդի մէջ եւ ճանկ անում վարժապետի հասցէին)։ Առա է, հոգս քո վարժապետի գլխին, նա ինչ է հասկանում։

ԴՐՍԻՑ։ (լսում է բաւականին երկարատեւ դղրդիւն)։

ՍՈՒՍ. (սարսափած ոտքի է թռչում)։ Այ, տեսար, էլի կարմիր կովը կատաղեց։

ՍԷՅՐ։ (սարսափած, ոտքի է թռչում)։ Տափը շարժւում է։ Փախչենք։

ՍՄԲ։ Իսկի մի վախենաք, տափը հանդարտ է, գնամ տեսնեմ ինչ պատահեց (վազում է բեմի խորքը)։

ՍՈՒՍ։ (իրար ձեռքից բռնած, երկիւղով նայում են դէպի խորքը)։

ԴՐՍԻՑ։ (շարունակ լսում է աղմուկ, սակայն ոչ առաջւայ պէս սաստիկ։ Զանգերը դադարել են)։

ՍՄԲ։ (քիչ յետոյ գալիս է)։ Ոչինչ, մի վախենաք, Զօփուռանց տան մնացած պատն էր, իրանք թափեցին, որ անցնողների վրայ չընկնի։

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնք եւ Մարիամ

ՄԱՐԻԱՄ։ (Գալիս է ձախ կողմի տնակից, ձեռքին մի վառած մոմ, որ դնում է իրանց տան սարքի վրայ։

Մօտ բառասուն տարեկան կին է, հասարակ տեղական հագուստով. գլխին բոռ է կապած, ուսերին գցած հասարակ հնամաշ շալ)։ Մութն ընկաւ, երկինք երկիր խաւարեց։ Ինչ մեղք էինք արել, երկնային դատաւոր, որ այսպէս պատժեցիր մեզ։ Պառկեցէք, բալաներս, պառկեցէք, մի լսէք այդ զարհուրելի ձայները, մի տեսնէք այդ դիակները, որ տանում են փողոցով։ Օրհնեալ լինի Աստծու զօրութիւնը, օրհնեալ լինի, որ ձեզ ազատեց։ (ձեռները դէպի երկինք բարձրացնելով) Տէր, դու սրանց պահես պահպանես փորձանքներից։

ՍԷՅՐ։ (նստում է իւր անկողնի մէջ) Մամա, ես քաղցած եմ։

ՍՈՒՍԱՆ։ (նստում է անկողնի մէջ) Ես էլ։ (ծամոնը դուրս է բերում բերանից)։

ՄԱՐ։ Բար կարեւեմ, բալաներս, այսօր անօթի էք. գնամ հաց ու պանիր բերեմ ձեզ համար (ոտքում է գնալ)։

ՏԵՍԻԼ 3.

Նոյնի եւ Գիւլնազ

ԳԻՒԼՆ։ (Գալիս է աջ կողմի դռնից ձեռքին մի վառած մոմ, որ դնում է իրանց տան սաքուի վրայ։ Կռան տակին մի կապոյտ սփռոց եւ միւս ձեռքին ափսեներ։ Մարիամից նի քիչ երիտասարդ կին է, աւելի սիրուն։ Հագնւած է Մարիամի պէս, շալը հնամաշ չէ)։ Համբերիր, ա կնիկ, ես սեղան եմ պատրաստում։ Մենք էլ անօթի ենք, միասին մի բան ուտենք. (սփռոցը սփռում է յատակի վրայ եւ ափսեները վրան դարսում)։

ՄԱՐ։ Աստուած ինձ յաւիտեան անօթի թողեց։ Ախ, Գիւլնազ, քանդւեցինք-պրծանք։ Գնացել էի մարդուս դուքանը տեսնելու։ Այնքան կուժ ու կուլայից

քսան հատ չէ մնացել, չիմ փշրւել է, մոխիր դարձել (արտասուում է)։

ԳԻՒԼՆ։ Ինչ անենք, մինիկ տղայիդ կեանքին մատաղ մարդուդ կուժ ու կուլան։ Մի կտոր հաց միշտ կճարենք, բայց զաւակներ ճարել չենք կարող։

ՄԱՐ։ (աչքերը թաշկինակով սրբելով) Դէ, դրուստ ես ասում, ինչ ասեմ, փառք Երկնաւորին (սկսում է օգնել Գիւլնազին)։

ԳԻՒԼՆ։ Փառք, փառք և փառք, որ դրանց կեանքն առաւ ու մէկէլ մեզ բաշխեց։ (ցոյց է տալիս Սուսանին ու Սէյրանին, նայելով դէպի երկինք)։ Արարիչ Աստուած, ինչ կապոյտ է երկինքդ. ինչ պայծառ են աստղերդ, բայց չգիտեմ ինչու ես բարկանում մեզ վրայ։

ՍՈՒՍ։ Մամա, իմ աստղը որն է (վեր է կենում)։

ԳԻՒԼՆ։ Այ, տեսնում ես, այն պղտիկն է, եօթ եղբայրների մէջ։ Աստուած քեզ եօթի տեղ մի եղբայր է տուել, աղաչիր նրան, որ պահի պահպանի մինիկ եղբօրդ չար աչքից, չար նիաթից (սեղանի շուրջը ներքնարկներ է գցում)։

ՄԱՐ։ Էհ, ես էլ գնամ, ինչոր ունիմ, բերեմ (գնում է աջ կողմի դռներով եւ իսկոյն գալիս, բերելով մի քանի լիքն ափսեներ, օղու շիշ եւ բաժակներ)։

ՍՄԲ։ Ես մինչև լոյս չեմ քնելու։

ՍՈՒՍ։ Ես էլ։

ՍԷՅՐ։ (ոտքի թռչելով) Հալա հալա հուռա, քէֆ ենք անելու։

ՄԱՐ։ Սուս, ամօթ է, լսում ես լացի ձայները։ Ամբողջ քաղաքը սգի մէջ է։ (բերած ամանները դնելով սփռոցի վրայ) Քամած մածուն, խաշած ձուկը, այս էլ մի քիչ ձուկ։

ԳԻՒԼՆ։ (դնելով սփռոցի վրայ բերած ափսեները) Այս էլ պանիր, թթուեղէն, խաշած հաւ, արաղ։ Սմբատ, այն ճրագները մէջ տեղ դիր։

ՍՄԲ։ (վերցնում է սաքուների վրայից Մարիամի եւ Գիւլնազի բերած մոմերը եւ դնում սփռոցի վրայ։

ՏԵՍԻԼ 4.

Նոյնք եւ Հայրապետ

ՀԱՅՐԱՊԵՏ։ (Գալիս է խորքի ցանկապատի ձախ կողմի դռնակից։ Քառասունուհինգ տարեկան տղամարդ է, նիհար, բայց զարթ դեմքով, քիչ ալեխառը կարճիկ միրուքով, շատ հաստ ու ցած ընկած բեխերով։ Հագած է կապտագոյն արխալուղ, սեւ խուճացած ջուխայ կարճ բեւերով։ Մէջքին կապած է մոխրագոյն հասարակ ասուեայ գոտի։ Ոտներին հագած է սպիտակ գուլպաներ եւ քոշեր (ջմուշկներ), ոտից միջեւ գլուխ ծածկած է փողով։ Հասնելով կապերտների սահմանին, հագուստը բափ է տալիս եւ այնպես առաջ դալիս)։

ՄԱՐ։ Եկար, վերջապէս։ Ի՞նչ նոր խաբար ես բերել։

ՀԱՅՐ։ Տեսայ բոլոր ազգականներիդ ու ազգականներիս։ Շամչեանց տան պատերը ճաքել են, ֆլաս չունի։ Մաղաքանց կտուրը թափուել է, դա էլ ֆլաս չունի, Ճատտի կտուրանց տունը տակն ու վրայ է եղել, ինձ հարցնես, դա էլ ֆլաս չունի։ Ամա որ Մարմարանց հաւաքունը ընկել է, երկու հաւ է սատկել, դա մեծ ֆլաս է բոզբաշի համար։

ՄԱՐ։ Տնաքանդ, ունեցած-չունեցածդ ձեռքիցդ գնացել է, էլի հանաքներ ես անում։

ՀԱՅՐ։ Ջառ ու ջահաննամը, որ գնացել է (ուզում է Մարիամին գրկել, ընդդիմութիւն տեսնելով, զսպում է իրան) *Մի կտոր հաց միշտ կճարենք* (սեղանը տեսնելով) *Օհօ, սեղան էք պատրաստել։ Այդ լաւ է, քաղցած եմ։ Արաղ էլ կա՞։ Կայ, էլ ինչու՞ ենք*

սպասում։ Բարխուդարը տանը չէ՞։ (ոտքի է վերցնում ու ծամում)։

ՄԱՐ։ Շուտով կգայ։

ԴՐՍԻՑ։ (հեռուից լսւում է թմբուկների, ծնծղաների ձայներ։ Թուրքերը ողբում են իրանց մեռելներին, գոռալով «Շահ Հիւսէյն, վահ Հիւսէյին)»։

ՍԷՅՐ։ Այդ ի՞նչ է։

ՀԱՅՐ։ Թուրքերը շախսէյ վախսէյ են անում իրանց մեռելների համար։

ՍՈՒՍ։ (գրկելով Գիւլնազին) *Մամա, ես վախենում եմ։*

ԳԻՒԼՆ։ Մի վախենար, բալաս։

ՄԱՐ։ Գիշերւայ խաւարին այդ ձայները մարդու զարգանդեցնում են։

ԳԻՒԼՆ։ Կարծես դժոխքից են գալիս։

ՀԱՅՐ։ (Բարխուդարին տեսնելով) *Եկ, ա մարդ, քաղցած մեռանք։*

ՏԵՍԻԼ 5.

Նոյնք եւ Բարխուդար

ԲԱՐԽՈՒԴԱՐ։ (Գալիս է աջ կողմի դռներից մի երկար եւ շատ բարակ ջիբուխ ծխելով։ Բարձրահասակ խոժոռ ու մռայլ դեմքով մարդ է, սափրած երեսով։ Հագած է երկար բեւերով ջուխա, տակից ճիր ձեւի արխալուղ, լայն եւ տերեւաձեւ բեւերով ու բաց կրծքով։ Մէջքին, արխալուղի վրայից կապած է կապոյտ մետաքսեայ գոտի։ Գլխին դրած է երկար, սրածայր գդակ։ Քառասուն եւ ութ տարեկան է։ Բայլում է ծանր, միշտ գլուխը հպարտ բարձրացրած։ Շախսեյ վախսեյի հաստ ցեղին)։ *Քանդուեց, տակն ու վրայ եղաւ շէն քաղաքը։ Դա Աստծու արդար պատիժն էր, որ եկաւ մեր գլուխ։*

խին (կապիտանների նասնելով, ջմուշկները ճանում է եւ այնպես առաջ գալիս)։

ՀԱՅՐ։ Ինչո՞ւ Աստծու արդար պատիժը հէնց մեզ է հասնում։ Ուրիշ քաղաքներ չկան։

ԲԱՐԽ։ Ոչ մի տեղ չկայ այն ապականութիւնը, ինչոր այս անիծած երկրում։ Հաւատ չմնաց, օրէնք չմնաց, բոլորը ոտնատակ արին մարդիկ։ Ո՞վ էր տեսել, որ հայ քրիստոնեան մոռանայ խաչ ու խաչվար, չուզենայ լսել զանգերի ձայն, պաս ու ծոմ չպահի։

ՀԱՅՐ։ Էլի լիւտերականների դէմ ես կատաղել։

ԴՐՍԻՑ։ (դաղարսում է շախսեյ վախսեյը)։

ԲԱՐԽ։ (աւելի գրգռելով) *Քանդելի նրանց տունը, որ մեր տները քանդեցին։ Տեսնուած բան է, որ հայ քրիստոնեան պակաւ իր հօրեղբօր կամ մօրաքրոջ աղջկայ հետ։ Ի հարկէ, նա երկնքից մտիկ է անում, անենում է այս ամենը ու մեզ պատժում է։ Թացն էլ այրւում է չորի կրակով։*

ՀԱՅՐ։ Իմ կարճ խելքով լիւտերականութիւնը շատ լաւ բան կը լինէր, եթէ թոյլ տար արդ գինի խմել։

ԲԱՐԽ (կատաղի ճայեացք ձգելով նրա վրայ)։ *Հայրապետ։*

ՀԱՅՐ։ Լաւ, լաւ, հանաք արի։

ԳԻՒԼՆ։ (Բարխուդարին) *Նստիր, երեխաները քաղցած են։*

ԲԱՐԽ։ (նստում է ծալապատիկ սեղանի քով, ջիբուխը մի կողմ դնելով) *Նստեցէք։*

ԱՄԵՆԲԸ։ (նստում են սովորոցի շուրջը— ծալապատիկ, կանալը սպասելով, որ առաջ տղամարդիկ նստեն, փոքրերը սպասելով մեծերի նստելուն)։

ՀԱՅՐ։ (Բարխուդարի եւ իւր բաժակներն օդի ածելով)։ *Է՜հ, Բարխուդար, խմիր, Աստուած գնացողների հոգին լուսաւորէ, մնացողներին ազատէ նոր-նոր փորձանքներից։*

ԳԻՒԼՆ։ Ամեն, Տէր Աստուած։

ՄԱՐ։ Ամեն։

ՀԱՅՐ։ (բաժակը զարկելով Բարխուդարի բաժակին) *Գցիր, ունայնութիւն ունայնութեանց, ասում է Տէր-Իսրայէլը։ այսօր բաղումն ենք, էգուց հողում։* (բաժակը դատարկում է մի կումով, գլուխը դեպի մէջքը թեքելով. անմիջապես բրեզեն է ուտում) *Օրինաւոր թունդ արաղ է։*

ԲԱՐԽ։ (նախ քանի ուտելը, երեսն երեք անգամ խաչակնքել է) *Հողումն ենք, թէ բաղում, տայ Աստուած, որ չմոռանանք վախն Աստծուց և ամօթը մարդկանցից։* (օդի է խմում)։

ՀԱՅՐ։ (նորից լցնելով իւր բաժակը)։ *Իհարկէ։*

ԲԱՐԽ։ (խմում է շտապով, ինքն իւր մտքերով յափշտակելով)։ *Բայց մարդիկ ոչ վախ ունին, ոչ ամօթ։ Ո՛րտեղ է մեր հայրերի և պապերի ճշմարտութիւնը։ Արուռ չի մնացել, հայա չի մնացել, նամուս ասած բանը այսօր ճրագով են փնտրում, չկայ։* (Իւր բաժակը լցնում է, որպէսզի Հայրապետը լեցնէ)։ *Զգւել եմ մարդկանցից, Հայրապետ, զգւել։ Շունը շնութիւնով այն չի անում, ինչոր նրանք* (խմում է)։

ՀԱՅՐ։ Դրուստ խօսողի ձին թամքած պիտի լինէ, որ ճշմարտութիւն ասի ու նստի վրէն, փախչի։ Էհ, ինչ գործ ունինք ուրիշների հետ, ամեն մարդ ինքն է պատասխանատու իւր մեղքերի համար։

ԲԱՐԽ։ (իւր դատարկ բաժակը տալով Հայրապետին)։ *Կանանց համար էլ ածիր, թող մի քիչ նրանց սրտերն էլ բացւին։* (Դաղարելով ուտել, մտածում է)։

ՀԱՅՐ։ (Բարխուդարի բաժակը լցնելով, տալիս է Մարիամին, իւր բաժակը տալիս է Գիւլնազին)։ *Խմեցէք մեր ընտանիքների բարեկամութեան կենացը։ Ինչպէս մինչև այսօր ենք սիրով հարևանութիւն արել, տայ*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. Библиотека
ՀԱՍՍՌ-Арм.ССР
Ա. Մ. Մեսրոպյան անվան

Աստուած, որ այսուհետև էլ անենք։ Ի՞նչ կասես, Բարխուդար։

ԳԻԻԼՆ։ (երեսը ծածկելով, բաժակը բարձրացնում է Բարխուդարի կողմը եւ խմում)։ Ամեն։

ՄԱՐ։ (երեսը շալով ծածկելով, բաժակը բարձրացնում է Հայրապետի կողմ եւ խմում)։ Ամեն, Տէր Աստուած։

ՀԱՅՐ։ Յոյս երկնաւորին, որ ինչպէս մեր հայրերն ու մայրերն են մինչև գերեզման հաշտ ապրել, մենք էլ ապրենք։ Ի՞նչ կասես, Բարխուդար։ Այ մարդ, ինչի՞ մասին ես մտածում։

ԲԱՐԽ։ (մի վճռական շարժում անելով)։ Երեխաներ, կերաք, կշտացա՞ք։

ՍՈՒՍ։ (բերանը անձեռոցիկով սրբելով)։ Ես կըշտացայ։

ՍԷՅՐ։ Ես էլ։

ԲԱՐԽ։ Դէ, քնելու ժամանակ է։

ՍԷՅՐ։ (վեր է կենում պառկում իւր ակոռնի մէջ)։

ՍՈՒՍ։ (վեր է կենում գնում պառկում իւր անկողնի մէջ)։

ՄԱՐ։ (վեր է կենում Սեյրանին ծածկում վերմակով)։

ԳԻԻԼՆ։ (վեր է կենում Սուսանին ծածկում վերմակով)։

ԲԱՐԽ։ Հայրապետ, եկ մի բան անենք, որ Աստուած էլ հաւանի, մարդիկ էլ։

ՀԱՅՐ։ (դադարելով ուտել) Ասա, Բարխուդար, ասա, դու գիտես, որ քո ամեն մի խօսքը ինձ համար օրէնք է։

ԲԱՐԽ։ Ա՛ կնանիք, մօտ եկէք, լաւ բան եմ ասելու։

ՄԱՐ }
ԳԻԻԼՆ } (գալիս նստում են եւ ուշադրութիւնը լարում Բարխուդարին լսելու)։

ՍՄԲ։ (ուզում է գնալ պառկելու)։

ԲԱՐԽ։ (Սմբատին) Դու մնացիր, հարկաւոր ես։

ՍՄԲ։ (նստում է եւ ուշադրութիւնը լարում)։

ԲԱՐԽ։ Լսիր, Հայրապետ։ Այդ պարխպը, որ բաժանում էր մեր տները, քանդուեց։

ՀԱՅՐ։ (հառաչելով) Քանդուեց։

ԲԱՐԽ։ Քեզ եմ հարցնում, ո՞վ քանդեց։

ՀԱՅՐ։ Դէ, իհարկէ, երկրաշարժը։

ԲԱՐԽ։ (ոգեւորուած) Չէ, Հայրապետ։ (ձեռքը հանդիսաւոր բարձրացնում է երկինք)։ Նա քանդեց, նա ինքն իւր ձեռքով։ Ինչի՞ համար քանդեց, քեզ եմ հարցնում։

ՄԱՐ։ (խորը հառաչելով)։ Նրա համար, որ մեզ ծախսի մէջ գցի։

ԲԱՐԽ։ Մեղք ես գործում, Մարիամ բաջի, այդպէս չէ։ Աստուած այդ պարխպը քանդեց, որ մեր տները միացնէ։ Քանդեց, որ մեր բարեկամութիւնն աւելի հաստատէ։

ՀԱՅՐ։ (ոգեւորւելով) Ափարիմ, Բարխուդար, ափարիմ։ (օղի է խմում)։

ԲԱՐԽ։ Համբերիր, թող խօսքս վերջացնեմ։ Ա՛կանջ դրէք, ա՛ կնանիք, ինչոր պիտի ասեմ, կէսը ձեզ համար է։

ՀԱՅՐ։ Մօտ նստեցէք, մի ամաչէք։ Յետ քաշուեցէք շալներդ, որ ականջներդ բացուին, լաւ լսէք։

ՄԱՐ։ (երեսը բաց անելով, Գիւլնազին ցնցում է)։ Սիրտս թրթռում է։

ԳԻԻԼ։ Իմն էլ։

ԲԱՐԽ։ (Միշտ հանդիսաւոր)։ Հայրապետ, Մարիամ բաջի, դուք մարդ ու կնիկ մի հատիկ աչքի լոյս տղա ունէք։

ՄԱՐ։ (խորը հառաչում է, աչքերը աղերսանքով դէպի վեր բարձրացնելով)։

ԲԱՐԽ։ Մենք էլ մարդ ու կնիկ մի տղա ունինք ու մի աղջիկ։

ԳԻԻԼՆ։ (խորը ճառաջում է, աջքերը ադերսանքով դեպի վեր բարձրացնելով)։

ԲԱՐԽ։ Եկէք, ձեր տղային բաշխեցէք մեզ, մենք էլ մեր աղջկան բաշխենք ձեզ։ Ինչ կասէք, հը՞։

ԱՄԵՆԲԸ։ (տարակուսանքով նայում են իրար։)։

ԲԱՐԽ։ (ժպտում է)։

ՀԱՅՐ։ (ճակատը սրբելով) Բարխուդար, չեմ իմանում ասածդ պարզ չէ, թէ խելքս է մթնել. ես բան չհասկացայ,

ԲԱՐ։ Որ չհասկացար, պարզ կասեմ։ Մինչև օրս ձեր Սէյրանն ու մեր Սուսանը մեծացել են միասին, ինչպէս մի տան երեխաներ։ Աստծու կամքն էր, որ նրանք այսօր միասին մնան փլատակների տակ, միասին էլ աղատուեն։ Դէ որ այդպէս է, ուրեմն, Աստուած կամեցել է, որ նրանք իրանց ողջ կեանքն էլ միասին ապրեն, ծերանան ու մի տան մէջ մեռնեն։ Հիմի հասկացար։

ՄԱՐ։ (Գիւլնազին ուրախ ուրախ բօքելով) Աղջի, լսեցիր։

ԳԻԻԼՆ։ Լսում եմ, լսում։

ՀԱՅՐ։ (յափշտակելով) Բո բերանով ինքը սուրբ հոգին է խօսում, մարդ, այդ ինչ լաւ բան ասացիր։

ԲԱՐԽ։ Եկէք այս գիշեր, այդ բաց երկնքի տակ, այդ պլպլան աստղերի վկայութեամբ, վերևից մեզ մտիկ անող Աստծու ու հրեշտակների օրհնութեամբ Սուսանին և Սէյրանին նշանենք. ինչ կասէք, հը՞։

ՀԱՅՐ։ (աւելի ոգեւորուած, Մարիամին) Լսում ես, ա կնիկ, դէ, խօսիր էլի, ինչ ես պապանձուել։

ՄԱՐ։ Աստուած շնորհաւոր անէ։

ԳԻԻԼՆ։ Աստուած շնորհաւոր անէ։

ՍՄԲ։ Ամեն։

ՀԱՅՐ։ Այ մարդ, այդ ո՞ր սուրբը միտքդ այդպէս լուսաւորեց։ (Մարիամին) Դէ, ա կնիկ, ծափ տուր, պար դանք, հարսնացու ունիս, տղադ նշանուեց։ (Դդակն

ուրախութիւնից մի կողմ շպրտելով) Ադա, Սմբատ, ասա հափ հափ հուռռա։

ԲԱՐԽ։ Հանդարտ, ձայնդ գլխիդ մի գցիր, մարդիկ սգի մէջ են։ Ես իմ աղջիկը տալիս եմ քո որդուն, որ մեր բարեկամութիւնը հաստատուի որդոց որդի, յաւիտեանս յաւիտենից։ Թող ինչպէս մեր և ձեր մէջ այդքան տարուայ ընթացքում ջուրը ջրութիւնով չի անցել, չանցնի մեր զաւակների, թոռների ու ծոռների մէջ էլ։

ՄԱՐ։ }
ԳԻԻԼՆ։ } (միաձայն) Ամեն, տէր Աստուած, ամեն։

ԲԱՐԽ, Ինչպէս Աստուած քանդեց այդ պարիսպը, թող այնպէս էլ քանդուի ու ոչնչանայ այս երկու տների մէջ ամեն մի հակառակութիւն, առեղութիւն, նախանձ։

ՄԱՐ։ }
ԳԻԻԼՆ։ } (միաձայն) Ամեն, ամեն։

ՀԱՅՐ։ Մարդ ես, Բարխուդար, մարդու լեզուով ես խօսում։ (օղի է խմում)։

ԲԱՐԽ։ (աւելի ոգեւորուելով) Տեսնում էք այն երկու թթի ծառերը. մէկը մերն է, միւսը ձերը, մէկը մեր բաղումն է, միւսը ձեր բաղումը։ Տեսէք ինչպէս են բարձրացել, իրարու խառնուել։ Այդտեղ էլ խառն է Աստծու մատը։ Հէնց այդ ծառերի տակ խաղալով են մեծացել մեր զաւակները։ Թող նրանց աստղերը միանան այդ ծառերի պէս։

ՀԱՅՐ։ Միանան։

ՄԱՐ։ }
ԳԻԻԼՆ։ } (միաձայն) Ամեն, ամեն։

ԲԱՐԽ։ Աշխարհը մեծ է, մարդիկ շատ, բայց նամուսով մարդ շատ քիչ կայ։ Հայրապետ, ես մինչև հիմա քեզ նամուսով մարդ եմ ճանաչել, հէնց այս պատճառով էլ ուզում եմ, որ իմ աղջիկը քո տունը

մանի, այնտեղ ապրի ու այնտեղ մեռնի։

ՄԱՐ։ Աչքիս լուսի՛ պէս կպահեմ նրան, եթէ Աստուած մեզ մի կտոր հաց կտայ։

ԲԱՐԽ։ Այդ մասին շատ էլ մի մտածիր, Մարիամ բաջի։ Աստուած ինչպէս մեզ չի թողել քաղցած, մեր զաւակներին էլ չի թողնիլ։

ՄԱՐ։ Երանի այդպէս լինի։

ԲԱՐԽ։ Այդպէս էլ կլինի, այդպէս էլ կլինի, քիչ մտածիր։ Երկիրը շարժուեց, մարդիկ փչացան հարիւրներով, քո մարդու կուժ ու կուլան միայն կորաւ. ինչ արած, Աստծու կամքն էր. էգուց մարդուդ դուքանը էլի կսարքենք։

ՄԱՐ։ (հառաչելով) ԻնչՁվ։

ԲԱՐԽ։ Իմ փողով, Մարիամ բաջի, իմ փողով։ Ես ունիմ, շատ չէ, բայց ձեզ բաւական է։

ՄԱՐ։ Աստուած հազարապատիկը տայ...Աստուած...

ԲԱՐԽ։ (խիստ ընդհատելով)։ Չէ, չէ, առանց շընորհակալութեան։ Բարեկամների մէջ նպաստ բաղն աւելորդ է։ Ապրելն ինչ բան է, անասուններն ու թռչուններն էլ են ապրում։ Բայց մարդ կայ որ նամուսի համար կախաղան կբարձրանայ, մարդ էլ կայ, որ շան չափ ամօթ չունի։ Նամուս, նամուս, նամուս։ Ով ունի այդ գոհարը,—մարդ է, ով չունի—անասուն է։ (Տեսնելով, որ Հայրապետը յուզմունքից արտասուել է)։ Ինչ պատահեց քեզ, մարդ Աստծու։

ՀԱՅՐ։ (աչքերը սրբելով, ժպտում է) Ոչինչ, խօսքերդ սրտիս դիպան (ուզում է օդի ածել)։

ՄԱՐ։ (դիշը խլելով Հայրապետից) Խօսքերը չէ, այ թէ ինչը դիպաւ սրտիդ։ Հերիք է։

ՀԱՅՐ։ (աղերսական) Ա կնիկ, թող տեսնենք, ա կնիկ։

ԳԻՒՂ։ Աղջի ինչի՞ եմ նստել. գնամ մուրաբա բերեմ, բերաններս քաղցրացնենք (վեր է կենում)։

ՄԱՐ, (վեր վեճալով) Թող ես բերեմ։

ԳԻՒՂՆ։ Իմը նարինջի է։

ՄԱՐ։ Իմը սերկևեղի է։

ԳԻՒՂՆ։ Ես վարդի մուրաբա էլ ունիմ։

ՄԱՐ։ Ես ընկոյզի էլ ունիմ։

ՀԱՅՐ։ Լաւ, մի կտորուէք. գնացէք, երկուսդ էլ բերէք։

ԳԻՒՂՆ։ (գնում է աջ կողմի դռներով)։

ՄԱՐ։ (գնում է ձախ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնք, առանց Գիւլնազի եւ Մարիամի

ՀԱՅՐ։ (կնոջ ետեւից նայելով, իւր համար օղի է ածում) Ախ, Բարխուդար, Բարխուդար, ինչ ասեմ։

ԲԱՐԽ։ (լուրջ, մտազբաղ) Սմբատ, գնա Աւետարանդ ու գրիչդ բեր այստեղ։

ՈՄԲ։ (շտապով գնում է աջ կողմի դռներով եւ իսկոյն յետ գալիս, ձեռին ճնճղաշ կազմով մի Աւետարան, մի փետրեայ գրիչ եւ կաղամար)։

ՀԱՅ։ (նայելով դեպի Սուսանի ու Սեյրանի անկողինները) Օ՜, ինչ անուշ են քնած։ Քնեցէք, քնեցէք անմեղ քնով, թող երկնային հրեշտակները ձեզ պահապան լինին (օղի է խմում)։

ՏԵՍԻԼ Է.

Նոյնք. Մարիամ եւ Գիւլնազ

ԲԱՐԽ։ Բերէք, տեսնենք ինչ էք բերել։

ՄԱՐ։ (ձախ կողմի դռներից գալով, սփռոցի վրայ է դնում երկու տեսակ մուրաբա)։

ԳԻՒՂՆ։ (աջ կողմի դռներից գալով, սփռոցի վրայ է դնում երեք տեսակ մուրաբա)։

ՀԱՅՐ։ Բաց արէք երեսներդ, օրէս դէնը մենք քոյր ու եղբայրներ ենք։

ԲԱՐԽ։ (շատ լուրջ ընդդիմանալով) Չէ, Հայրապետ, քոյրն էլ պիտի ամաչի եղբօրից։ Ինչպէս իրանց մայրերն են երեսները տղամարդկանցից միշտ ծածկել, թող իրանք էլ ծածկեն։ (մի գդալ մուրաբա ուտելով, Սմբատին)։ Նստիր ու այդ սուրբ Աւետարանի կողքին գրիր ինչ որ ասեմ։

ՍՄԲ։ (երկու գդալ մուրաբա է ուտում, Աւետարանը բաց է անում, դնում է ծնկների վրայ եւ պատրաստւում է գրել նրա կազմի ներսի կողմում)։

ԲԱՐԽ։ (հանդիսաւոր) Գրիր։ Հաղար ութ հարիւր յիսուն ու ինը ամի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ՍՄԲ։ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ՀԱՅՐ։ (երեսին խաչակնքում է, մուրաբա ուտում, ծուռ ծուռ նայելով օղու շիշին, ապա Մարիամին)։

ԲԱՐԽ։ Մայիս ամսի տասին, հրամանաւն Աստծոյ, եղեալ է երկրաշարժ մեծ։ Զիւլում։

ՍՄԲ։ Զիւլում։

ԲԱՐԽ։ Բազում տներ, քարւանսարաներ, երեք մէչիդ, չորս բաղնիս քանդեալ է։

ՍՄԲ։ Քանդեալ է։

ԲԱՐԽ։ Բազում մարդիկ կոտորեալ է վասն մեղաց մերոյ, անօրինաց։

ՍՄԲ։ Անօրինաց։

ԲԱՐԽ։ Զիւնքի անիրաւ լիւտերականութիւն եկեալ մտեալ է անտէր քաղաքս, բրիշակ արարեալ է։

ՍՄԲ։ Բրիշակ արարեալ է։

ԲԱՐԽ։ Իժ օձի զաւակ Զօրամբի։

ՍՄԲ։ Զօրամբի։ Հայրիկ, այդ ո՞վ է։

ԲԱՐԽ։ Այն անիծած լեմսա քարոզիչը, որ լիւտերականութիւնը բերաւ, մացրեց այստեղ։ Գրեցիր։

ՍՄԲ. Գրեցի։ Իժ օձի զաւակ Զօրամբի։

ԲԱՐԽ։ Տակը խաղ քաշիր։

ՍՄԲ։ Քաշեցի։

ԲԱՐԽ։ Հիմի գրիր։ Մեր Սուսանն ու Հայրապետանց Սէյրանը մնացեալ են Շափալեանց կտուրի տակ։ Հրամանաւն Աստծոյ ողջ, առողջ հանեալ են։ Մեր ամենեցուն մեծ ուրախութիւն։ Գրեցիր։

ՍՄԲ։ Գրեցի։

ԲԱՐԽ։ Տակը խաղ քաշիր։ Հիմի մի մատ ներքև գրիր։ Այս գիշեր ի մէջ սեղանի ուխտեալ ենք Սուսանին նշանել Սէյրանի հետ։ Խրախճան։

ՍՄԲ։ Խրախճան։

ԲԱՐԽ։ Եւ Հրամանաւն Աստծոյ, ինը տարի անցած պսակելու ենք։

ՊՄԲ։ Պսակելու ենք։

ԲԱՐԽ։ Տացէ Աստուած, որ արժանանան տարի սեղանին։

ՍՄԲ։ Սուրբ սեղանին։

ԲԱՐԽ։ Ամէն։

ՀԱՅՐ։ Ամէն։

ԳԻՒԼՆ։ Ամէն։

ՄԱՐ։ Ամէն, Տէր Աստուած։

ԲԱՐԽ։ Վերջացրիր։

ՍՄԲ։ Վերջացրի։

ԲԱՐԽ։ (Մարիամին եւ Գիւլնազին) Հիմի լաւ ականջ դրէք։ Քանի՞ տարեկան է Սէյրանդ, Մարիամ քաջի։

ՄԱՐ։ Առաջի վարդավառին տասներկուսը կը լրանայ։

ԲԱՐԽ։ (Գիւլնազին) Քանի՞ տարեկան է մեր Սուսանը։

ԳԻՒԼՆ։ Աւետարանի կողքին գրած է նրա ծնունդը։ Եղբայրս է գրել։

ՀԱՅՐ։ Բաց արէք երեսներդ, օրէս դէնը մենք քոյր ու եղբայրներ ենք։

ԲԱՐԽ։ (շատ լուրջ ընդդիմանալով) Չէ, Հայրապետ, քոյրն էլ պիտի ամաչի եղբօրից։ Ինչպէս իրանց մայրերն են երեսները տղամարդկանցից միշտ ծածկել, թող իրանք էլ ծածկեն։ (մի գդալ մուրաբա ուտելով, Սմբատին)։ Նստիր ու այդ սուրբ Աւետարանի կողքին գրիր ինչ որ ասեմ։

ՍՄԲ։ (երկու գդալ մուրաբա է ուտում, Աւետարանը բաց է անում, դնում է ծնկների վրայ եւ պատրաստւում է գրել նրա կազմի ներսի կողմում)։

ԲԱՐԽ։ (հանդիսաւոր) Գրիր։ Հաղար ութ հարիւր յիսուն ու ինը ամի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ՍՄԲ։ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ՀԱՅՐ։ (երեսին խաչակնքում է, մուրաբա ուտում, ծուռ ծուռ նայելով օղու շիշին, ապա Մարիամին)։

ԲԱՐԽ։ Մայիս ամսի տասին, հրամանաւն Աստծոյ, եղեալ է երկրաշարժ մեծ։ Զիւլում։

ՍՄԲ։ Զիւլում։

ԲԱՐԽ։ Բազում տներ, քարուանսարաներ, երեք մէչիդ, չորս բաղնիս քանդեալ է։

ՍՄԲ։ Քանդեալ է։

ԲԱՐԽ։ Բազում մարդիկ կոտորեալ է վասն մեղաց մերոյ, անօրինաց։

ՍՄԲ։ Անօրինաց։

ԲԱՐԽ։ Զիւնքի անիրաւ լիւտերականութիւն եկեալ մտեալ է անտէր քաղաքս, բրիշակ արարեալ է։

ՍՄԲ։ Բրիշակ արարեալ է։

ԲԱՐԽ։ Իժ օձի զաւակ Զօրամբի։

ՍՄԲ։ Զօրամբի։ Հայրիկ, այդ ո՞վ է։

ԲԱՐԽ։ Այն անիծեալ լեմսա քարոզիչը, որ լիւտերականութիւնը բերաւ, մտցրեց այստեղ։ Գրեցիր։

ՍՄԲ. Գրեցի։ Իժ օձի զաւակ Զօրամբի։

ԲԱՐԽ։ Տակը խաղ քաշիր։

ՍՄԲ։ Քաշեցի։

ԲԱՐԽ։ Հիմի գրիր։ Մեր Սուսանն ու Հայրապետանց Սէյրանը մնացեալ են Շափալեանց կտուրի տակ։ Հրամանաւն Աստծոյ ողջ, առողջ հանեալ են։ Մեր ամենեցուն մեծ ուրախութիւն։ Գրեցիր։

ՍՄԲ։ Գրեցի։

ԲԱՐԽ։ Տակը խաղ քաշիր։ Հիմի մի մատ ներքև գրիր։ Այս գիշեր ի մէջ սեղանի ուխտեալ ենք Սուսանին նշանել Սէյրանի հետ։ Խրախճան։

ՍՄԲ։ Խրախճան։

ԲԱՐԽ։ Եւ Հրամանաւն Աստծոյ, ինը տարի անցած պսակելու ենք։

ՊՄԲ։ Պսակելու ենք։

ԲԱՐԽ։ Տացէ Աստուած, որ արժանանան սուրբ սեղանին։

ՍՄԲ։ Սուրբ սեղանին։

ԲԱՐԽ։ Ամեն։

ՀԱՅՐ։ Ամեն։

ԳԻՒԼՆ։ Ամեն։

ՄԱՐ։ Ամեն, Տէր Աստուած։

ԲԱՐԽ։ Վերջացրիր։

ՍՄԲ։ Վերջացրի։

ԲԱՐԽ։ (Մարիամին եւ Գիւլնազին) Հիմի լաւ ուշանջ դրէք։ Քանի՞ տարեկան է Սէյրանը, Մարիամ քաջի։

ՄԱՐ։ Առաջի Վարդավառին տասներկուսը կը լրանայ։

ԲԱՐԽ։ (Գիւլնազին) Քանի՞ տարեկան է ձեր Սուսանը։

ԳԻՒԼՆ։ Աւետարանի կողքին գրած է նրա ծնունդը։ Եղբայրս է գրել։

ՍՄԲ։ (նայելով Աւետարանի կազմի ներսին) *Սեպտեմբերի հնգին ինը տարեկան կլինի։*

ԲԱՐԽ։ (հանդիսաւոր) *Այս գիշեր մենք նրանց նշանեցինք։ Մեր պապերի օրէնքով էգուցւանից էլ նրանք չպիտի տեսնեն իրարու։ Գիւլնազ, Սուսանն էլ չպիտի տնից դուրս գայ։ Մարիամ բաջի, դու էլ հասկացրու որդուդ, որ էլ Սուսանի երեսը չպիտի տեսնէ։ Ինը տարին կանցնի, մենք մեր ուխտը կկատարենք. լսեցէ՞ք* (չիբուխը լցնում է)։

ԴԻՒԼՆ։ Լսեցինք։

ՄԱՐ։ Ինչպէս հրամայեցիր, այնպէս էլ կանենք։

ՀԱՐ։ Դու խօսում ես Աստծու և մարդկանց օրէնքներով։

ԲԱՐԽ։ (դուրս բերելով արխալուղի գրպանից մագնիս, կայծակաքար եւ աբեթ իբր թէ չիբուխը վառելու)։ *Հայրապետ, ինչպէս ես ու դու մեր կնկայ երեսը մինչև հարսանիքի երրորդ օրը չենք տեսել, քո որդին էլ չպիտի տեսնէ իւր հարսնացուին։* (Աբեթը դնելով կայծակ քարի վրայ, մագնիսով զարկում է) *Տղա և աղջիկ այսպէս են, այ։ Եթէ նրանք միմեանց տեսնեն. կրակ կառաջանայ և մէջ տեղ իմ ու քո նամուսը կայրուի այս զաւի պէս։ Վայ այն օրին, երբ նրանք միմեանց իրանց հարսանիքը կտեսնեն միմեանց։ Ես իմ ձեռքով կխեղդեմ իմ աղջկան էլ, քո որդուն էլ։* (Սմբատին) *Տուք ինձ այդ Աւետարանը։* (չիբուխը դնում է մի կողմ, Աւետարանը վերցնում է, զոակը մի կողմ դնելով, երեք անգամ երեսին խաչակնքում է եւ Աւետարանը համբուրում ու ճակատին դնում) *Ամենքդ համբուրեցէք այս սուրբ Աւետարանը և ասացէք «ուխտ եմ անում»։* (Աւետարանը տալիս է Հայրապետին, չիբուխը վերցնում)։

ՀԱՅՐ։ (Աւետարանը համբուրելով տալիս է Գիւլնազին) *Ուխտ եմ անում։*

ԳԻՒԼՆ։ (Աւետարանը համբուրելով տալիս է Մարիամին) *Ուխտ եմ անում։*

ՄԱՐ։ (Աւետարանը համբուրելով տալիս է Սմբատին) *Ուխտ եմ անում։*

ՍՄԲ։ (երեք անգամ համբուրում է Աւետարանը)։

ԲԱՐԽ։ Հիմի կարող ենք ասել. Աստուած շնորհաւոր անէ։

ԱՄԵՆՔԸ։ Աստուած շնորհաւոր անէ։

ԲԱՐԽ։ (վեր կենալով) *Դէ, սեղանը հաւաքեցէք, գնացէք քնելու։*

ԱՄԵՆՔԸ։ (վեր են կենում)։

ՄԱՐ։ (կանգնում է Սէյրանի անկողնի գլխին, աղօթում, աչքերն ուղղելով դէպի երկինք) *Տէր, դու իմ մինիկ զաւակին գցեցիր փորձանքի մէջ, Դու նրան ազատեցիր։ Տէր, ամեն բան քո ձեռքին է։ Դու այսուհետև պահիր, պահպանիր նրան։*

ԳԻՒԼ։ (կանգնելով Սուսանի անկողնի գլխին, նայում է թախծալի հայեացքով թնած աղջկան)։ *Քնիր, սիրուն աղջիկս, քնիր, Թող հրեշտակները պահպանեն քեզ։* (մեկուսի) *Ա՛խ, սիրտս վատ բան է գուշակում։*

ԲԱՐԽ. (ձեռքով նշան է անում Գիւլնազին չքեայ վարագոյրը բանալու եւ չիբուխը ձեռին գնում է իր տան առջեւի *Սաքուի* վրայ նստում)։

ՀԱՅՐ։ (նստում է իւր տան առջեւի *Սաքուի* վրայ)։

ԳԻՒԼՆ։ (չքեայ վարագոյրը բաց է անում եւ ընտանիքները բաժանում միմեանցից) *Բարի գիշեր։*

ՄԱՐ։ Բարի գիշեր։

Վ. Ա. Ր Ա. Դ Ո Ց Ի

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՌԱՋԻՆ

Ինկ տարի անցած

ԲԱՐԽՈՒԴԱՐԻ ՏՈՒՆԸ ՆԵՐՍԻՑ

Բաւական ընդարձակ մի սենեակ ասիական ա-նաղարտ կահ-կարասիով։ Խորքում, դէպի ձախ մի-թեանի աննրկ դուռը, որ տանում է դէպի գաւիթ. դէպի աջ երկու լուսամուտ առանց ապակիների անն-ներկ փեղկերով, որոնք բաց են։ Միթեանի մի դուռ ևս ձախ պատի մէջ։ Այս դուռը տանում է ընակարա-նի երկրորդ սենեակը և խոհանոց։ Յատակը ծածկւած է դեղնագոյն խսիրներով, որոնց վրայ երկու հասա-րակ կապերտներ։ Պատերը պատատ չունին, ներկւած են պարզ կապտագոյն կաւով։ Աջ պատի ամբողջ եր-կայնութեամբ առաստաղից մօտ մի արշին ցածր նեղ խորշ (ռաֆ), ուր շարէշար դրած են զանազան հին չի-նական անօթներ—իրրև զարդ։ Երկու մօտաւորապէս երեք արշին բարձրութեամբ և լայնութեամբ քառա-կուսի խորը խորշեր (ջամխուղան) նոյն պատի մէջ։ Ձախ պատի մէջ ևս երկու նոյնանման խորշեր, մի-այն աւելի փոքր։ Առաջին խորշերի մէջ դարսւած են անկողիններ (վերմակներ, ներքնարկներ, բարձեր)։ Փոքր խորշերի (թախչա) մէջ գտնւում են տնային անօթները և պաշարեղէնը։ Աթոռներ և սեղաններ չը-կան։ Պատերի տակ ձգւած են ներքնարկներ, (մին-դարներ)։ Խորքում լուսամուտների առջև քով քովի դրած են երկու մեծ Իրբիթի սնդուկներ, ծածկւած փոքրիկ գորգերով։ Աջ պատի առջև թախտ, նոյնպէս գորգով ծածկւած։

ՏԵՍԻԼ 1.

Սուսան եւ Սուսամբար

Նստած են դէմ ու դէմ սնդուկների վրայ։ *Սուսանը* թոռ է գործում, *Սուսամբարը* գուլպա։ Բաւական եր-կարատեւ լռութիւն։ Լուսամուտներից երեւում են խտա-տերեւ թթենու ճիւղերը, որոնց վրայ բազմաթիւ ճնճ-ղուկներ ծլվլում են։ Դռնից մերթ ընդ մերթ լսւում են ղրջավանճառների երգեցիկ ձայները։

ՍՈՒՍԱՆ։ (դարձել է բարձրահասակ, վայելչա-կազմ, գեղեցիկ, տասնութ տարեկան աղջիկ։ Հագած է լայն փոխան, դեղնագոյն մետաքսեայ շապիկ, որի վրան բեհեզեայ չեռպկան, գլխին բեհեզեայ ճուրխի, ճակատի վրայ եզրերը ոսկեթել ժապաւենով։ Ճուրխիի վրան սպի-տակ բոռ. խիտ ու երկար մազերը, որ այժմ հինցած են, մի խոշոր հիւսւածքով ընկել են թիկունքների վրայ եւ հասնում են մինչեւ մէջքը։ Լռում, գործում է, մերթ ընդ մերթ հառաչելով եւ թախծալի հայեացքներ ձգելով դէ-պի թթենին)։

ՍՈՒՍԱՄԲ։ (*Սուսանին* հասակակից աղջիկ է, ոչ գեղեցիկ, բայց համակրելի, գարբ դէմքով, վառվռուն աչքերով. հագած է սպիտակ կտաւեայ շապիկ, վրան կանաչագոյն արխալուղ, կուրծքը բաց, թեւերը տերեւ-տաքսեայ ճուրխի առանց որեւէ զարդի։ Դաղարում է գործել։ Հառաչում է)։ *Աղջի, Սուսան։*

ՍՈՒՍ։ (մտազբաղ աշխատում է մեքենաբար)։

ՍՈՒՍ։ (մի քիչ անցած) *Սուսան։*

ՍՈՒՍ։ (լռում է)։

ՍՈՒՍ։ (անհամբեր) *Աղջի, Սուսան։*

ՍՈՒՍԱՆ։ (սրափռելով իր մտքերից) Հ՞ը։

ՍՈՒՍ։ Զոռ։

ՍՈՒՍԱՆ։ Զոռ էլ, զվկում էլ։

ՍՈՒՍԱՆ։ (մի կողմ դնելով ձեռագործը) Մին դէն դիր այդ սատանի տոտիկը. մի քիչ հանգստանանք։ Մատներս փետացան շատ գործելուց։

ՍՈՒՍԱՆ։ (հառաչում է, դադարելով գործել) Ո՜ւֆ, (ձեռներն անգործ դնում է ծնկների վրայ)։

ՍՈՒՍ։ Էլ ինչ ուֆ. հոգիներս դուրս եկաւ։ Մի քիչ խօսենք, սիրտներս բացուին։

ՍՈՒՍԱՆ։ Էհ, խօսքս էլ է պրծել, զրոյցս էլ։

ՍՈՒՍ։ Դէ, լաւ, պառաւ կնկայ պէս մի քացախիր։ Տես, ծառերն ինչպէս են ծլլում։ Արի կուտ ածենք, տեսնենք կգան ուտելու։ Ունէ՞ք (վեր է կենում)։

ՍՈՒՍԱՆ։ Թախչումը հացի փշրանքներ կլինին։

ՍՈՒՍԱՄԲ։ (մօտենում է փոքր խորշերից մէկին, վարագոյրը բանալով, վերցնում է հացի փշրանք եւ լուսամտից դուրս ածում քիչ-քիչ) Ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ։ Եկան, հաւաքեցին Սիօնի աղքատների պէս։ Օհօ, ինչ շատ են։ Էլի եկան, դրանք ինձ էլ կուտեն։ Կերէք, կերէք։ Մի կուէք։ Ամօթ է։ Տես այն պոչը կտրածը ինչ չարն է։

ՍՈՒՍ։ (նայելով լուսամտից) Երանի ձեզ, որ աղատ, համարձակ, որտեղ ուզում էք, այնտեղ էք թռչում։ Այդ ծառերն էլ, այդ սարերն էլ, դաշտերն էլ, արար աշխարհը ձեզ համար է։

ՍՈՒՍԱՄԲ։ Էյ, չար Յուլիանոս, թող ընկերդ էլ ուտի։ Ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ...Դէ, հերիք է։ (դադարում է փշրանքներ ածել) Չիստ, չիստ, գնացէք, կորէք։

ՍՈՒՍ։ (մտազբաղ) Թռան, գնացին ուրախ-ուրախ։ Օ, հազար երանի ձեզ։ Գցել են մեզ տուն, դռներն երեսներիս ծածկել, մարդու կերպարանք չենք տեսնում։

ՍՈՒՍԱՄԲ։ Դու ծտի՞ն ես նախանձում։

ՍՈՒՍ։ (հառաչելով) Ահ, ի՞նչպէս չնախանձեմ։

ՍՈՒՍԱՄԲ։ (բարձրաձայն ծիծաղով) Հա, հա, հա, ծտին է նախանձում։ հա, հա, հա։

ՍՈՒՍ։ Ինչո՞ւ ես ծիծաղում։

ՍՈՒՍԱՄԲ։ Միտը թռչկոտում է ծառի վրայ, դու թառ ես լինում ծառի տակ, ծառի տակ։ (ծափ է տալիս ու պարում)։

ՍՈՒՍԱՆ։ Ի՞նչ ես ուզում ասել։

ՍՈՒՍԱՆՄԲ։ (զարհուրակելով)։ Կարմիր թթի ծառի տակ, ծառի տակ։ Համ երգում է, համ պաչում, համ պաչում է համ երգում, ծառի տակ։

ՍՈՒՍԱՆ։ Մասխարա։

ՍՈՒՍԱՄԲ։ (դատարում է պարել)։ Թէ, լաւ, ես ամեն բան գիտեմ, ամեն բան։

ՍՈՒՍԱՆ։ (զառագուեելով)։ Ի՞նչ գիտես։

ՍՈՒՍԱՄԲ։ Այն գիտեմ, որ դու նրա հետ գիշերները թագուն—թագուն տեսնուում ես ծառի տակ։

ՍՈՒՍԱՆ։ (վախեցած, ձեռը դնում է Սուսանբարի բերանին) Սուս, լեզուդ փորդ գցիր։

ՍՈՒՍԱՄԲ։ Ես մեղայ Աստծու։ Լաւ, մի վախենաք, ոչ ոքի չեմ ասիլ։ (գրկում է Սուսանին եւ միասին սկսում են քայլել յետ ու առաջ) Երանի քեզ, շատ լաւն է։ Երեկ մեր տան առաջով անցնում էր։ Դռների ապրանքով մտիկ արի։ Ախ, ինչպէս մեծացել է, սիրունացել։ բոյը չինար, մէջքը նազիկ, աչերը նախշուն—նախշուն, բեխերը բարակ—բարակ։

ՍՈՒՍԱՆ։ (երջանիկ)։ Հաւանում ես։

ՍՈՒՍԱՄԲ։ Ով չի հաւանիլ։ Նմանը չկայ մեր քաղաքում։ Փողոցներով անցնելիս կանայք դռների ետեւից նրան են մտիկ անում. բայց ափսոս։

ՍՈՒՍԱՆ։ Ինչո՞ւ ափսոս։

ՍՈՒՍԱՄԲ։ Ասում են վատ ջահէլների հետ է խառնուել ու միքիչ փչացել։

ՍՈՒՍԱՆ։ (սրտմտությամբ)։ Սուտ են ասում, սուտ են ասում։ (բողնում է Սուսամբարի ձեռքը)։

ՍՈՒՍԱՄԲ։ Դէ լաւ, մի փրփրիր, հոգս բամբասողների գլխին։ Դու ինձ այն ասա, հարսանիքդ ե՞րբ է։

ՍՈՒՍԱՆ։ (տխրում է)։ Չեմ իմանում։

ՍՈՒՍԱՄԲ։ Իսկ ես գիտեմ իմ հարսանիքը երբ է։ Վաղը-վաղուց յետոյ,

ՍՈՒՍ։ Ուրեմն, աչքդ լոյս։

ՍՈՒՍԱՄ։ Էհ, շատ հարկաւոր է, ուզում է թող չլինի։

ՍՈՒՍ. Նշանածիդ չե՞ս սիրում։

ՍՈՒՍԱՄԲ։ Սէրս ո՞ր է, ինչ ես խօսում։ Երեսը տեսնել եմ, որ սիրեմ կամ չսիրեմ։ Ասում են մի չօփուռ աղայ է, քիթն էլ ծուռ։

ՍՈՒՍԱՆ։ (ձեռը ծնկան զարկելով) Վայ, քոռանամ. քիթը ծուռ, խեղճ Սուսամբար, ինչու՞ են քեզ նրան տալիս։

ՍՈՒՍԱՄԲ։ Էհ, ում ուզում են թող տան, ինձ համար միևնոյն է, ճակատիս ինչ որ գրուած է, այն է կատարելու։ Դէհ, օրը մթնեց, գնամ-կորչեմ, թէ չէ հայրս կգայ, ինձ տանը չի տեսնիլ, մօրս հետ կկռուի (վերցնում է իւր ձեռագործը սնդուկի վրայից, շալը գցում է գլխին)։ Էգուց կգամ մեր տուն։

ՍՈՒՍ։ Չէ, Սուսամբար. ծնողներս չեն թողնում աղգական-բարեկամներիս տուն գնալ։

ՍՈՒՍԱՄԲ։ Էհ, գեղեցիկ լինելն էլ մի բան չէ։ Իմ ծնողները չեն վախենում, որ թուրքերն ինձ կփախցնեն։ Մնաս բարով։ (հրամբարում է Սուսանի հետ և գնում խորքի դռնով)։

ՏԵՍԻԼ 2.

Սուսան մենակ, յետոյ Գիւլնազ

ՍՈՒՍԱՆ։ (Սուսամբարին ուղեկցելով մինչև խորքի դուռը, կանգնում է այնտեղ, նայում թրենու ծառերին, ճանաչում, ձեռը յենած դրան կողքին։ Ապա, սրափելով, գալիս է սենեակի կենտրոնը)։

ԳԻՒԼՆ։ (գալիս է ձախ կողմի դռնով կռնատակին մի խայտաբղետ մետաքսեայ ջարդով՝ ծալած։ Մագերը դաղարել է ներկել հինայով, ուստի բաւական ճերմակել են։ Ինչը տարայ մէջ նկատելի ծերացել է)։ Գնա՞ց Հռուսիկի աղջիկը։

ՍՈՒՍ։ Գնաց,

ԳԻՒԼՆ։ Ինչու՞ թողիր։ Ես ուզում էի հօրաքրոջդ մօտ գնալ, նա հիւանդ է։

ՍՈՒՍ։ (սրտմտությամբ) Մամա, հերիք է ինչքան ինձ տանջեցիք։ (քայլում է)։

ԳԻՒ. (հառաչելով) Ես ինչ անեմ, որդի, հօրդ ասա։ Նա է հրամայել, որ քեզ տանը մենակ չթողնեմ։

ՍՈՒՍ։ (խորին վշտով) Հայրս, հայրս, նրա խստութիւնը ինձ գերեզման կիջեցնի։ Մամա, մամա, ես չեմ կարող դիմանալ այս կեանքին։ (փաթաթուում է մօր պարանոցին ու լալիս)։

ԳԻՒԼՆ։ Լաւ, լաց մի լինիր։ Սիրտս մղկտում է արտասուքդ տեսնելիս։

ՍՈՒՍ։ Չեմ կարող, չեմ կարող։

ԳԻՒԼՆ։ Եթէ իրաւունքն իմ ձեռքին լինէր, քեզ ռուսի շորեր կհագցնէի, գլխիդ շլեամ կդնէի ու կասէի. «գնա, բալաս, գնա ուր ուզում ես, ապրիր ինչպէս կամքդ է»։ Բայց ես մայր եմ, հայր չեմ։ Դու գիտես, որ ես ինքս էլ գերի եմ քո հօր ձեռքում։ Լաւ,

սրբիր աչքերդ։ Աստուած ողորմած է. կարելի է շուտով հարսնիքդ լինի։

ՍՈՒՍ։ (աչքերը սրբելով) Իմ հարսանիքը վաղուց պիտի լինէր։ Չգիտեմ ինչու էք ձգձգում։

ԳԻՒԼՆ։ Էլի հայրդ է մեղաւոր։ Աստուած գիտէ ինչ ունէ իւր մտքում։ Երբ հարսանիքիդ մասին խօսք եմ դցում, աչքունքը թթուեցնում է։

ՍՈՒՍ։ (հետաքրքրուած) Եւ ոչինչ չի՞ ասում։

ԳԻՒԼՆ։ Ոչինչ։

ՍՈՒՍԱՆ։ (գալիս է իրան լռնագրօսիկ ժպիտով)։ Լաւ, մամա, գնա, ուր ուզում ես, թող ինձ մենակ։

ԳԻՒԼՆ։ Լաւ, շատը համբերել ես, քիչն էլ համբերիր։ Ամառը չլինի, թող աշունքին լինի հարսանիքդ։

ՍՈՒՍԱՆ։ Դնա, մամա, գնա հօրաքրոջս մօտ նա խեղճ է, մենակ է։

ԳԻՒԼՆ։ (ջարդուվը բաց անելով եւ նրա մէջ փաթաթելով) Է՛հ, գնում եմ, ճացիր մենակ, ինչ անեմ, թող այս անգամ հայրդ կատաղի ինձ վրայ։ Տունը սրբիր, յետոյ սամավարը կդնես։ (գնում է դէպի խորքը)։

ՍՈՒՍԱՆ, Դնա ես անպործ չեմ ճաալ (Գիւլնազին ուղեկցելով մինչեւ խորքի դուռը, ջմուղկները դրսում դնում է նրա առջեւ եւ յետոյ գալիս է յետ, դրսից բերելով մի ջորք ռուել)։

ՏԵՍԻԼ 3.

Սուսան մենակ, յետոյ Սէյրան

ՍՈՒՍԱՆ։ (սկսում է լատակն աւելել, ճանդարտ երգելով մի տեղական եղանակ)։

ՍԷՅՐ։ (բաւական ժամանակ անցած՝ լուսամտից ցոյց է տալիս իւր գլուխը։ Քսան տարեկան գեղեցկադեմ, բարձրահասակ երիտասարդ է դարձել։ Երեսը մաքուր է, բարակ բեխերով, գլխին կլորաձեւ եւ ոչ այնքան բարձր գդակ Բուխարայի մօրթուց կարած։ Ոտներին եւրոպական կօշիկներ)։ Սուսան, Սուսան։

ՍՈՒՍ։ (լսելով իւր անունը, ցնցւում է։ Տեսնելով Սէյրանին, աւելը ձեռքից բաց է թողնում)։ Սէյրան։

ՍԷՅՐ։ Նա ինքնէ։ (գլուխն աւելի է բարձրացնում)։

ՍՈՒՍ։ Զուր ես եկել, հեռացիր, ախ, շուտ հեռացիր։

ՍԷՅՐ։ Բարձր մի խօսիր, թող ներս մտնեմ։

ՍՈՒՍ։ Ոչ, ոչ, գնա, հեռացիր, չի կարելի։

ՍԷՅՐ։ Շատ լաւ կարելի է։ (բարձրանալով լուսամուտ, ներս է ցատկում)։ Օհ, հազիւ քեզ տեսայ։ (նեւալով) Մի շաբաթ է օր ու գիշեր հսկում եմ—չես երեւում (մօտենում է Սուսանին)։

ՍՈՒՍ։ (նեռանում է դէպի ձախ, երկիւղից ցնցուղուած)։ Դնա, ասում եմ, գնա, հայրս կարող է գալ։

ՍԷՅՐ։ Հայրդ չէ, նրայ պապն էլ գերեզմանից դուրս գայ, չեմ հեռանալ, մինչև որ չասեմ, թէ ինչու համար եմ եկել։

ՍՈՒՍ։ (բոլորովին շփոթուած)։ Ախ, տէր Աստուած, նա վախ չունէ, ամօթ չունէ։ Սէյրան, աղաչում եմ, ինձ թողես, գնա։

ՍԷՅՐ։ Ասում եմ, ոտս դուրս չեմ դնիլ, մինչև որ հետդ չխօսեմ։

ՍՈՒՍ։ Դէ ճացիր, ես վախայ։ (վազում է դէպի ձախ կողմի դուռը)։

ՍԷՅՐ։ (կտրելով Սուսանի ճանապարհը)։ Չեմ թողնիլ տեղիցդ շարժուես։ Լսիր, Սուսան, լսիր. մեր ծնողները մեզ նշանել են երկրաշարժի օրը, որ ինքը տարուց յետոյ պսակեն։ Ինքը տարին լրացել է, մի ամիս էլ անցել, բայց մեր հարսանիքի մասին խօսք չկայ մէջ տեղ։ Ի՞նչ է պատճառը։

ՍՈՒՍ։ (միշտ երկիւղով աջ ու ձախ նայելով) Ես քեզ ասել եմ, որ ինքս էլ չգիտեմ։ Դնա, հեռացիր։

ՍԷՅՐ։ Ի՞նչ է ասում հայրդ։

ՍՈՒՍ։ Նա ոչինչ չի ասում, ոչինչ։

ՍԷՅՐ։ Սուսան մի խօսիր, Սուսան։ Էլ ես համբերութիւն չունիմ այս անորոշ դրութեան մէջ մնալու։ Կամ այո, կամ ոչ։ Կամ ես պիտի պսակուեմ քեզ հետ կամ այս սուրը սիրտս պիտի խրեմ։ (յետ անելով ջուխտայի փեղը, ցոյց է տալի մէջքին կապած դաշոյնը)։

ՍՈՒՍ։ Ա՛խ, թող, թող սուրը։ Հայրս հէնց այդպիսի բաների համար քեզ չի սիրում։

ՍԷՅՐ։ Չի՞ սիրում։ Ուրեմն, ճշմարիտ են ասում, որ նա ինձ համարում է փչացած, կորած մարդ։ Ասա, լսում ես։

ՍՈՒՍ։ Ես հօրս հետ չէի կարող խօսել քո մասին։ Նա մօրս էլ ոչինչ չի ասում, բայց մի անգամ այն դրան ետևից լսել եմ նրանց խօսակցութիւնը քո հօր հետ։

ՍԷՅՐ։ (հետաքրքրուած) Ի՞նչ էին խօսում։

ՍՈՒՍ։ Հայրս ասում էր, որ դու ուսումդ կիսատ ես թողել ու դուրս եկել ուսումնարանից։

ՍԷՅՐ։ Կիսատ թողի, որովհետև վարժապետն ինձ ծեծում էր։ Յետոյ։

ՍՈՒՍ։ Ասում էր, որ ուսումնարանից յետոյ մտար հօրդ դուքանը, այնտեղ էլ չմնացիր։

ՍԷՅՐ։ Որովհետև հայրս էլ ծեծում էր ինձ։ Է՞լ ինչ էր ասում։

ՍՈՒՍ։ Ասում էր, որ քեզ աշակերտ ուզեցին իրան, արհեստ չսովորեցիր, փախար։

ՍԷՅՐ։ Եռաջինը, ես դերձակ չէի ուզում լինել։ Երկրորդ, Սուսան, հօրդ մասին մի խօսիր։ Եօթ ամիս աշակերտ եղայ նրա մօտ, այնքան ծեծեց ինձ, որ վրաս մնաց մի կաշի և մի ոսկոր։ Նա մարդ չէ, Սուսան, նա գիտուած է խանների ժամանակից մնացած։ Նա ինձ ինչով ասես ծեծում էր. չիբուխով, գազով, մկրատով, մինչև անգամ արդուկով։ Նա ինձ բարձրացնում էր իւր երկար ոտների վրայ և գետնին զարկում ինչպէս մի կատու, ինչպէս մի շան ձագ։ Ես ինչպէս մնայի այդ տեսակ մարդու մօտ։

ՍՈՒՍ։ (մտազբաղ) Ճշմարիտ է, հայրս շատ խիստ մարդ է։

ՍԷՅՐ։ Ծեծը, Սուսան, վատ բան է մարդու համար, շատ վատ բան։ Ծեծը ոչ միայն մարդու մարմինն է ցաւեցնում, հոգին էլ է տանջում։ Թող ինձ խրատեն, նախատեն, հայհոյեն, անիծեն, թող տնից դուրս անեն, առանց հաց ու ջրի թողնեն, բայց չծեծեն։ Ես ծեծը անպատուութիւն եմ համարում։ Նամուս ունեցող մարդը չի կարող թոյլ տալ, որ մի ուրիշ մարդ իրան վրայ ձեռք բարձրացնի։

ՍՈՒՍ։ (նստել է աղջիկը, մելամաղձոտ, մտազբաղ)։ Ճշմարիտ ես ասում, Սէյրան, ճշմարիտ ես ասում. ծեծելը ես էլ եմ ամօթ համարում։ Բայց ինչ արած, ինչ արած, քանի որ մենք պէտք է հնազանդենք մեր ծնողներին, թէկուզ նրանք մեզ կախ էլ տան։

ՍԷՅՐ։ Ոչ, Սուսան չպիտի հնազանդենք։ Խոնարհենք, սիրենք, յարգենք, բայց չթողնենք, որ մեզ հետ վարուեն ինչպէս անասունների հետ։ Ես այսպէս եմ հասկանում և այսպէս էլ պիտի անեմ այսուհետև. էլ ոչ ոքի, ոչ ոքի չեմ թոյլ տալ գլխիս մի մազին դիպչելու։ Չէ՞ որ հիմայ ես էլ եմ ազամարդ, ես էլ նամուս ունիմ. վայ նրան, որ կփորձի իմ պատուին դիպչել. կտոր կտոր կանեմ այդպիսուն։

ՍՈՒՍ։ (նայելով Սէյրանին, յափշտակուել է նրանով եւ մոռացել իւր երկիւղը։) Դիտեմ, դու քաջ ես, քո կոնների մէջ առիւծի ոյժ կայ և սրտիդ մէջ խանի հպարտութիւն։ Դու երեխայ ժամանակդ էլ հպարտ

էիր և ոչ ոք չէր համարձակուում քեզ դիպչել։ Ախ, երանի անցած գնացած օրերին, երանի մեր ազատ մանկութեան, հաղար երանի։

ՍԷՅՐ։ (ոգեւորուելով) Ուրեմն մթոդ է մեր մանկութիւնը, յիշում ես դու այդ օրերը (բռնում է նրա ձեռը)։

ՍՈՒՍ։ Մթթէ կարող եմ մոռանալ։ Օ, Սէյրան, ես ամեն բան յիշում եմ, ամեն բան։

ՍԷՅՐ։ (զարթ) Մինչև անգամ կարմիր կովիկն։

ՍՈՒՍԱՆ։ Ախ, թող հանաքներդ։ Ես իմ երեխայութիւնը յիշելիս արտասուում եմ։ Մթոդ է ինչպէս էիր բարձրանում մեր և ձեր թթի ծառերի վրայ և ինձ համար թուք թափ տալիս։

ՍԷՅՐ։ Ինչպէս կարող եմ մոռանալ։ Երեք անգամ քո պատճառով ծառից ընկել եմ, քիթս ու պռունգը ջարդել։

ՍՈՒՍ։ (աւելի ու աւելի յափշտակուելով անցեալով։ Ախ, ես ժամերով նստում եմ լուսամտի մօտ, մտիկ եմ անում մեր ծառին, ձեր ծառին, յիշում եմ այդ երջանիկ օրը։ Սիրտս մղկտում է, արտասուքը խեղդում է ինձ։ Պատահում է, որ ուզում եմ գնալ գցել ինձ մեր ջրհորի մէջ և խեղդուել (արտասուում է)։

ՍԷՅՐ։ Լաց մի լինիր, Սուսան, մի տխրեցնիր ինձ. կարմ ենք տեսնելու միմեանց. մի լաց լինիր։ (մի ձեռքով գրկում է Սուսանին, միւսով սկսում է շոյել նրա մազերը)։ Ինչ բարձրացել ես, ինչ սիրունացել, մազերդ երկարել են, թանձրացել։ Հինա մի դնիր, Սուսան, հինան թրքուհուն է սազում։ Առանց հինայի մազերիդ գոյնը աւելի գեղեցիկ է։

ՍՈՒՍԱՆ։ (աչքերը սրբելով) Մայրս չի թողնում, ասում է հինան գլխացաւը ոչնչացնում է։

ՍԷՅՍ։ Դու գլխացաւ ունիս։

ՍՈՒՍԱՆ։ (հառաչելով) Ահ, գլխացաւ էլ ունիմ,

սրտացաւ էլ (թոլորովին մոռանալով իրան, բռնում է Սէյրանի ձեռը եւ տանում դէպի իւր կուրծքը) Դիր ձեռդ կրծքիս, տես ինչպէս է թռթռում սիրտս. կասես բռնած ծիտ լինի։ Ահ, ես ոյժ չունիմ (Գլուխը քերում է Սէյրանի ուսին)։

ՍԷՅԱՆ։ (յափշտակուելով) Ահ, հիմա տեսնում եմ, որ դու ինձ սիրում ես ինչպէս ես քեզ։ Սուսան։ Սուսան։ (Սեղմում է Սուսանի գլուխը իւր կրծքին)։

ՍՈՒՍ։ Երանի այսպէս մեռնէի, որ դու ինձ թաղէիր։

ՍԷՅՐ։ Ոչ, մի ասա, դու չես մեռնիլ, դու իմը պիտի լինես։ (Ցանկարծ ամուր գրկում է եւ պինդ համբուրում նրան)։

ՍՈՒՍ։ (օձից խայթածի պէս սթափւում է) Վայ, այդ ինչ արիր։ (ազատւում է Սէյրանի կրծքից)։ Գնա, շուտ հեռացիր։ Ես ինքս ինձ մոռացայ։ Հայրս, մայրս, խայտառակուեցի, դու ինձ պաչեցիր. գնա, գնա (ճեռանում է սարսափած)։

ՍԷՅՐ։ Մի վախենար, Սուսան, քաջ եղիր։ Դու իմ հարսնացուն ես, ես քո փեսացուն. դու իմն ես, ես քոնը։ Ոչ ոք իրաւունք չունի մեր մէջ մտնելու։ Թող մի անգամ էլ (արագ յարձակւում է Սուսանի վրայ, գրկում, ամուր համբուրում) Էգուց երեկոյ քեզ կսպասեմ ձեր ծառի տակ,

ՈՒՍ։ (հազիւ ազատուելով Սէյրանից, երեսն ամօթից ծածկում է երկու ձեռներով) Ես կորայ։

ՍԷՅՐ։ (վազում է դէպի լուսամուտ, Բարխուդարին տեսնելով)։

ՏԵՍԻԼ Դ.

Նույնի եւ Բարխուդար

ԲԱՐԽ։ (Ներս է մտնում խրճթի դռնից։ Ինքը տարեայ մէջ շատ էլ չի փոխուել, միայն գլխի կարճ

խուզած մասերն աւելի են սպիտակել։ Հագնուած է այնպէս, ինչպէս ինքը տարի առաջ։ Ուզում է դռների մօտ ճմռուշկները հանել, տեսնում է Մեյրանին Սուսանին համբուրելիս, վազում է նեռս ճմռուշկներով)։ *Լիրբ, լիրբ։* (վազում է Մեյրանի ետեւին, չի կարողանում բռնել)։

ՄԷՐ։ (Յատկում է լուսամտից դուրս)։

ՏԵՍԻԼ 5.

Սուսան եւ Բարխուդար

ՍՈՒՍ։ (դողալով, սարսափած, վերցրել է աւելը եւ ուզում է յատակը սրբել)։

ԲԱՐԽ։ Ի՞նչ էր անում նա այստեղ։

ՍՈՒՍ։ (աւելը բաց է թողնում ձեռից)։

ԲԱՐԽ։ (ձայնը բարձրացնելով) *Ի՞նչ էր անում նա այստեղ։*

ՍՈՒՍ։ (ուզում է պատասխանել, լեզուն կաշկանդուում է)։

ԲԱՐԽ։ Ես քեզ եմ հարցնում, ինչ գործ ունէր այդ լակոտն այստեղ։

ՍՈՒՍ։ (դողդողուն ձայնով) *Եկել էր քեզ տեսնելու։*

ԲԱՐԽ։ (դառն հեգնութեամբ) *Հա՜, շատ շնորհակալ եմ։ Անառակ։*

ՍՈՒՍ։ (ձեռներն իրարու կցելով, աղերսական) *Մեղայ Աստծու, հայր, մեղայ Աստծու։*

ԲԱՐԽ։ (բռնում է Սուսանի բեւից եւ քաշելով նրան, տանում է դեպի ձախ կողմի դուռը)։ *Եկ այստեղ, եկ, ես քեզ ցոյց կտամ թէ դու ում աղջիկն ես։*

ՍՈՒՍ։ Խնայիր, ներիր (Հետեւում է նօրը եւ գնում միւս սենեակ, ուր ճչում է)։

ՏԵՍԻԼ 6.

Գիւլնազ եւ Սմբատ

ԳԻՒԼՆ։ (գալիս է խորքի դռնով։ Ճմռուշկները հանում է դրան մօտ, ջարջոյը վերցնում է եւ ծալում)։ Ախաբ, դու ինչ գործ ունես թուրքերի հետ։

ՍՄԲ։ (Գալիս է մօր հետ խորքի դռնով։ Քսանուամեկ տարեկան երիտասարդ է։ Հագած է սեւ սատինից արխալուղ, դրան կարմիր թելերով ջուխտ վազմաներով։ Գլխին կլոր գդակ, ոտներին եւրոպական կօշիկներ) Նրանք թափեցին մեզ վրայ ծեծելու։ Եւ ու Սէյրանը փայտերով յարձակեցինք նրանց վրայ և մի լաւ խրատեցինք։

ԳԻՒԼՆ։ (գալիս է բեմի կենտրոնը, լսում է Սուսանի ձայնը) Այդ ինչ է պատահել երեխայիս։ (Զարշաւը մի կողմ շպրտելով, վազում է դեպի ձախ կողմի դուռը)։ Ամա՜ն։

ՍՄԲ։ Հայրիկը ծեծում է նրան (տրտմութեամբ) *Ա՜հ։ (վրդովուած անց ու դարձ է անում)։*

ՏԵՍԻԼ 7.

Սմբատ եւ Բարխուդար

ԲԱՐԽ։ Գալիս է ձախ կողմի դռնով առանց գդակի։ Զաւիազանց գրուած է) Անառակի ծնունդ, անառակ։ (Սմբատին տեսնելով) Ադա, գնա այս բոպէին Հայրապետին կանչիր այստեղ։

ՍՄԲ։ Ի՞նչ է արել, որ էլի ծեծեցիր։

ԲԱՐԽ։ Ծեծել, ծեծելն ինչ է։ Ես շափոռները պիտի շիկացնեմ կրակի վրայ և մէկ մէկ դաղեմ նրա մատները։

ՍՄԲ։ Այդքան էլ խստութիւն։

ԲԱՐԽ։ Ձայնդ կտրիր, լիրբ։ եթէ դու նամուսով աղբայր ես, պէտք է խանչալդ բազարի մէջ խրես այդ լակոտի փորը, փորոտիքը թափես մարդկանց առաջ։ Նա համարձակւի իմ տունը մտնել, իմ նամուսը ոտնատակ անել։ Ես ցոյց կտամ նրա հօրը։ Գնա, կանչիր այդ մարդուն շուտ։

ՍՄԲ։ (ջտապով զնում է խորքի դռնով)։ Միւս սենեակից (լսւում է Սուսանի հեծկլտանքը)։

ԲԱՐԽ։ (մտնում է ձախ կորսի դրան եւ դեպի միւս սենեակը) Քիչ զնգզնգա, շուն, թէ չէ՝ էլի կգամ։

ՍՈՒՍ. (դադարում է ճչալ)։

ԲԱՐԽ։ (Վերցնում է պատի փոքր խորշերի մեկից երկար ու բարակ չիբուխը, դուրս է բերում արխալուղի գրպանից դառը թամբաքուի քսակը, մի տերեւ թամբաքու դնում ձեռների մէջ, տրորում եւ լեցնում չիբոխը եւ մագնիսը կայծակաքարին զարկելով, վառում է աբէթը ու չիբուխը ծխում)։

ՏԵՍԻԼ Ը.

Բարխուդար եւ Դիւլնազ

ԳԻՒԼՆ։ (Գալիս է ձախ կողմի դռնով, գունատ, արտասուելով) Անսիրտ, անհոգի, որտեղ էր քո Աստուածը, ինչ օրի ես զցել երեխայիս։

ԲԱՐԽ։ Քիչ խօսիր։ Օրը մթնել է, մոմ վառիր։

ԳԻՒԼՆ։ Մթնէր երկինք ու երկիր, այս օրը չը տեսնէի։ Աստուած, Աստուած, երանի այն կնոջը, որ զաւակ չունի։ (վերցնում է պատի փոքր խորշից մի մոմ, վառում է լուցկիով եւ դնում է սեղանակներից մեկի վրայ)։

ԲԱՐ։ Շուն ցնգնէիր ինձ համար աւելի լաւ կըլինէր, քան այդ տեսակ աղջիկ։ (անց ու դարձ է անում յուզած)։

ԳԻՒԼՆ։ Ինչո՞ւ, ինչ մի մեղք է գործել։ (աւելը վերցնում է յատակի վրայից, արագ սրբում է սենեակը եւ խորքի դռնով դուրս զցում)։

ԲԱՐԽ։ Ամօթ չունէ, հարցնում էլ է։ Ես քեզ քանի՞ անգամ եմ ասել, մի թողնիր աղջկանդ տանը մենակ։ Ինչ ես չարշովը գլխիդ՝ փողոցները չափչափում։

ԳԻՒԼՆ։ Ես փողոցները չէի չափչաչում. գնացել էի քրոջդ տեսնելու։ Նա մահամերձ է (կարգի է բերում սենեակը)։

ԲԱՐԽ։ Թող ամենքը սատկեն. ինձ համար իմ տան պատիւն է միայն թանգ։ Ես գլխիս գդակ ունէի, դու նրան վերցրիր և շուն ու գայլերի առաջ կցեցիր։

ԳԻՒԼՆ։ Ախար ինչ մի մեծ մեղք է, որ հարսցուն տեսնում է իւր նշանածի հետ։

ԲԱՐԽ։ Դու տեսնում էիր ինձ հետ, երբ հարսնացու էիր։

ԳԻՒԼՆ։ Երանի տեսնէի, քեզ նման գաղանի կինը չի լինիլ։

ԲԱՐԽ։ (կատաղելով, սպառնում է չիբուխով) Սուս, թէ չէ քեզ էլ աղջկադ օրը կզցեմ։

ԳԻՒԼ։ Ահ, անիծւի քեզ նման մարդը։

ՏԵՍԻԼ Թ.

Նոյնք Հայրապետ եւ Սմբատ

ՀԱՅՐ։ (Գալիս է խորքի դռնով։ Հագնուած է այնպէս, ինչպէս ինքը տարի է առաջ։ Ծերացել է։ Շմուշկները թողնում է դռան մօտ, գդակը վերցնում)։ Ողորմի Աստուած։

ԳԻՒԼՆ։ Աստուած ողորմի։

ԲԱՐԽ։ Խռով կենա ժամը քո գլխին։

ՀԱՅՐ։ (ապշելով, մի քայլ յետ է գնում) Մարդ Աստծու, եկեղեցուց եմ գալիս։

ԲԱՐԽ։ Եսկրս Հնդատան դուրս կգայ, ոտաքաց, գլխաբաց գոնէ դուռ ողորմութիւն կհաւաքեմ, այս խայտառակութիւնը չեմ տանիլ։

ՀԱՅՐ։ Բան ասա, բան հասկանամ, ինչ ես պառաւ կնկայ պէս անէծք կարդում (գդակը դնում է գլխին)։

ԲԱՐԽ։ Քաշիր տղիդ կապը, Հայրապետ, քաշիր, ասում եմ, թէ չէ նրան էլ կասանեմ, աղջկաս էլ, քեզ էլ, ինձ էլ։ Հերիք չէ, որ ինքը լրբացել է, հերիք չէ, որ այս լակոտին էլ փչացրել է (ցոյց է տալիս Սմբատի վրայ, որ այդ վայրկեանին գալիս է խորքի դռնով)։ Հիմայ իմ անունն է քաղաքի բերանը գցել։ Չէ, չէ, Հայրապետ, իմ նամուսը չի տանիլ այդ բանը։

ՍՄԲ։ (Դնում է ճախ կողմի դռնով այն վայրկեանին իսկ, երբ Բարխուդարը մատնանիշ է անում իրան)։

ՏԵՍԻԼ 10.

Նոյնք, առանց Սմբատի

ՀԱՅՐ։ (Գիւլնազին) Ա կնիկ, գոնէ դու ասա, ինչ է պատահել։

ԳԻՒԼՆ։ (առանց նայելու Հայրապետին) Ի՞նչ գիտեմ, Սէյրանն եկել էր մեր տուն։

ՀԱՅՐ։ Հէնց այդ։

ԲԱՐԽ։ Ասա էլի, լեզուդ չի՞ զօրում։ (Հայրապետին) Աչքովս տեսայ նրանց գրկած, համբուրուելիս։

ՀԱՅՐ։ Այ թէ ինչ։

ՄԻՒՍ ՍԵՆԵԱԿԻՑ։ (միւս սենեակից լուռում է Սոսանի տնքտնքոցը)։

ԳԻՒԼՆ։ Քիչ տնքանք, անբաղդ, քիչ։ (դնում է ճախ կողմի դռնով)։

ՏԵՍԻԼ 10.

Նոյնք առանց Գիւլնազի

ՀԱՅՐ։ Բաս ես գնամ նրա գլուխը շների բաժին դարձնեմ, թէկուզ խանչալ քաշի ինձ վրայ։ (դիմում է դէպի խորքի դուռը)։

ԲԱՐԽ։ Սպասիր։

ՀԱՅՐ։ (կանգ է առնում)։

ԲԱՐԽ։ Ես դրա համար չեմ կանչել քեզ։ Եթէ դու խրատող հայը լինէիր, մինչև հիմայ կխրատէիր։

ՀԱՅՐ։ Քիչ եմ խրատել, քիչ եմ ծեծել։ Էլ ճիպոտ չմնաց տանը, որ վրէն կոտրած չլինիմ։ Որ չը խրատուեց, ինչ անեմ։ Դու էլ ես ծեծել, կարողացար մարդ շինել։

ԲԱՐԽ։ Ականջ դիր։ (յուզմունքը զսպելով) Այս երեկոյ բազարից տուն եմ գալիս, մեր փողոցի անկիւնում տեսնում եմ մի քանի ջահիլ ջհուլներ, հաւաքած, լախկոթու են տալիս։ Մօտեցած՝ նրանցից մէկն ասում է, «դա չէ՞ Սէյրանի հետ գիշերներն իրանց ծառի տակ պաչպչուող աղջկայ հայրը»։ «Դա է», պատասխանում է միւսը։ Լսում եմ թէ չէ՝ քիչ է մնում խելքս գլխիցս թռչէ։ Աչքերս արիւն են կոխում, ուզում եմ յետ դառնալ, լրբերի գլուխները ջարդել, բայց մտածում եմ՝ նրանք ինչ մեղք ունեն, լսել են, խօսում են։ Անիծում եմ չար սաթայելին, ճանապարհս շարունակում։ (ձայնը բնդհատելով) Գալիս եմ տուն անիծածին խրատելու։ Ներս եմ մտնում։ Օ՜, Հայրապետ,

թշնամիս չտեսնէ այն, ինչ որ ես տեսայ։ Որդիդ գրկել է աղջկաս, պաչում է։ Ուզում եմ բռնել լակոտիդ, ոտներիս տակ գցել, փախչում է։ Աչքերս մթնում են, բռնում եմ աղջկաս թևից, տանում միւս սենեակ։ Դէ լսիր ինչպէս է տնքտնքում։

ՀԱՅՐ։ Անսիրտ ես, Բարխուդարը, անսիրտ։

ԲԱՐԽ։ Եթէ մայրը վրայ չհասնէր, չէրքէր առաջս, ով գիտէ, կարելի էր ծեծելով սպանէի։

ՀԱՅՐ։ Կսպանէիր, կսպանէիր, ես քեզ ճանաչում եմ։

ԲԱՐԽ։ Ի՞նչ արած, համ ծեծել եմ, համ էլ խըղճում եմ։

ՀԱՅՐ։ Այդպէս չի կարելի, Բարխուդար, դու շատ խիստ ես, շատ։ Նրանք օտարներ չեն, նշանուածներ են։ Էսօր էգուց պիտի պսակւեն։

ԲԱՐԽ։ (ծիծաղում է դառը հեգնութեամբ) Հա, հա, հա, այսօր էգուց պիտի պսակւեն, հա, հա, հա։

ՀԱՅՐ։ Ի՞նչու ես ծիծաղում, մի՞թէ այդպէս չէ։

ԲԱՐԽ. Դու կտեսնես (բարձր ձայնով)։ Սմբատ։

ՀԱՅՐ։ Ի՞նչ ես ուզում անել։

ԲԱՐԽ։ Կտեսնես. ասում եմ (աւելի բարձր) Սըմբատ...

ՏԵՍԻԼ 12.

Նոյնք, Սմբատ, յետոյ Դիւլնազ եւ Մարիամ

ՍՄԲԱՏ։ (դտապով գալիս է ձախ կողմի դռնով) Համմէ։

ԲԱՐԽ։ Բեր այստեղ մեր Աւետարանը, կանչիր մօրդ այստեղ։

ՍՄԲ։ (Ներս է գնում նոյն դռնով եւ իսկոյն վերադառնում Դիւլնազի հետ, ձեռին ճնամաղ կազմով Աւետարանը)։

ՀԱՅՐ։ Խելքս ոչինչ չի կտրում։

ԲԱՐԽ։ Ես չեմ թողնիլ, որ մարդիկ ասեն, թէ Բարխուդարը կոտրած ամանը կոտրողին տուեց, որ կոծկի։

ԴԻԼՆ։ (ներս մտնելով Սմբատի ետեւից)։ Երեխաս տաքութիւն ունէ, զառանցում է։

ԲԱՐԽ։ (Սմբատին) Տուր ինձ այդ Աւետարանը. գրիչդ բեր։

ՍՄԲ։ (Աւետարանը Բարխուդարին տալով, փոքրիկ խորշերի մէկից վերցնում է եւ բերում մի կաղամաղ եւ մի փետրեայ գրիչ)։

ՄԱՐ։ (Գալիս է խորքի դռնով յուզած. ինքը տարեայ մէջ շատ է ծերացել։ Մազերը բոլորովին ճերմակել են։ Գալիս է առանց ջարշավի, գլխին մի հասարակ շալ) Ի՞նչ է պատահել այս տանը։ Ես լսեցի, որ...

ԴԻԼՆ։ (ընդհատելով) Ա՛խ, Մարիամ բաջի, աշխարհը խաւարել է մեր գլխին։ Եկ, եկ, երեխայիս մինչ ճար արա։ (Գնում է ձախ կողմի դռնով)։

ՄԱՐ։ (գնում է Դիւլնազի ետեւից)։

ՏԵՍԻԼ 13.

Նոյնք, առանց Դիւլնազի եւ Մարիամի

ԲԱՐԽ։ (Նստում է սնդուկներից մէկի վրայ, գրիչը թաթախում է թանաքի մէջ) Ո՞րտեղ է գրուած այն անառակների մասին։

ՍՄԲ։ (ցոյց է տալիս Աւետարանի կազմի մէջ այն տեղը, ուր նշանակուած է Սուսանի եւ Սեյրանի նշանդիլը) Ահա այստեղ։

ԲԱՐԽ։ Անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

(գրիչը հանդիսաւոր բարձրացնում է)։ *Ինձը տարի սրանից առաջ ես ուխտեցի իմ աղջկան քո որդուն տալ, այսօր ինքս իմ ձեռքով չնչում եմ իմ ուխտը։* (ուզում է չնչել)։

ՀԱՅՐ։ (կրօնական սարսափով բռնելով Բարխուդարի ձեռքը) *Կաց մարդ, մի անիր, Աստուած քեզ կը-պատժի։*

ԲԱՐԽ։ *Թող պատժի* (Հրէյով Հայրապետին ցնցում է Սմբատի գրածը, մի քանի անգամ գլուխ քաշելով նրա վրայ) *Վերջացաւ։ Թող իմ դատաստանն երկնքում լինի, եթէ ես վատ բան արի։*

ՀԱՅՐ։ (մեկուսի) *Այս մարդը մեզ կործանելու է։* (Բարխուդարին) *Ուրեմն՝ էլ աղջկաղ չ�տալիս իմ որդուն։*

ԲԱՐԽ։ (Առետարանը Սմբատին տալով, վեր է կենում) *Ոչ ես աղջիկ ունիմ, ոչ դու որդի։*

ՍՄԲ։ (սրտմտութեամբ) *Հայր։*

ԲԱՐԽ։ (խիստ) *Քո բանը չէ։*

ՀԱՅՐ։ *Լաւ մտածիր, ինչ արիր։*

ԲԱՐԽ։ *Ինչ որ արի, արած է։*

ՀԱՅՐ։ *Իսկ մեր քառասուն տարեայ բարեկամութիւնը։*

ԲԱՐԽ։ *Ես էգուցեանից կ'հրամայեմ, որ շինեն պարիսպը մեր տների մէջ։*

ՀԱՅՐ։ (ճակատագրին խոնարհուողի հեզութեամբ) *Լաւ, թող քո ասածը լինի։*

ԲԱՐԽ։ *Ես իմ նամուսը բարեկամութեան համար ծախել չեմ կարող։*

ՀԱՅՐ։ (գլուխը քաշ, քայլերն ուղղում է դէպի խորքի դուռը)։

ՏԵՍԻԼ 14.

Նոյնք, Սէյրան, յետոյ Մարիամ եւ Գիւլնազ

ՍԷՅՐ։ (շտապով գալիս է խորքի դռներով, յուզուած, առանց գդակի) *Սպասիր։*

ՀԱՅՐ։ *Պակասը դու էիր* (կանգ է առնում)։

ՍՄԲ։ (խորը ընկերական կշտամբանքով) *Սէյրանն։*

ՍԷՅՐ։ *Սուս, ես էլ իմը պիտի ասեմ, յետոյ ինչ ուզում են, թող անեն։*

ՀԱՅՐ։ (գայրանալով) *Դուրս կորիր այստեղից, դուրս, ասում եմ։*

ՍԷՅՐԱՆ։ *Դու լռիր, դու լեղու չունիս այդ մարդու մօտ* (Բարխուդարին)։ *Լսիր, ջառ ու ջահանամը դու էլ, քո բարեկամութիւնն էլ, պատիւն էլ, նամուսն էլ։ Ինձ համար այդ բոլորը Սուսանի մի եղունգին չարժեն։ Դու ուզում ես նրան խլել ինձանից։ Չես կարող։ Երկինքը վկայ չես կարող։ Ես քեզ կսպանեմ, այդ չեմ թողնիլ։*

ԲԱՐԽ։ (ծաղրաբար) *Մ՞թէ։*

ՍԷՅՐ։ *Ես քեզ ասում եմ չեմ թողնիլ։ Ո՞վ ես դու, ինչ իրաւունքով ես ծեծում նրան։ Ես լսում էի նրա ձայնը։ Գաղան, ինչ մեղք է արել նա, որ տանջում ես։ Նա իմ հարսնացուն է, ես նրա նշանածը։ Ուզեցինք տեսնուել, տեսնուեցինք։ Քեզ ինչ, կամ ձեզ ինչ։ Ի՞նչ իրաւունքով էք մէջ ընկնում, ինչ իրաւունքով։*

ԲԱՐԽ։ (Հայրապետին) *Դուրս տար այդ անպատկառին թէ չէ գլուխը շեների կերակուր կդնեմ։* (ուզում է լարձակել Սէյրանի վրայ)։

ՍՄԲ։ (Բարխուդարի բեռ ից քաշելով) *Համբերիր, թող տեսնենք ինչ է ասում։*

ՏԵՍԻԼ 15.

Նոյնք, Մարիամ եւ Դիւլնազ

ՄԱՐ։ (դուրս է գալիս ձախ կողմի դռնով այն վայրկեանին երբ Բարխուդարը ուզում է յարձակուել Սէյրանի վրայ) *Ամա՛ն Աստուա՛ծ, կարող է սպանել երեխային։*

ՍԷՅՐ։ Մի վախենար, մայր, քո որդուն սպանողը դեռ չի ծնուել։ (Բարխուդարին) *Ինչ ես ձայնդ գլխիդ գցում։ Ո՞ւմ ես ուզում վախեցնել։ Էլ ես առաջուայ երեխան չեմ, էլ քո գոռոցներն ինձ համար երկիւղալի չեն։ Զնչեցիր, հա՛, Աւետարանի վրայ արած ուխտդ։ Ա՞յդ է քո ազնիւ խօսքը։ Կրունգիս չարժէ նա։ Մտիկ արէք այդ գոռոզին, դեռ երես ունի նամուսի մասին խօսելու։*

ՀԱՅՐ։ (կատաղի) *Սուս, սուս, անպատուն, թէ չէ կատաղում եմ։*

ԳԻՒԼՆ։ (գալիս է ձախ կողմի դռնով)

ԲԱՐԽ։ Անէծք քեզ, չար սաթայէլ, աչքերս աբիւն է կոխում։

ՍՄԲ։ (յուզմունքից դողալով, մօտենում է Սէյրանին) *Գնա՛, հեռացիր, յետոյ ես քեզ հետ կըխօսեմ։*

ՍԷՅՐ։ Դու մի խառնուիր, իմ բանը այդ մարդու հետ է։ Դու էլ ես տանջւում նրա ձեռքին. դու էլ գիտես նա ինչ գազան է։

ԲԱՐԽ։ Շուն, շան զաւակ (յարձակւում է Սէյրանի վրայ եւ ջիբուխով երկու անգամ զարկում նրան)։

ՄԱՐ։ Վա՛յ, սպանեց, (մօտենում է Գիւլնազին եւ գրկում նրան)։

ՍԷՅՐ։ (ձեռը տանելով դէպի մէջքին կապած դաշոյնը) *Ես քո փորոտիքը գուրս կածեմ անիրաւ։*

ՀԱՅՐ։ (խելակորոյս) *Աղա, հեղինք է, աղա, ամօթ*

է։ (բռնում Սէյրանին երկու ձեռներով։ Դպակն ընկնում է)։

ՄԱՐ։ (աղերսական) *Սէյրան, Սէյրան։*

ՍՄԲ։ (կատաղում է) *Դաշոյնիդ ձեռ մի տալ, թէ չէ ես էլ ունիմ։* (Ձեռը տանում է դէպի իւր ջուխայի տակ թաղցրած դաշոյնը։

ԳԻՒԼՆ։ (բռնում է Սմբատի ձեռները ետեւից) *Ես քեզ չեմ թողնիլ խառնուելու, չեմ թողնիլ։ Ինչ ուզում են—թող անեն։*

ՍԷՅՐ։ (ազատուելով Հայրապետի ձեռներից) *Երկինքը վկայ այդ չիրուխը գլխիդ կը փշրէի, եթէ Սուսանը չլինէր։ Բայց այդ հարւածը ես չեմ տանիլ, եթէ Սուսանին խլես ինձանից։*

ԲԱՐԽ։ Ես կտոր կտոր կանեմ նրան, շներին կը գցեմ. քեզ չեմ տալ։

ՍԷՅՐ։ Այդ կտեսնենք։

ՍՈՒՍ։ (ներսից տառապանքով) *Մամա, մամա։*

ԳԻՒԼՆ։ Գալիս եմ, անբաղդ, գալիս եմ (չտապով գնում է ձախ)։

ՍԷՆՐ։ Դա նրա ձայնն է, ով գիտէ, մեռնում է։ Ես ուզում եմ նրան տեսնել։ (դիմում է դէպի ձախ դուռը)։

ԲԱՐԽ։ (կանգնում է ձախ դռան առաջ պաշտպանողական դիրքում) *Քո գերեզմանը կտեսնես, նրան չես տեսնիլ։*

ՍԷՅՐ։ (դաշոյնը մերկացնելով) *Դէ, կեր, գազան։*

ՍՄԲ։ (արագ մերկացնում է դաշոյնը եւ Սէյրանի դէմ կանգնում) *Կանգ առ։ Ես քո կողմն եմ, բայց չեմ թողնիլ հօրս սպանել։*

ՄԱՐ։ (զուխն արագ բաց անելով, ջոքում է երկուսի մէջ տեղ, մազերը տարս ծուռ նրանց ոտների առաջ) *Ներկեցէք կարմիր արիւնով ճերմակ մազերս։*

ՍԷՅՐ։ (սարսափով յետ է կանգնում) *Մայր։* (դաշոյնը դնում է պատեանի մէջ)։

ՍՄԲ։ (սարսափած) *Մարիամ բաջի* (յուդիթին) *վեր կաց։* (դաշոյնը դնում է պատեանի մեջ)։

ՀԱՅՐ։ (այնքան շփոթել է, որ չգիտէ ինչ անէ։ Ձեռները աջ ու ձախ տարածելով, մերթ սրան է դիմում մերթ նրան)։

ԲԱՐԽ։ (յուդիթին։ Արձանի պէս կանգնած է ձախ դռան առաջ)։

ՄԱՐ։ (վեր է կենում, մազերը ժողովելով։ Շնչասպառ է, դողում է, անորոշ ինչիւներ է արձակում)։

ԲԱՐԽ։ (Հայրապետին ու Մարիամին) *Տեսաք այդ բոլորը. կշտացաք։ Դէհ, բարի ճանապարհ։ Իմ տան դռները այսուհետև ձեզ համար չեն բացուիլ* (մի քանի քայլ առաջ է գալիս)։

ՍՄԲ։ Հայր, ես քեզ պաշտպանեցի, բայց քո աբրամունքը պաշտպանել չեմ կարող։ Սուսանը Սէյրանի հարսնացուն է, նրա հետ էլ պիտի պսակուի։

ԲԱՐԽ։ (ուշադրութիւն չդարձնելով Սմբատի վրայ։ Հայրապետին եւ Մարիամին սառը եղանակով) *Դուք դեռ այստեղ է՞ք։*

ԴԻՒՀՆ։ (երեւում է ձախ կողմի դռան մեջ) *Մի արա, մարդ, մի արա։*

ԲԱՐԽ։ Բարխուդարը իւր թքածը լղոներից չէ։

ՀԱՅՐ։ (գդակը յատակից վերցնելով) *Լաւ, քո սածը լինի։ Բայց երկինքը վկայ, Բարխուդար, լաւ բան չես անում* (յուզած) *Մնաս բարով, Գիւլնազ բաջի, ես քեզանից շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ։* (Մարիամին խղճուկ ձայնով)։ *Գնանք, ա կնիկ։*

ՄԱՐ։ (Մազերը շտկելով) *Գնանք։*

ՍԷՅՐ։ Լսեցէք. երդւում եմ իմ նամուսով, որ Սուսանը կամ իմը կլինի կամ գերեզմանինը։ (արագ քայլերով գնում է խորքի դռներով)։

ՀԱՅՐ։ (հետեւում է Սէյրանին, ձեռները դէպի երկինք բարձրացրած)։

ՄԱՐ։ Թող Աստծու դատաստանին մնայ մեր ամենքի դատը (գնում է Հայրապետի ետեւից, աչքերը սրբելով)։

ՍՄԲ։ (նայում է Բարխուդարին դառը յանդիմանութեարբ)։

ՍՈՒՍ։ (միւս սենեակից տառապանքով)։ *Մամա, մամա։*

ԳԻՒՀՆ։ (հեկեկալով գնում է ձախ կողմի դռնով)։

ԲԱՐԽ։ (պատրաստւում է ջիբդուխ ծխելու)։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Ռուսական բնակարանը։ Հարսանիքի տեսարան

ՍՈՒՍԱՆԻ ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մի շատ ընդարձակ սենեակ, կահաւորուած կէս ասիական և կէս եւրոպական եղանակով։ Յատակը ծայր է ի ծայր ծածկուած է թանձր պարսկական գորգերով։ Դռներ խորքի պատի մէջ, որ տանում են դէպի գաւիթ, դռներ աջ պատի մէջ, որ տանում են բնակարանի միւս սենեակները։ Երկու նեղ ու երկար ճաշի սեղաններ, մէկն աջ, միւսը ձախ պատի առջև։ Երկուսն էլ ծածկուած են կապտագոյն սփռոցներով։ Ձախ պատի մէջ լուսամուտներ։ Ոտնաւորները արխալուղներով, առանց չուխայի, սև չուստեր հագած, սեղանները պատրաստում են հարսանիքի խնճոյքի համար, մերթ աջ կողմի դռներով, մերթ խորքի դռներով բերելով հարկաւոր իրերը։ Հետզհետէ խորքի դռներով գալիս են հիւրերը, գլխաւորապէս տեղական հագուստներով։ Նրանք, որոնք չմուշկներ ունին հագած, թէ կին և թէ տղամարդիկ, խորքի դռների մօտ դրսում հանում են իրանց չմուշկները և գուլպաներով ներս մտնում։ Կանայք, ներս մտնելով, իրանց չաղոմները վերցնում են, տղամարդիկ գդակները վերցնում են և տալիս աջ դռների մօտ կանգնած մի պատանու, որ տանում է միւս սենեակ։ Ամենքը հագել են իրանց լաւագոյն զգեստները, տղամարդիկ մետաքսեայ արխալուղներ, կանայք թաւշեայ մինթանաներ, բէհեզեայ չեաքսաններ, արխալուղներ։ Կանանց մեծամասնութեան մետաքսեայ շապիկների եզրերը ու փեշերը զարդարուած են

ոսկէ դրաքներով։ Մի քանի կանանց գլուխները զարդարած են ոսկէ պսակներով (դիադեմ)։ Արևելեան ճոխ շքեղութիւն, գոյների առատութիւն։ Հասակաւոր կանայք երեսբաց են, երիտասարդներից շատերը սքողում են իրանց երեսները տղամարդկանցից։

ՏԵՍԻԼ 1.

Հիւրեր—կանայք

Ա. ՀԻՒՐ։ (խորքի դռնեքսվ ներս մտնելով ուրիշ երկու կանանց հետ, շարշովը վերցնում է տալիս աջ կողմի դռների մօտ կանգնած պատանուն) *Բաղդաւոր աստղի տակ է ծնուել Գիւլնազի աղջիկը, ինչ ասեմ։*

Բ. ՀԻՒՐ։ (անելով նոյնը, ինչ որ առաջինը) *Տես ինչ տուն ու տեղ է մտնելու։ Կէս կուշտ կէս քաղցած մի դերձակի աղջիկ ու սեղանները։*

Գ. ՀԻՒՐ։ (շարշովի փոխարէն շալ է գցած գլխին։ Հագնուած է համեմատաբար հասեստ) *Աղջիկն այնքան սիրուն է, որ արժանի է աւելի հարուստ տուն մտնելու։*

Ա. ՀԻՒՐ։ *Հոգեմ նրա սիրուն գլուխը։*

Բ. ՀԻՒՐ։ *Տափը մտնէ լպստածը։*

Ա. ՀԻՒՐ։ *Լպստած լինի լաւ է, լակլակած է։*

Գ. ՀԻՒՐ։ (կշտամբանքով) *Աղջի, քիչ բամբասեցէք, հերիք է։*

Բ. ՀԻՒՐ։ *Իսկի էլ բամբասանք չէ։ Երևում է, որ դու կուժ ու կուլա ծախող Հայրապետի տղայ Սէյրանի մասին չես լսել։*

Գ. ՀԻՒՐ։ *Ի՞նչ պիտի լսէի։*

Ա. ՀԻՒՐ։ *Աշխարհից բեխաբար ես։*

Բ. ՀԻՒՐ։ *Ողջ քաղաքն է խօսում։*

Գ. ՀԻՒՐ։ *Ի՞նչ է խօսում։*

Ա. ՀԻՒՐ։ *Որ Սուսանը Սէյրանի հետ գիշերները անանուել է։*

Բ. ՀԻՒՐ։ *Իրանց թթի ծառի տակ։*

Ա. ՀԻՒՐ։ *Որ սիլիկ-բիլիկ են արել, գրկուել են, պաչպաչուել։*

Բ. ՀԻՒՐ։ *Որ հայրը տեղն ու տեղը երկուսին էլ բռնել է ու մի լաւ դնքսել։*

Ա. ՀԻՒՐ։ (աջ ու ձախ նայելով) *Սուս, պատճառաւոր է եղել։*

Բ. ՀԻՒՐ։ (ղղնջիւնով) *Վիժել է։*

Գ. ՀԻՒՐ (վրդովուած) *Հերիք է, հերիք։ Որ վզովս թոկ գցէք, խեղդէք, այդ բանին չեմ հաւատալ։ Այն խոնարհ, պարկեշտ Գիւլնազի աղջիկը չէր կարող այդպիսի բաներ անել։*

ՏԵՍԻԼ 2.

Նոյնք եւ Սանամ

ՍԱՆԱՄ։ (Գալիս է աջ կողմի դռներով։ Մօտ յիսուն տարեկան գեր, առողջ ու գեղեցիկ կին է բարեհամբոյր դէմքով։ Հագած է բաւշեայ մորեանազոյն մինթանայ, որի փեշերի եզրերը զարդարուած են թանգագին մաշկով։ Մինթանայի տակից, սպիտակ մետաքսեայ շապիկի վրայ, կապած է կարմիր գոյնի մետաքսեայ գօտի, որ ուրախութեան նշան է։ Մազերը հինցյած չեն, ուստի ճերմակ են։ Ուրախ եւ զուարթ)։ Համեցէք, համեցէք։ Բարով հազար բարի էք եկել։

Ա. ՀԻՒՐ։ (Համբուրուում է Սանամի հետ) *Աչքդ լոյս, ա կնիկ, աչքդ լոյս։ Ինչ աղջիկ սաղեցիր, ինչ աղջիկ, հրեշտակ է. խելօք, պարկեշտ։ (արխալուղի գրպանից դուրս է բերում մի մեծ նուռը ոսկե թղթով*

ամկած, վրեն մեխակներ ցցած եւ տալիս է Սանամին)։

Բ. ՀԻՒՐ։ (Համբուրելով Սանամի հետ) *Ողջ քաղաքն է գովում հարսնացուիդ, ասում են նմանը չկայ։* (Տալիս է Սանամին ծխախոտի մեծ տուփի չափ մի կանգիետ)։

Գ. ՀԻՒՐ։ (վրդովուած, մեկուսի) *Չեր աչքը գուբս գայ* (համբուրուում է Սանամի հետ, ոչինչ չի տալիս) *Ասուած տայ, որ երկուսն էլ բաղդաւոր լինեն, ինչ աւեմ։* (իսկոյն հեռանում եւ խառնուում է միւս հիւրերին)։

Ա. ՀԻՒՐ։ (երկրորդ հիւրի հասցեին) *Շնորքդ կտրուի, մի մեխակ էլ բերէիր աչքալուսիի համար։*

Բ. ՀԻՒՐ։ *Երևում է, որ չար սրտով է եկել։*

ՍԱՆԱՄ։ *Աղքատ կնիկ է, չունէ, ինչ բերէր։* (մի երիտասարդ կնոջ, որ օգնում է սեղան պատրաստողներին)։ *Աղջի, Զաւահիր, այս նուռն ու կանգիեաը տար միւս սենեակը։*

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ։ (չորս հոգով գալիս են խորքի դռներով եւ առանց գդակները վերցնելու, խոնարհ գլուխ են տալիս Սանամին, մի անկիւնում նստում եւ սկսում են լարել իրանց գործիքները։

ՍԱՆԱՄ։ (մօտենում է խորքի դռներին, եկող հիւրերին ընդունելու համար, սմանց հետ համբուրուում է, նուէրներն ընդունելով)։

ՀԻՒՐԵՐ։ (տալիս են Սանամին, բացի քաղցրաւենիքից, արծաթեայ բաժակներ, գդալներ, շաքարամանեներ եւ այլն)։

ԴՐՍԻՑ։ (շատ հեռուից լսուում է զուռնայի ձայն, որ հետզհետէ մօտենում է)։

ՀԻՒՐԵՐ։ *Գալիս են, Գալիս են։*

ՍԱՆԱՄ։ (հիւրերին) *Տեղ բաց արէք։*

ՀԻՒՐԵՐ։ (կանգնում են աջ ու ձախ երկու շարքերով)։

ՏԵՍԻԼ 3.

Նոյնք եւ Աղաբէգ

ԱՂԱԲԷԳ։ (մի երիտասարդ աքխալուդով, ջուխայով, էւրոպական կօշիկներով։ Ներս է վազում խորքի դռներով գուռնատ, հեւալով) Ահ, նամարդներ, ինչպէս փախան։

ՍԱՆԱՄ։ (վախեցած) Ի՞նչ է պատահել։

ՀԻՒՐԵՐ, (շրջապատելով Աղաբէգին) Ի՞նչ է պատահել, ինչ է պատահել։

ԱՂԱԲ։ (շնչասպառ) Թշնամի մարդիկ հարսանիքն ուզում էին փչացնել։

ՀԻՒՐԵՐ։ Ովքեր էին, ովքե՞ր։

ԱՂԱԲ, Զճանաչեցինք։ Լսեցէք ինչպէս պատահեց։ Հարսանիքը ժամից դուրս եկաւ, ճանապարհ ընկաւ այստեղ։ Գեօգչանց տնին հասած չհասած՝ յանկարծ մեզ վրայ սկսեցին քարեր թափել. մի մեծ քար դիպաւ ջահ տանողի թեին, ջահը նրա ձեռից ընկաւ, հանգաւ։ Մենք մնացինք խաւարի մէջ։ Միայն թագաւորթագուհու մոմերն էին լուսաւորում։ Բարձրացաւ հառայ հուռայ։ Մենք շտապեցինք։ Կանայք վայնասուն բարձրացրին։

ՈՍՆԱՄ (անհամբեր) Յետոյ, յետոյ։

ԱՂԱԲ։ (տակաւին հեւալով) Ռուստամը գոռաց։ «Աղա, ջահը վառեցէք»։ Գդուլ Մաթոսը ջահը վառեց, ինչ տեսնենք, մօտ տասը-տասներկու ջահիլ տղերք փայտերով և խանչալներով գալիս են մեզ վրայ։

Դ. ՀԻՒՐ։ Թուրքե՞ր։

ԱՂԱԲ։ Հայեր։ Նրանք հայերէն էին հայհոյում։ Ռուստամը մի ձեռով գրկեց նորահարսին, միւսով խլեց խաչեղբօր թուրը և Ալանի պէս գոռաց. «ով որ նամարդ չէ, թող առաջ գայ»։ Մերոնք սիրտ առան։

Զուխախները հանեցին, թևերին փաթաթեցին, վազեցին չօուշ Մնացականի չափառից մի-մի փայտ դուրս բերեցին։ Մի քանիսն էլ խանչալներ ունէին։ Սկսեցինք կռուել։

ՍԱՆԱՄ։ Ողորմած Աստուած։

ԱՂԱԲ։ Նամարդներն երկար չդիմացան։ Սկսեցին մէկ-մէկ փախչել։ Վերջը մէջ տեղ մնաց մէկը ոտից մինչև գլուխ ցեխաթաթախ։

ՍԱՆԱՄ։ Ո՞վ էր, ախ Աստուած, ո՞վ էր։

ԱՂԱԲ։ Զճանաչեցինք։

ՀԻՒՐԵՐԻՑ ՈՄԱՆՔ։ (իրարու նշաններ են անում, թե ճանաչում են)։

ԱՂԱԲ։ Նա գոռում էր իւր ընկերների վրայ։ «Էյ, բենամուս ընկերներ, ո՞րտեղ էք փախչում, կանգառէք», Բայց ոչ ոք չլսեց նրան։ Փախան։ Նամարդը սկսեց հայհոյել Ռուստամին, նորահարսի ծնողներին։ Հարբած էր այնպէս, որ ոտքի վրայ կանգնել չէր կարողանում։ (գուռնայի ձայնը մօտենում է)։

ՍԱՆԱՄ։ (երկու ձեռները ծնկներին զարկելով) Վայ ինձ, ուրախ օրս սևացրին։

ՀԻՒՐԵՐ։ Հարսանիքը գալիս է, գալիս է, (իրաքանչիւրը)։

ԱՂԱԲ։ Իսկի մի վախենար, Սանամ խանում, իսկի մի վախենար, ոչ ոքի գլխի մազին վնաս չի հասնիլ։ Հարսանիքը գալիս է ուրախ-ուրախ, գնանք առաջ (գնում է խորքի դռներով)։

ՀԻՒՐԵՐ։ (ճանապարհ են բաց անում եկողների համար։

ՍԱՆԱՄ։ (շտապով գնում է խորքի դռներով)։

ՏԵՍԻԼ Դ.

Դոյնք, Ռուսամ, Սուսան, Սուսամբար, Գպպանիկ, Խաչեղբայր, Քահանայ, Տիրացուներ, նոր հիւրեր եւ այլն

ՇՊՊ. (Ներս է գալիս խորքի դռներից ամենից առաջ։ Բարձրահասակ ջոր-ջոր կազմուածքով կին է քառասուն տարեկան։ Հագած է կապոյտ զօտի, ոտներին ճաղած է սեւ ջուստեր։ Գլխին կապած է հասարակ ճուքիի եւ բոռ։ Ձեռները համարձակ են, շարժումներն ազատ, ոչ ոքից չի ամաչում։ Երաժիշտներին)։ *Պատրաստուեցէք։*

ՀԻՒՐԵՐ. *Հէնց որ ներս մտնեն հուռռա կանչենք* (Զուռնի ձայնը ընդհատուում է։ Քահանան եւ տիրացուները երգում են հարսանիքի շալական)։

ՇՊՊԱՆ. *Ճանապարհ բաց արէք թագաւոր թագուհու համար։ Ուրախացէք, այ չամահաթ, ուրախացէք, գալիս են։*

ՌՈՒՍՏ. (Գալիս է խորքի դռներով Սուսանի հետ։ Բարձրահասակ, յաղթանդամ տղամարդ է, ոչ աւելի քան երեսունուերկու տարեկան։ Երեսը սափրած է, դէմքը լուրջ, մի քիչ մռայլ, աչքերը խորը թաղուած, ունքերը թաւ։ Հագած է մետաքսեայ ծաղկազարդ արխալուղ, որի եզրերը կրծքի վրայ զարդարուած են ոսկեթելով (բաֆթա)։ Սեւ ջուխայ երկար, տերեւաձեւ թեւերով, ոսկեթել ծոպերով։ Կօշիկները եւրոպական են։ Գլխաբաց է։ Գղակը կրում է հանդիսականներից մէկը։ Կրծքին խաչաձեւ կապած է ըստ ճին սովորութեան կանաչ կարմիր ժապաւէններ։ Մի ձեռին մի հաստ վառուած մոմ, միւսը կրծքին դրած)։

ՍՈՒՍ. (Գալիս է Ռուստամի հետ։ Հագած է բէհեզեայ չեթպան, մետաքսեայ կարմիր շապիկ եզրերը ոսկէ դրամներով զարդարուած, վարդագոյն աթլասեայ

վարտիկ։ Փաթաթուած է շարշաւի մէջ, երեսը ծածկած է սպիտակ նուրբ եւ ցանցառ շղարշով)։

ՍՈՒՍԱՄԲ. (Ներս է մտնում Սուսանի ետեւից նոյնպէս փաթաթուած շարշովի մէջ, միայն երեսը բաց է։ Ամբողջ ժամանակ շշնջալով հասկացնում է Սուսանին, թէ ինչ պիտի անել եւ առ հասարակ դէկավարում է նրան։ Նա ինքը նոր է ամուսնացել եւ գիտէ ձեւերը։

ԽԱՉԵՂԲ. (Մի նրիտասարդ, հանդիսաւոր հագնուած, գալիս է անմիջապէս Սուսամբարի ետեւից։ Վզովը քաչ է արած մի երկայն բուր աղծաթեայ պատեանով։ Մի ձեռում բռնած է մի մեծ մոմ, միւսում իւր գդակը, որ ներս մտնելով, անմիջապէս տալիս է ոտնաւորերից մէկին։ Իսկոյն եւ եր բուրը մերկացնում է եւ բռնում դռների գլխին, որպէս զի նորապսակները նրա տակովն անցնեն)։

ՍՄԲ. (Ներս է մտնում խաչեղբօրից եւ Սուսամբարից յետոյ Սանամի հետ միաժամանակ։ Հագած է աթլասի արխալուղ, նոր ջուխայ։ Ոտներին եւրոպական նոր կօշիկներ։ Գդակը ձեռումն է)։

ՇՊՊԱՆ. Սեղանի վրայից վերցնում է մի դատարկ ափսէ եւ դնում Ռուստամի ոտների առակ)։

ՌՈՒՍՏ. (Սուսանի հետ բրի տակով անցնելով, ոտով զարկում է եւ ափսէն փշրում)։

ԱՄԵՆԲԸ. *Աստուած շնորհաւոր անէ։*

ՇՊՊԱՆ. *Հուռռա։*

ԱՄԵՆԲԸ. *Հուռռա, հափ, հափ հուռռա։*

ՔԱՀԱՆ. ԵՒ ՏԻՐԱՑ. *Շարականը ընդհատել են։* (Ներս գայով զգեստները հանում են Իւ. խառնուում նիւրերին)։

ՇՊԱՆ. (երաժիշտներին) *Շախշախի ածեցէք։* (Հանդիսականներին) *Տեղ բաց արէք ինձ համար։*

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ. (նւագում են)։

ՀԻՐԵՐ։ (ծափ են տալիս)։

ՇՊՊԱՆ։ (սեղանի վրայից վերցնում է մի ափսե եւ գլխի վրայ բռնելով, պարում է) *Շօբօշ, այ շօբօշ։ Տուղին Աստուած տա, չուղին ինքը ողորմի։ Շօբօշ, այ շօբօշ։ Բոյիդ մատաղ, Ռուստամ աղա, տես ինչ հարս եմ բերել քեզ համար, շօբօշ, այ շօբօշ, այ շօբօշ։ Երեք օր, երեք գիշեր կնամբերես, կտեսնես, թէ չհաւանես, ինձ կխեղդես։ Շօբօշ, այ շօբօշ։ Տուէք, այ Ջամահաթ, ես ձերն եմ, դուք իմը։ Շօբօշ, այ շօբօշ։ Սուսան խանում, դունիա գեօղալի, թառլան դուշ, ջին ջաւահիր։ Շօբօշ, այ շօբօշ։ Ռուստամն է Ռուստամը զալ, ջահիլ ջիւան, բոյը չինար, ինքն ասլան, ասլան բալասի, նամուս ղրիաթով, փառք ու պատուով։ Շօբօշ, այ շօբօշ։ Տուէք, տուէք։ Սուսանն է մարալի պէս, խանում-խաթուն, խելք ունի ծովի պէս, սիրտ ունէ ոսկի է, հիւր ու մալաք, բիլ ու բիւլբիւլ։ Շօբօշ այ շօբօշ։* (Շօբօշ բառը արտասանում է ամեն անգամ, երբ ներկայ եղողները դրամ են գցում նրա ափսեի մէջ եւ, միեւնոյն ժամանակ, շարունակ պարում է)։

ՌՈՒՍՏ։ (մի ոսկէ դրամ է գցում Շպպանիկի ափսեի մէջ)։

ՍՈՒՍԱՆ։ (երեք ռուբլիանոց թղթադրամ է գցում ափսեի մէջ)։

ՍԱՆԱՄ։ (մի թղթադրամ է գցում)։

ՍՄԲ։ (մի քանի արծաթէ դրամներ է գցում)։

ԽԱՉԵՂԲ։ (մի թղթադրամ է գցում)։

ՀԻՐԵՐԻԻ ՈՄԱՆԲ։ (զանազան դրամներ են գցում)։

ՇՊԱՆՆԲ։ (դրամները ժողովելով, դադարում է պարել եւ ժողովածը դնում է գրպանը, երաժիշտներին ծաղրական նշան անելով)։

ՍԱՆԱՄ։ (երաժիշտներին) *Բաղդադի ածեցէք* (սկսում է պարել ծանր ու հանդիսաւոր եղանակով)։

ՍՄԲ։ (պարում է Սանամից յետոյ)։

ՀԻՐԵՐ։ (զանազան թղթադրամներ թրջում են եւ կպցնում պարողների ճակատին)։

ՊԱՐՈՂ։ (բացի Շպպանիկից, ժողոված փողերը տալիս են երաժիշտներին)։

ՈԱՆԱՄ, (դադարելով պարել, համբուրում է նրապակներին)։ *Շնորհաւոր, այ որդիներ, Աստծու ձեռը ձեզանից անպակաս լինի։ Բաղդաւոր լինիք, մի քարձի ծերանաք, ծլիք, ծաղկիք, պտուղներ տաք, ես էլ տեսնեմ։ փառաւորեմ։*

ՀԻՐ։ Ամեն, ամեն։

ՍՈՒՍ։
ՌՈՒՍ։ } (համբուրում են Սանամի ձեռը)։

ՍԱՆԱՄ։ Դէ, համեցէք, նստեցէք, կնանիք այս կողմ, տղամարդիկ այն կողմ։

ԵՐԱԺԻՇՏ։ (մի առ ժամանակ դադարում են, յետոյ սկսում են նւագել զանազան եղանակներ, միայն հանդարտ)։

ՀԻՐԵՐ։ (նստում են՝ կանայք ձախ, տղամարդիկ աջ կողմի սեղանների քով։ Մեծամասնութիւնը գուլպաներով է եւ չգիտէ սեղանի քով նստելու ձեւը, ինչպես եւ դանակ պատառաքաղ գործ ածելը, ուստի պատահում են ծիծաղելի սխալներ։ Փոքրամասնութիւնը եւրոպական կօշիկներով է։ Կանանցից երկուսը բաւական բաւական են, մեկը հագնուած է եւրոպական տարազով։ Տղամարդկանց մէջ եւս կան եւրոպական տարազով հագնուածներ։ Կան երկու երեք փոքրիկ չինովնիկներ կոճակներով։ Սրանք իրանց նպարտ են պահում)։

ՍՈՒՍ։ (Սուսամբարի թելադրութեամբ վերցնում է չարշովը եւ նստում երեսթօղով սեղանի գլխում, աւանդեցի կողմ)։

ՍՈՒՍԱՄԲ։ (տեղաւորուում է Սուսանի մօտ, նոյնպէս չարշովը վերցնելով)։

ՌՈՒՍՏԱՄ։ (մոմը հանգցրել է, տեղ ոտնաձայներից մեկին եւ կարգադրութիւններ է անում, մերթ նստելով սեղանի գլուխը, աւանսեանի կողմ, մերթ վերկենալով)։

ՍԱՆԱՄ։ (մեծ մասամբ ոտքի վրայ է, իսկ նստում է Սուսանի դեմ)։

ԵՐԱԺԻՇՏ։ (մերթ դաղարում են, մերթ նւագում)։

ՈՏՆԱՒՈՐ։ (խորքի դռներից կերակուրներ են երթում ու բաժանում։ Կերակուրներ երեք տեսակ են։ նախ տալիս են տապակած գառը, ապա խնձորի դոլմա եւ վերջը փլաւ, յետոյ տանձ ու խնձոր)։

ՌՈՒՍՏԱՄ։ (լուռ գնալով խաչեղբօրը) *Զիմացար ովքեր են։*

ԽԱՉԵՂԲ։ (որ նստած է Ռուստամի մօտ) *Չճանաչեցի։*

ՌՈՒՍՏ։ Այս քաղաքում ես թշնամիներ չունիմ։ Տասնեւօթ տարի է հեռացել եմ Դաղստան։

ԽԱՉԵՂԲ։ Լաւ, հանգստացիր, մենք կիմանանք ովքեր էին այդ լրբերը և մի լաւ կպատժենք։

ՌՈՒՍՏ։ (կատաղութիւնը հազիւ զսպելով) *Դարձ Ռուստամի վրայ յարձակուել, այն էլ այսօրուայ օրը։ Իմ պատուին դիպչողի գլուխը ուսերի վրայ չեմ թողնիլ։*

ԽԱՉԵՂԲ։ Աչքունքդ բաց արա, հիւրերդ քեզ են նայում,

ՌՈՒՍ։ (զսպելով իրան ոտքի է կանգնում, բարձր ձայնով) *Բարեկամներ, եթէ ինձ մաղու չափ սիրում էք կամ պատուում, պէտք է այս երեկոյ մի լաւ քէֆ անէք,*

ՀԻՒՐԵՐ։ Քէֆ, քէֆ, հափ հափ հուռռա։

ԽԱՉ։ Թամադա ջոկեցէք, Թամադա։

ՀԻՒՐԵՐ։ Սերգէյ բէգը։ Սերգէյ բէգը։ Պրօսիմ, պրօսիմ։

ՍԵՐԳԷՅ ԲԷԳ։ (փոքրահասակ տղամարդ է հագած պաշտօնեայի կոճակաւոր բանկօն, տակից արխալուղ։ Վեր է կենում տեղից նազ ու բազով) *Ղասպադա, ինձ ներեցէք, այսօր մի քիչ քէֆս լաւ չէ։*

ՀԻՒՐ։ Խնդրում ենք, խնդրում ենք։

ՍԵՐԳԷՅ-ԲԷԳ։ (կոտրտուելով) *Խնայեցէք։*

ՀԻՒՐ։ Չի կարելի, չի կարելի, կենացդ, հուռռա։

ՌՈՒՍՏ։ Սէրգէյ-բէգ, եթէ ինձ սիրում ես։

ՍԷՐԳ-ԲԷԳ։ (իբր թէ ակամայ համաձայնելով) *Դէ, ինչ արած, ապա Ռուստամի խնդիրը չեմ կարող չկատարել։* (բաժակը բարձրացնելով աջ ու ձախ գլուխ է տալիս) *Շնորհակալ եմ, շնորհակալ եմ* (նստում է)։

ՍՈՒՍ։ (լուռ գնալով, երեսաբոլի տակից) *Նա էր, նա ինքը։ Ես ձայնից ճանաչեցի։ Ա՛հ, խեղճ տղայ։*

ՍՈՒՍԱՄԲ։ Դու նրան դեռ խղճում ես։ Խեղճ մարդն այդ խայտառակ բանը չէր անիլ։

ՍՈՒՍԱՆ։ Նա անբաղդ է, Սուսամբար, շատ անբաղդ։

ՍՈՒՍԱՄԲ։ Ինչու չես ասում, որ լակած էր, ոտքի վրայ կանգնել չէր կարողանում։

ՍՈՒՍԱՆ։ Հէնց անբաղդութիւնից է հարբում։ Ախ, Սուսամբար, այս քօղն ինձ խեղդում է։ Ուզում եմ պատռել, դէն գցել։

ՍՈՒՍԱՄԲ։ Ցիմար յիմար մի խօսիր։ Կանցնի, կմոռացուի, և դու բաղդաւոր կլինես Ռուստամի հետ։ Տես ինչ տղամարդ է, նմանը չկայ այդքան մարդկանց մէջ։

ՍՈՒՍԱՆ։ Ես նրան էլ եմ խղճում։ Ախ, ինչու իւր ջահիլ ջիւան կեանքը կապեց ինձ նման մի անբաղդի հետ։ Տէր, տուր ինձ ոյժ դիմանալու։ (աչքերը սրբում է քօղի տակ)։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ (ոտքի է կանգնում, անձեռոցիկը կրծքին կապած, լիք բաժակը բարձրացնելով) *Օրշչի կամպանիա, լսեցէք։*

ՀԻՒՐ։ Հրամայիր, հրամայիր, ապա Թամադա։

ՍԷՐ. ԲԷԳ։ Բաժակներդ լիք-լիք տանեմ։

ՀԻՐԵՐ։ (զարմանում են, շտապում են իրանց բաժակները լեցնել) *Պատրաստ ենք, պատրաստ ենք։*

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Խաչեղբայր, ալլահվերդի։

ԽԱՉԵՂԲ։ Խօսքդ շաքարով։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Խմենք Թագաւոր Թագուհու կենացը։ Ադա հափ, հափ, հափ հուռռա։

ՀԻՐԵՐ։ Հափ, հափ, հափ հուռռա։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Հուռռա։

ՀԻՐԵՐ։ Հուռռա, Թագաւոր Թագուհու կենացը (շատերը մօտենում են Ռուստամին)։

ՌՈՒՍՏ։ (ոտքի է կանգնում եւ աջ ու ձախ գլուխ տալիս)։

ՍՈՒՍԱՆ։ (ոտքի է կանգնում Սուսամբարի բեղադրութեամբ եւ գլուխ տալիս կանանց)։

ՍԵՐԳ։ (Երաժիշտներին, հրամայողարար, մի ձեռք կողքին կռթնած) *Ադա, մի չարգահ ածեցէք։*

ՌՈՒՍՏ։ (միշտ մտազբաղ) *Մինչև որ չիմանամ ովքեր էին և ինչու յարձակեցին, չեմ հանգստանալ։*

ԽԱՉԵՂԲ։ Փողոցի լակոտներ էին, քո արևը վկայ։ Հարբած շան օրի էին։

ՌՈՒՍՏ։ Ես հանգիստ մարդ եմ, ոչ ոքի ֆաս չեմ տալիս։ Բայց երբ ուզում են ինձ անպատուել, մոռանում եմ ամեն բան, մինչև անգամ հարազատ մօրս չեմ խնայիլ։

ԳԱՉԵՂԲ։ Հանգստացիր, Ռուստամ, հանգստացիր, ի սէր Աստծու։ Հիւրերը կարող են տխրել։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ (ոտքի կանգնելով) *Ադա Ռուստամ։*

ՌՈՒՍՏ։ (սթափւելով) *Հրամայիր, ադա Թամադա։*

ՍԷՐԳ ԲԷԳ։ Ալլահվերդին քեզ մօտ։

ՌՈՒՍՏ։ Ծառայ եմ։

ՍԷՐԳ։ Խաչեղբօր կենացը։

ԽԱՉ։ (բաժակը ձեռին ոտքի է կանգնում եւ աջ

ու ձախ գլուխ տալիս, բաժակը զարկելով Ռուստամի բաժակին)։

ԵՐԱԺԻՇՏ։ (ամեն մի կենաց խմելիս տուշ են նւագում)։

ՍՈՒՍԱՆ։ (Սուսամբարին) *Աչքիցս չի հեռանում նրա կերպարանքը։*

ՍՈՒՍԱՄԲ։ Կհեռանայ, կմոռանաս։ Եթէ ես լինէի քո տեղը, այսուհետև նրա անունն էլ կմոռանայի։ Մարդդ քանի գնում, այնքան դուր է գալիս ինձ։ Իսկական տղամարդ է։

ՍՈՒՍԱՆ։ Չեմ կարող սիրել նրան, չեմ կարող։

ՍԷԳ. ԲԷԳ։ Ղասպադա, ալլահվերդին ինձ մօտ։ Թագաւոր Թագուհու ծնողների կենացը։ Հուռռա, Սանամ խանում (մօտենում է եւ բաժակը զարկում)։

ՀԻՐ։ Հուռռա, հուռռա (շատերը մօտենում են եւ բաժակ զարկում Սանամի հետ) *Աչքդ լոյս, աչքդ լոյս։*

ՍԱՆԱՄ։ (ոտքի կանգնելով, աջ ու ձախ շնորհակալութիւն է անում)։

ՍՈՒՍԱՄԲ։ (Սուսանին) *Քիչ լաց եղիր. բարական է։ Կտեսնեն, ամօթ է։*

ՍՈՒՍԱՆ։ Աստուած, Աստուած, ինչու ես ստեղծել էնիկ սուտ արարածը։ Շունը, կատուն աւելի բաղդաւոր են քան նա։

ՍՈՒՍԱՄԲ։ Քիչ խօսիր, մենք որ չլինէինք, տղամարդիկ միմեանց չէին ուտիլ։ Թող այժմ կոտրուեն մեզ համար, ցաւս նրանց։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ (ոտքի է կանգնում, բերանը սրբելով, բաժակը միշտ ձեռին)։

ԵՐԱԺԻՇՏ։ (դադարում են նւագել)։

ՀԻՐ։ (ուշադրութիւնները լարում են)։ *Սուս, սուս։*

ՍԵՐԳ-ԲԷԳ։ Ղասպադա, ղա,

ՀԻՐ։ (միաձայն)։ *Ձա։*

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Ղզղարովիե։

ՀԻՒՐ. Ղզղարովիե։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Նաշեղո։

ՀԻՒՐ. Նաշեղո։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Դարաղօղո։

ՀԻՒՐ. Դարաղօղո։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Սմրաթա։

ՀԻՒՐ. Սմրաթա։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Բարխուդարիչա։

ՀԻՒՐ։ Բարխուդարիչա։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Ղօնդախսաղովա։

ՀԻՒՐ. Ղօնդախսաղովա։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Օն-ժէ։

ՀԻՒՐ. Օն-ժէ։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Ղօնդախսաղիանցա։

ՀԻՒՐ. Ղօնդախսաղիանցա։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Վիպիօմ։

ՀԻՒՐ. Վիպիօմ։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Հուռռա,

ՀԻՒՐ. Հուռռա։

ՇՊՊԱՆԻԿ։ Հողս քեզ նման թամադի գլխին։ Օն-ժէ, մօնժէ, պիպիօմ, միպիօմ։ Իսկի իմ կենացը չեմ խմում։ Այսօրւայ հարսանիքը ես եմ սարքել։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Ղասպադա, էքսարա։ Զաղդարովիե նաշեղո ղարանդիղի Շպպանիկ։

ՀԻՒՐ։ Հուռռա։

ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒՐ։ Թող պար գայ, թող պար գայ, պար ենք ուզում։

ՄԻ ՀԻՒՐ։ Առանց շօրշի, առանց շօրշի։

ՇՊՊԱՆ։ (վեր է կենում անձեռոցիկը վզին գցելով։ Երաժիշտներին)։ Ջումջումի ածեցէք։

ՀԻՒՐ։ Ջումջումի։

ԵՐԱԺՇՏ։ (նւագում են մի տաքօրինակ եղանակ)։

ՇՊՊԱՆ։ (պարում է երկու բոպեի չափ)։ Ծափ տուէք։ (հիւրերը ծափ են տալիս)։ Հա ՀԱՆ, հա ՀԱՆ։ (մօտենում է մերթ Ռուստամին, մերթ Սուսանին) Բօյիդ մատաղ, ՀԱՆԻԴ ղուրբան։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Աֆարիմ։

ՀԻՒՐ։ Մաշալլա, մաշալլա։

ՇՊՊԱՆ։ (դաղարում է պարել, նստում է յոգնած)։ Պարելացաւի գաք, այ Ղամահաթ, ոսկորներս էլ են պարում։

ՍՈՒՍԱՆ։ (Սուսանրարին) Ճշմարիտ է, որ Աստուած ինքնասպաններին առանց դատ ու դատաստանի է դժոխք ուղարկում։

ՍՈՒՍԱՄԲ։ Այդպիսի բաների մասին խօսելու ժամանակը չէ։

ՍՈՒՍԱՆ։ Դէ, ասա, մի՛ տանջիր։

ՍՈՒՍԱՄԲ։ Այո՛, ճշմարիտ է։

ՍՈՒՍԱՆ։ Ուրեմն ինքնասպաններին փրկութիւն չկայ միւս աշխարհում։

ՍՈՒՍԱՄԲ։ Չկայ։

ՍՈՒՍԱՆ։ Թէկուզ անմեղ լինին։

ՍՈՒՍԱՄԲ։ Թէկուզ եկեղեցի շինած լինին։

ՍՈՒՍ։ (երեսին խաչակնքելով) Մեղայ քեզ, Տէր։

ՀԻՒՐԵՐ։ (կերել կշտացել են։ Զարմանում են։ Շատերը հարբել են)։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ (երաժիշտներին) Ադա, մին սագահ զարուր ածեցէք։ (երաժիշտները նւագում են)։

ՌՈՒՍՏԱՄԲ։ (խաչեղբօրը) Շատ են երկարացնում։ Ես համբերութիւն չունիմ։ Զար կաւակածն ընկել է սիրտս, կրծոտում է։

ԽԱՉԵՂԲ։ Համբերիր, համբերիր։

ՍՈՒՍ։ (Սուսանրարին տանջանքով) Օհ, շոք է, շոք է, ես խեղդւում եմ։

ՍՈՒՍԱՄԲ։ (Սուսանին համբուրելով) Սիրտս առ-արիացիր, խնայիր ծնողներիդ։

ՍՈՒՍ։ (դառը հեգնութեամբ) Ծնողներիս։ Ոչ, Սուսամբար, ես միայն մօրս եմ խղճում, միայն մօրս։

ՌՈՒՍՏ։ (խաչեղբօրը) Վերջացնելու են, թէ չէ։

ԽԱԶ։ Իսկոյն։ (ոտքի է կանգնում) Պարոններ, աղա Թամադայի կենացը։

ՀԻՒՐ։ Շուտ է, շուտ, չենք ուզում։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Սիլանս։ Ոչ ոք իրաւունք չունի ինձ կարգ ու կանոն սովորեցնելու։ Ես խանի Պօղոսանց տանն եմ Թամադա եղել։ Խաչեղբայր, բաժակդ լցրու, շտրաֆ խմիր։

ՀԻՒՐ։ (իրենց բաժակները լցնելով) Շտրաֆ, շտրաֆ։

ԽԱԶ։ Հնազանդւում եմ։ (մի բաժակ գինի է դատարկում)։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Սիլանս։ Ես պար գալ եմ ուզում։

ՀԻՒՐ։ Աֆարիմ, աֆարիմ, մաշալլա, մաշալլա։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ (նեղուանոց աղմուկի մէջ ոտքի է կանգնում մի ձեռին շիշը, միւսում բաժակը։ Երաժիշտներին) Աղա, Թրինգի ածեցէք (երաժիշտները նուագում են։ Սերգեյ-բէգը պարում է երկու բոպեի չափ)։

ՀԻՒՐ։ (ոմանք ծափ են տալիս, ոմանք ջրմա են զարկում, իսկ մի երկուսը դանակներով ներդաշնակօրէն զարկում են շիշերին։ Պէտք է այս բոլորի մէջ պահպանել որոշ ներդաշնակութիւն)։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ (դադարելով պարել, յոգնած, քրտինքը սրբելով, նստում է տեղը եւ իսկոյն ոտքի ելնում) Ղասպադա։

ՀԻՒՐ։ Մի լաւ կենաց, մի լաւ կենաց, ծարաւ ենք։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Սիլանս, Ղասպադա, էքստրնիյ։ Զա։

ՀԻՒՐ։ Զա։

ՍԷՐԳ. ԲԷԳ։ Ըղդարովիե։

ՀԻՒՐ։ Ըղդարովիե։

ՍԷՐԳԷՅ ԲԷԳ։ Նաշեղօ։

ՀԻՒՐԵՐ։ Նաշեղօ։

Ս. Բ. Օբշչի։

Հ. Օբշչի։

Ս. Բ. Կամպանի։

Հ. Կամպանի։

Ս. Բ. Հափ։

Հ. Հափ։

Ս. Բ. Հափ։

Հ. Հափ։

Ս. Բ. Հափ։

Հ. Հափ։

Ս. Բ. Հուռա։

Հ. Հուռա։

Ս. Բ. Հուռա։

Հ. Հուռա։

Ս. Բ. Հուռա։

ՀԻՒՐԵՐ։ Հուռա։ Ապրի մեր Թամադան, ապրի մեր Թամադան։

Ա. ՀԻՒՐ։ (Տղամ. հարբել է, ոտքի է կանգնում երերալով)։ Ես ճառ եմ ուզում ասել։

ՇՊՊԱՆ։ Հաստ գլխիդ տուած, լոլի լոլի ես անում կանգնած տեղդ, նստիր։

Ա. ՀԻՒՐ։ (Տղամ.) Ճառ։

ՀԻՒՐ։ Յետոյ։ (Հարբածին նստեցնում են)։

ԵՐԱԺ։ (շարունակում են մեղմ եղանակ նուագել)։

Բ. ՀԻՒՐ։ (տղամ. հարբած է, ոտքի է կանգնում երերալով)։ Ես ուզում եմ մուխամբազ ասել։ (մեծ եւ կարմրակապոյտ քիթը ցցում է օդի մէջ)։

ՇՊՊԱՆ։ Հը, դու էիր պակաս քո բաղբմջան քթով։ Նստիր տեղդ, տընդըլ պուպուզ։

ՀԻՒՐ։ (նստեցնում է Բ. հիւրին) Նստիր, նստիր,

ՍՈՒՍ։ (Սուսամբ)։ Քանի դրանք ուրախանում

են, այնքան ես տխրում եմ։ Սուսամբար, Սուսամբար, ինձ մի վատ բան է պատահելու, կտեսնեմ։

ՍՈՒՍԱՄԲ։ Ա՛հ, հոգիս բերանս բերեցիր քո ախ ու վախով։

ՌՈՒՍՏ։ (խաչեղբորը) Աշխատիր, որ շուտ գնան այդ մարդիկ։

ԽԱՉ. Իսկոյն, իսկոյն։

ՍԷՐԳ. Բ։ Ղասպադա, մէկ էլ խմենք թագաւոր թագաւորու կենացը և ասենք. Աստուած շնորհաւոր անէ։

ՀԻՒՐ։ Ամեն, ամեն։ Թագաւոր թագաւորու կենացը, հուռա։

Ա. ՀԻՒՐ։ (տղամ. երգելով) Մեր թամադան հարբած է, հարբած է։

ՀԻՒՐ։ Սուս, Սուս։

ՍԷՐԳ. Բ։ Ես վերջացրի։

ԽԱՉ։ (ոտքի ելնելով) Աղա թամադայի կենացը։

ՌՈՒՍՏ։ (ոտքի կանգնելով) Սէրգէյ բէգ, շատ շնորհակալ եմ, շատ։

ՀԻՒՐ։ Հուռա, աղա թամադայի կենացը։ (վեր են կենում)։

ՈՏՆԱՒՈՐՆԵՐ։ (արագ արագ սեղանները քաշում են պատերի տակ եւ բեմը լայնացնում։

Բ. ՀԻՒՐ։ (տղամ. երաժիշտներին) Ղայթաղի ածեցէք։

ԵՐԱԺ։ (լեզգու պարերգ են նւագում)։

ՀԻՒՐԵՐ։ (երկու սեռից հերթով պարում են)։

ՍՈՒՍ։ (Սուսամբարի օգնութեամբ քաշել է մի անկիւն, սակայն միշտ առանսենի մոտ) Էգուց կգնամ մօրս տեսնելու։

ՍՈՒՍԱՄԲ։ Անպատճառ։ Բան ունիս ասելու։

ՍՈՒՍ։ Համբուրիր նրան, սիրա տուր, ասա, որ ուրախ եմ, բաղդաւոր։

ՍՈՒՍԱՄԲ։ Եւ շուտով հօրս էլ կուրախացնեմ, չէ՞։

ՍՈՒՍ։ Այո, այո, Սուսամբար, թող հանգիստ լինի. ես անմեղ եմ։ Յետոյ կգամ ինձ մոտ։ Մենակ մի թողնիր ինձ, Սուսամբար, ես կարող եմ խելագարուել։

ՍՈՒՍԱՄԲ։ Չեմ թողնիլ, մի վախենար։ Բայց երեսդ սկսիր տխուր ցոյց չտաս։ Վաղը չէ միւս օրը կգամ քեզ տեսութեան։ Դէ, մնաս բարով։ (համբուրում է եւ աջ կողմի դռների մոտ ստանալով ջարդոյը պատանուց, գնում է խորքի դռներով)։

ՀԻՒՐ։ (Պարերը վերջացնելուց յետոյ, սկսում են ցրուել։ Կանանցից ոմանք համբուրում են Սուսանին, մի քանի պառաւ կանայք հետաքրքրուած բարձրացնում են Սուսանի քողը։ Ոմանք հիանում են նրա գեղեցկութեամբ, ոմանք դժգոհութեան նշաններ են անում։ Տղամարդիկ սեղմում են Ռուստամի ձեռը)։

ՍՄԲ։ (մօտենում է Սուսանին եւ հետը համբուրում)։

ՍՈՒՍ։ (փաթաթում է Սմբատի պարանոցին եւ դառնագին հեկեկում)։

ՍՄԲ։ Լաւ, Սուսան, երեխայ մի լինիր, սիրա տու, դու բաղդաւոր ես։

ՍՈՒՍ։ Ոչինչ, ոչինչ։ Մամային չասես, որ լաց եղայ։

ՇՊՊԱՆ։ (մօտենում է Սուսանին Սանամի հետ) Աղջի, լաց լինելս ո՞րն է։ Էէ, չէ, դա չսազեց այսօրուայ օրին։ Բոյիդ Շպպանիկը մատաղ։ (Համբուրում է, Սուսանին) Գեօղալների գեօղալ, խանումների խաթուն, տես ինչ տուն եմ բերել քեզ։ Խանի Պողոսի աղջիկն էլ այսպիսի տուն չի տեսել։ Դէհ, մնաս բարով, աչքիս լոյս։ (Սանամին) Էգուց կգամ։ Խալաթս պատրաստիր։ (գնում է խորքի դռներով, պարելով եւ ջրմա զարկելով)։

ՌՈՒՍՏ։ (փող է տալիս երաժիշտներին եւ Սմբատին ուղեկցում է, նրա հետ դուրս գալով խորքի դռներով)։

ՄԻ ԵՈՒՄԲ ՀԻՒՐԵՐ։ (Երաժիշտներին պատուիրում են նուագելով դուրս գալ եւ գնում են նրանց հետ խորքի դռներով)։

ԵՐԱԺԻՇՏ։ (այդ խմբի հետ դուրս են գալիս խորքի դռներով, նուագելով։ Բաւական երկար ժամանակ լսւում է նուագածութիւնը, կամաց կամաց թուլանալով)։

ՍԱՆԱՄ։ (Ս ուսանին)։ Դէ, գնանք բալաս, հանգստացիր։ (տանում է աջ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ 5.

Ռեմի վրայ մնում են առաջին, երկրորդ եւ երրորդ տղամարդ նիւրերը։

Գ. ՀԻՒՐ։ Գնանք, մենք ենք միայն մնացել։

Ա. ՀԻՒՐ։ (հարբած) Ես էլի ուզում եմ կոնծել։

Բ. ՀԻՒՐ։ Ես էլ. էյ, գինի բերէք։ Բայց այստեղ ոչ ոք չկայ։

Գ. ՀԻՒՐ։ Դրսումն են քէֆ անում, գնանք։

Ա. ՀԻՒՐ։ (բարձր) *Գինի։*

Գ, ՀԻՒՐ։ Մի քիչ էլ խմէք, լեզուներդ էլ աւելի կքացուի սաեր փչելու համար։

Բ. ՀԻՒՐ։ Ամուս։ (բռունցքը բարձրացնելով) *Էյ, ես սուտ ասող չեմ։ Ուզում էր հարսին ձեռքից խլել ու փախցնել։*

ՏԵՍԻԼ 6.

Նոյնք եւ Ռուսամ

ՌՈՒՍ։ (Ներս է գալիս խորքի դռներով, կրծքից վերցնում է կանաչ կարմիր ժապաւենները, խնամքով ծալում է մի կողմ դնում, Ուշացած հիւրերին

տեսնելով, կամենում է մօտենալ, բայց լսելով Բ. հիւրի վերջին խօսքերը, կանգ է առնում եւ ականջ դնում)։

Ա. ՀԻՒՐ։ Ես քեզ ասում եմ բանը պրծած է, դու էլ ասա. «հա պրծած է»։

Բ. ՀԻՒՐ։ Եթէ այդպէս լինէր, աղջկան կտայիմ Սէյրանին։

Ա. ՀԻՒՐ։ (ծիծաղում է) *Հը, հը, հը, յիմար ես, յիմար։ Եթէ Սէյրանին տայիմ, ամենքը պիտի ասէին «կոտրած ամանը կոտրողի վզին կապեցին»։*

Բ. ՀԻՒՐ։ Իսկ հիմա խայտառակութիւնը պարտկել են, այ քեզ տանձի կոթ։

Գ. ՀԻՒՐ։ Իմ կարճ խելքով այդ բոլորը սուտ է, զուր բամբասանք։

Ա. ՀԻՒՐ։ Գլուխդ դատարկ է, այ ինչ կասեմ քեզ։ Երեք օրից յետոյ կտեսնես Ռուստամի սիրուսիֆաթը։

ՌՈՒՍ։ (ցնցւում է եւ դողում յուզմունքից) *Տէր, մեղայ քեզ Աստուած։*

Գ. ՀԻՒՐ։ (նկատել է Ռուստամին, ընկերներին կամացուկ) *Սուս, նա այստեղ է։* (բարձր) *Գնանք։*

Բ. ՀԻՒՐ։ (սեղանները նայելով) *Գինի չբերեցէք։*

ՌՈՒՍ։ (առաջ է գալիս) *Համեցէք, նստեցէք, ես կբերեմ գինի։* (ձայնը դողում է յուզմունքից)։

Ա. ՀԻՒՐ։ Չէ, առանց երաժիշտների համ չունի։ Աստուած շնորհաւոր անէ։ Հարիֆ ես, Ռուստամ աղա, հարիֆ։ Բարի գիշեր (գնում է խորքի դռներով)։

Գ. և Բ. ՀԻՒՐ։ Բարի գիշեր (գնում են խորքի դռներով)։

ՏԵՍԻԼ 7.

Ռուստամ եւ Սանամ

ՌՈՒՍՏ։ (ուշացած ճիւրերին ուղեկցելով մինչեւ խորքի դռները, յետ է գալիս շփոթուած, այլայլուած։ Ձեռը յենում է սեղանին, մի քանի վայրկեան մտածում, ապա արագ քայլերով մօտենում է աջ կողմի դռան եւ դեպի միւս սենեակ) *Մայրիկ։*

ՍԱՆԱՄ։ (բեմի ետեւից) *Այստեղ եմ։* (ուրախ դեմքով գալիս է աջ կողմի դռներով) *Ի՞նչ հարս է, ինչ հարս։ Մարալ է, մարալ։ Ի՞նչ ես ուզում, բոյիդ մատաղ է։*

ՌՈՒՍՏ։ Ո՞ւմ ես բերել իմ առունը։

ՍԱՆԱՄ։ (չնասկանալով Ռուստամի տրամադրութիւնը, ուրախ)։ *Հարս եմ բերել, մատաղ լինիմ, հարս։ Ա՛հ, վերջապէս, Աստուած լսեց աղօթքներս և իղձս կատարեց։ Հիմայ ես բաղդաւոր եմ։*

ՌՈՒՍՏ։ (ձայնը բարձրացնելով) *Ես քեզ հարցնում եմ. ո՞ւմ ես բերել իմ առունը։*

ՍԱՆ։ (շփոթելով) *Այսինքն ինչպէ՞ս թէ ում։*

ՌՈՒՍ։ (աւելի խիստ եղանակով) *Ո՞վ է մտել իմ առաստաղի տակ, ասա։*

ՍԱՆԱՄ։ Ղօնդաղսազանց Բարխուդարի աղջիկը։ Պարկեշտ, խոնարհ, պատուով, Նամուսով Գիւլնազի միակ աղջիկը։

ՌՈՒՍՏ։ Դու լա՞ւ ես ճանաչում այդ աղջկան։

ՍԱՆ։ Եթէ ծառը պտուղից է ճանաչւում, պտուղն էլ ծառից է ճանաչւում։

ՌՈՒՍՏ։ (տանջանքով) *Փթած է, մայր, փթած է այդ պտուղը։*

ՍԱՆ։ (երկիւղից մի քայլ յետ կանգնելով) *Ի՞նչ ես ասում, որդի, լաւ կշռիր խօսքերդ։*

ՌՈՒՍՏ։ Այս բոպէին այստեղ երեք հոգի խօսում էին նրա մասին։ Ես մի քանի խօսքեր լսեցի, ասեղների պէս ցցւեցին սրտիս մէջ։ Մայր, դու ինձ խաբել ես։

ՍԱՆ։ Սուս, սուս արա։ Ես քեզ համար հարս եմ բերել, որ ձիւնի աչս ճերմակ է, արևի պէս պայծառ։

ՌՈՒՍՏ։ Բայց նրա մասին էին խօսում, մայր, ականջովս լսեցի։

ՍԱՆ։ Ի՞նչ էին ասում։

ՌՈՒՍՏ։ Չեմ կարող ասել, լեզուս չի զօրում. բայց լաւ բան չէին ասում, մայր, լաւ բան չէին ասում։

ՍԱՆ։ Թող ինչ ուզում են դուրս տան, մե՞զ ինչ։ Զար լեզուները ո՞ւմ չեն բամբասում։

ՌՈՒՍՏ։ (տանջանքով) *Բայց ես ո՞ւմ հաւատամ, ասա, ո՞ւմ։*

ՍԱՆ։ Քո մօրը։

ՌՈՒՍՏ։ Դու խելօք կին ես, մայր, այդ գիտեմ, բայց դիւրահաւան ես, քեզ խաբելը դժւար չէ։

ՍԱՆ։ Հարցրու Շղպանիկին, նա ամէն տուն մտնում է։ Նա մեր քաղաքի բոլոր աղջիկներին ճանաչում է։

ՌՈՒՍՏ։ Այդ շունը հինգ մանէթի համար իւր հոգին կծախի սաթայէլին։

ՍԱՆ։ (դառը կշտամբանքով) *Մեղք մի գործիր, որդի, լաւ չէ։*

ՌՈՒՍՏ։ Ես քեզ ասում եմ՝ հարսդ մի արատ ունէ։

ՍԱՆ։ (վճռական եւ համարձակ) *Ի՞նչ արատ, ասա էլի։*

ՌՈՒՍՏ։ Ես ի՞նչ գիտեմ։ Տասնեօթ տարի է ես այս քաղաքից հեռացել եմ։ Ո՞ւմ եմ ճանաչում, ոչ ոքի։ Մայր, դու պիտի զգոյշ լինէիր, շատ զգոյշ։

ՍԱՆ։ Ռուստամ, ես աղջիկների մէջ աղջիկ եմ

Ջոկել քեզ համար, որ մեր քաղաքի գոհարներից մէկն է։ Աղքատ բայց պատուաւոր ընտանիքից։ Հարցրու ում ուզում ես Ղօնդախսազանց Բարխուդարի մասին։ Կիմանաս թէ ինչ մարդ է նա։ Նրա նման ազնիւ, նրա նման նամուսով մի ուրիշը չկայ այս քաղաքում։

ՌՈՒՍՏ։ Ես հաւատում եմ քեզ, մայր, բայց լսիր, ես իմ կեանքի մեծ մասը Դաղստանումն եմ անցկացրել, չէչէնների, զազի ղմուխցիների, աւարցիների մէջ։ Ես լեզգի եմ։ Լեզգին կարող է ամէն բան տանել, բացի անպատուութիւնից։ Ես իմ նամուսի գերին եմ, մայր, ես չեմ կարող տանել ոչ մի արատ ինձ վրայ։ Ասա, ինքներ էին իմ հարսանիքի վրայ յարձակուողները։

ՍԱՆ։ Ես ինչ գիտեմ, որդի, անտեղ էի՞, որ իմանամ։

ՌՈՒՍՏ։ Բայց ինչո՞ւ յարձակուեցին, ի՞նչ էին ուզում։

ՍԱՆԱՄ։ Հանգստացիր, որդի, հանգստացիր։ Էգուց բանը կպարզուի, կիմանանք։ Երևի, փողոցային լակոտներ էին։ Ի՞նչ կան մեր քաղաքում։

ՌՈՒՍՏ։ Ոչ, մայր, ոչ, այստեղ մի բան կայ, որ ամենքը գիտեն, բացի ինձանից։ Դու էլ գիտես, դու էլ, և թագցնում ես ինձանից։ Լսիր, մայր։ (բռնում է նրա ձեռը ամուր)։ Ես կարող եմ մարդ սպանել։ (բաց է թողնում Սանամի ձեռը եւ հեռանում)։

ՍԱՆ։ Աստծու սիրոյն, խելքդ գլուխդ հաւաքիր։ Ես քո մայրն եմ, օտար չեմ։ Ծնողն իւր զաւակի թշնամին չի կարող լինել, այն էլ միանիկ զաւակի։

ՌՈՒՍՏ։ Ո՛չ ոչ, համբերել չեմ կարող։ Ես պէտք է հենց այս գիշեր իմանամ ամէն բան։ (ուզում է գնալ աջ դռներով)։

ՍԱՆԱՄ։ Ո՞րտեղ ես գնում։

ՌՈՍՏ։ Գնում եմ նրա հետ խօսելու։

ՍԱՆԱՄ։ (դրական, խիստ) Չի կարելի։

ՌՈՒՍՏ։ Ինչո՞ւ։ (ուզում է գնալ)։

ՍԱՆԱՄ։ (անցնում է արագ եւ կանգնում աջ դռան առջեւ պաշտպանողական դիրքում) Չի կարելի, ասում եմ, նա դեռ պատրաստ չէ քեզ հետ խօսելու։

ՌՈՒՍՏ։ Մայր, այժմ ես նրա ամուսինն եմ օրէնքով։

ՍԱՆԱՄ։ Ոչ, դու դեռ նրա ամուսինը չես։ Անկարելի է։ Դու նրան կտեսնես հարսանիքիդ երրորդ գիշերը։ Դա մեր պապերի և տատերի աւանդութիւնն է։ Ես քեզ չեմ թողնիլ նրան ոտնատակ անել։

ՌՈՒՍՏ։ (յուսահատուած) Անիծուեն ձեր օրէնքները, անիծուեն ձեր աւանդութիւնները։ Երեք օր պէտք է սպասեմ, մինչ որ նրանից լսեմ ճշմարտութիւնը. ես կխելագարուեմ։

ՍԱՆԱՄ։ (հանդարտ մօտենում է Ռուստամին, մի քանի վայրկեան լուռ նայելուց յետոյ, ձեռը դնում է նրա ուսին։) Տեսնում ես այս ճերմակ մազերը, որդի, (ճուբխիի տակից դուրս է բերում ալեխառը գլխակը) Նրանք քեզ համար են ճերմակել։ Աչքս ճանապարհիդ ջուր է կտրել, եկեղեցիների շէմքերն եմ մաշել, սրբերի դերեզմաններին եմ քսել ճակատս։ Աղերսել եմ երկնաւորին այսօրւայ օրին արժանանալու, վերջապէս արժանացել եմ։ Ի՞նչ ես ուզում հիմա, սեացնե՞լ օրս։ Մի՛ արա, որդի, մի՛ արա, խեղճ եմ։ (Մինթանայի գերպանից դուրս է բերում թաշկինակը եւ աչքերը սրբում, Ռուստամից հեռանալով)։

ՌՈՒՍՏ։ (արմունկը սեղանին յենած, ճակատը ձեռին դրած, լռել է, մտազբաղ։ Ինչ լռութիւն։ Զրոյցում է իւր կոպտութեան մասին). Ների՛ր, մայր, ես մի փոքր չափն անցայ։ Ով գիտէ, կարելի է այդ մարդկանց խօսակցութիւնը սխալ հասկացայ, կարելի է ուրիշի մասին էին խօսում։ Օ, երանի այդպէս լինէր։ (վեր է կենում) Լաւ, ես կնպատակուեմ ձեր աւանդու-

թիւններին, կսպասեմ երեք օր, միսս առաքիներովս կկռծոտեմ, կսպասեմ։ (յանկարծ նորից յուզելով) *Բայց վայ ինձ, եթէ իմ հարսն այն չէ, ինչ որ դու ես ասում, վայ այն ժամանակ։*

ՈԱՆԱՄ։ Թող վայը դայ մօրդ գլխին, եթէ քեզ խաբել եմ։ Համբերիր և կտեսնես։

ՌՈՒՍՏ։ Գնա, մայր, գնա նրա մօտ։ Թող ինձ մենակ։

ՍԱՆԱՄ։ Ո՞վ կարող էր ասել, որ ուրախ օրս ոգով պիտի վերջացնեմ։ (Աչքերը սրբելով, ճանդարտ քայլելով գնում է աջ կողմի դռներով)։

ՌՈՒՍՏ։ (նայում է Սանամի ետեւից, ուսերը տարակուսանքով շարժում, ճառաչում եւ, նստելով արոռի վրայ, ընկնում է մտածմունքների մէջ)։

Վ. Ա Ր Ա Գ Ո Ց Ը

ԱՐՔԱԴԻԱՅ ԵՐԲՈՐԴ

ՍԼԷՅՊԱՆԻ ՎՐԷԺԸ

Ռուստամի խանութը Թէյմուր-Խան-Շուրա քաղաքում։ Բեմը ցած միջնորմով բաժանւած է երկու մասի։ Այդ միջնորմը, խորքից սկսելով, հասնում է մինչև բեմի կէսը, այնպէս, որ չի խանգարում տեսարանի միութիւնը։ Աջ կողմը ներկայացնում է բուն խանութը, լի ամեն տեսակ ապրանքներով, սկսած մահուդեղէնից մինչև ուտելիքներ և ըմպելիքներ։ Աջ պատի վրայ շինած դարակները ծանրաբեռնւած են այդ ապրանքներով։ Նոյնն է և պատի աւջևի «զայստոյկան», որի վրայ խառն ի խուռն դարսած են ապրանքներ։ Խորքում, դէպի աջ, մի մեծ ապակեայ ցուցափեղկ (витрина), *որի ապակեայ դարակների վրայ դարսած են գոյնզգոյն ըմպելիքներով լիքը շիշեր։ Այդ ցուցափեղկի քով, դէպի ձախ, մի դուռը, որ տանում է դէպի փողոց։ Ձախ կողմը բեմի ներկայացնում է կէս գինետուն։ Մէջ տեղ մի կլոր սեղան առանց ծածկոցի, քովը մի քանի նստարաններ* (таборетки)։ *Ձախ պատի մէջ դուռը, որ տանում է դէպի Ռուստամի ննջարանը և խոհանոց։ Նոյն պատի վրայ, դէպի խորքը, կախած է տեղական գորգ, որի վրայ քարշ են արած մի սև եաթաղանի, մի լեզգու սպիտակ շուլլայի երկայն մազերով, մի զոյգ սարճանակ, կէս, ալծաթապատ կոթերով, մի չափաբեր երկայն հրացան։ Խորքի պատի մէջ մի լուսամուտ փակ փեղկերով։ Այդ լուսամտի միջով անցկացրած է մէջ տեղ վառող երկաթեայ վառարանի ծխնելոյզը դէպի փողոց։ Բեմը լուսաւորւում է երկու հնաձև լամպարներով, որոնցից մեկը կախած*

է առաստաղից Հիզբասենեակ—գինետան մէջ, միւսը խանութում։ Բացի դրանցից երկու շարժական լամպարներ, մէկը գաստոյկայի, միւսը կլոր սեղանի վրայ։ Գաստոյկայի վրայ եռացող սամովար, վրէն թէյաման։ Ծննդեան երեկոյ է։

ՏԵՍԻԼ 1.

Համբարձում, լեռոյ Զաւադ եւ Ռուսսամ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ։ (խանութի գործակատար, որ միեւնոյն ժամանակ եւ ծառայի պաշտօն է կատարում։ Քանոնիկոգ տարեկան երիտասարդ է սափրած երեսով եւ կարճ խուզած մազերով։ Հագած է երկայն արխալուղ, վրեն կապած է շատ բարակ կաշէ գօտի, որի ծայրը հասնում է մինչեւ ծնկերը։ Ոտներին Դաղստանի ջուստեր։ Վարակոյրը բարձրանալիս՝ գաստոյկայի մօտ կանգնած՝ նուկ է կոտրում եւ շամփուրներին անցկացնում խորովելու։ Հանդարտ ձայնով երգում է պարսկական եղանակով)։

Դաղ, ինձի որսացին,
Շամփրի վրայ խորովեցին.
Դաղ, ինձի լափեցին,
Ոսկորներս ձգեցին։

ԶԱԻԱԴ։ (Ներս է մտնում խորքի դռներով, երբ Համբարձումը դադարել է երգել։ Երեսունուհինգ տարեկան տղամարդ է երկայն ու լայն միրուքով, բաւ ուռքերով։ Հագնուած է այնպէս, ինչպէս ռուս լեզգի։ Գլխին սեւ չուլյանի, ուսերին եափնջի, որի տակից երկայն ջուխայ եւ գրեթէ նոյն երկայնութեամբ արխալուղ, ոտներին ջուստեր եւ կրկնակոշիկներ։ Մէջքին կապած է ջուխայի տակից հասարակ դաշոյն։ Խօսում է անվրդով,

ձեւերն ու շարժումները ծանրաբարոյ եւ հպարտ են։ Եափնջին ծածկած է գլուխով)։ *Շնորհաւոր ծնունդ Քրիստոսի։* (Համբարձումին նշխարք է տալիս։ Եափնջին վերցնում է ուսերից, ծիւնը թափ է տալիս դռան մօտ եւ բերում կախ է անում միջնորմի վրայ խանութի կողմից։ կրկնակոշիկները քաղնում է անկիւնում)։

ՀԱՄԲ։ Օրհնեալ է ծնունդ Քրիստոսի։ (կրօնական երկիւղածութեամբ նշխարքը բերանն է դնում)։

ԶԱԻԱԴ։ Ո՞վ կայ։

ՀԱՄԲ։ Մենակ է։ Ձիւն է գալիս։

ԶԱԻԱԴ։ Բուք է սկսում։

ՀԱՄԲ։ Իսկ և իսկ Ծննդեան երեկոյ է։

ՌՈՒՍՍ։ (գալիս է ձախ կողմի դռնով։ Հագած է սեւ ոչ երկայն արխալուղ, վրեն դեղնագոյն ջուխայ ուղղի բրդից։ Գլխաբաց է։ Մուայլ դէմքը պարզւել է։ Ուրախ ու զւարթ)։ *Զաւադ։*

ԶԱԻԱԴ։ Շնորհաւոր ծնունդ Քրիստոսի։ (նշխարք է տալիս)։

ՌՈՒՍՍ։ (նշխարքը բերանը դնելով) *Օրհնեալ ծնունդ Քրիստոսի։*

ԶԱԻԱԴ։ Ինչու եկեղեցում չէիր։ (անցնում է միջնորմի միւս կողմը եւ նստում սեղանի քով)։

ՌՈՒՍՍ։ Ղազի-Ղմուխից մի քանի ծանօթ լեզգիներ էին եկել ապրանք առնելու, չկարողացայ գալ։ Այ տղայ Համբարձում, չայ բեր։

ԶԱԻԱԴ։ Ի՞նչ լուր ունիս մեր քանդւածից։

ՌՈՒՍՍ։ Հէնց այս բոպէին մօրս նամակն էի կարդում։ Էլի մի թեթեւ երկրաշարժ է եղել (նստում է)։

ԶԱԻԱԴ։ Անիծւին այդ երկրաշարժները, որ մեզ օտար երկրներ գցեցին։

ՀԱՄԲ։ (բերում է երկու բաժակ թէյ եւ գնում կլոր սեղանի վրայ)։

ՌՈՒՍՍ։ Քանի տարի է չես եղել հայրենիքում։

ՋԱԻԱԴ։ Առաջիկայ Զատկին տաս տարին կլրանայ։ (թեյ է խմում)։

ՌՈՒՍՏ։ Ձե՞ս կարօտել (թեյ է խմում)։

ՋԱԻԱԴ։ Ո՞վ ունիմ այնտեղ, որ կարօտեմ։

ՌՈՒՍՏ։ (հառաչելով) Ահ, եթէ թեւեր ունենայի այս բոպէիս կթռչէի այնտեղ։

ՋԱԻԱԴ։ Այդպէս շո՛ւտ։ Երեք ամիս չկայ այնտեղից գալդ։

ՌՈՒՍՏ։ Այո, բայց այժմ այդ երեք ամիսը ինձ երեք տարուց ծանր է թւում։

ՋԱԻԱԴ։ (ենգամիտ խորհրդաւորութեամբ) «Այժմ» (բարեկամաբար) Հասկանում եմ, բարեկամ։

ՌՈՒՍՏ։ (լուրջ) Մի ծաղրիր, Զաւադ, դու պսակւած չես, դժւար թէ հասկանաս ինչքան քաղցր է ընտանիքը։ Գործերս չթողին, որ այս ջրօրհնէքն այնտեղ անցկացնեմ, բայց Զատկին անպատճառ գնալու եմ։

ՋԱԻԱԴ։ Որ այդպէս կարօտում ես, բեր ընտանիքդ այստեղ։

ՌՈՒՍՏ։ Մայրս չի ուզում գալ, իսկ նրան չեմ կարող մենակ թողնել։

ՋԱԻԱԴ։ Այդ պառաւները իրանց հայրենիքի աւերակներն էլ են պաշտում։

ՌՈՒՍՏ։ Այն օրից, որ պսակւել եմ, ինձ համար էլ սիրելի են դարձել այդ աւերակները։

ՋԱԻԱԴ։ Ահա թէ ինչ։

ՌՈՒՍՏ։ (ոգեւորւելով) Ես կարող եմ ասել, Զաւադ։ որ չկայ կեանք առանց ընտանիքի, չկայ ապրուստ առանց կնոջ։

ՋԱԻԱԴ։ Տեսնում եմ, տեսնում եմ։ Առաջ դու անխօս, մռայլ մարդ էիր. այժմ բիւլբիւլ ես դարձել։ (հառաչելով) Երանի քեզ։

ՌՈՒՍՏ։ Պսակւիր, Զաւադ, պսակւիր, ընտանիքը քաղցր բան է։

ՋԱԻԱԴ։ Այո, քաղցր է, բայց չար մարդիկ այդ սրբութիւնն էլ են ապականում։

ՌՈՒՍՏ։ (յուզւելով) Ահ, մի յիշեցնիր ինձ այդ, Զաւադ, մի յիշեցնիր։ Ես իմ քաշած տանջանքները քեզ պատմել եմ։ Այդ երեք օրը ինձ թւում էր, որ աշխարհը գլխիս խաւարւեց։

ՋԱԻԱԴ։ Ինչ երեխայութիւն էր քո կողմից ուշադրութիւն դարձնել կեղտոտ ու հարբած մարդկանց բարբաջանքներին։

ՌՈՒՍՏ։ Եւ ո՞ւմ էին զրպարտում, Աստուած իմ, Սուսանին, իւր նամուսի գերի Բարխուդարի աղջկան։ Մարդ պետք է հոգի չունենայ այնպիսի մի անմեղ հրեշտակի վրայ կեղտ գցելու համար։ Էհ, Տէրը նրանց հետ, հարբած էին, իրանք էլ չգիտէին ինչ էին խօսում։ Այժմ ես հաւատում եմ իմ կնոջը։ Հաւատում եմ ինչպէս մի սրբի և սիրում։ Այժմ ինձ ոչ ոք և ոչինչ չի կարող խաբել։ Այ աղայ, Համբարձում, էլի չայ բեր։ (ծխում է ծխախոտ երկայն եղեգնեայ մուռնդ-ղտուկով)։

ՋԱԻԱԴ։ Ես էլ չեմ ուզում։

ՀԱՄԲ։ (նայելով իւր գրպանի ժամացոյցին) Ինչո՞ւ են ուշանում մեր հայրենակիցները։ Ես քաղցած եմ։ Զուկը դիր կրակի վրայ, Համբարձում։

ՀԱՄԲ։ Էս սհաթին (ձուկ անցկացրած շամփուրները վերցնում է եւ գնում ճախ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ Չ.

Նոյնք եւ Մարտիրոս

ՄԱՐՏԻՐՈՍ։ (Գալիս է խորքի դռնով։ Նիհար, փոքրահասակ մարդ է անորոշ տարիքով։ Վրեն այն-

քան հագուստ կայ, որ երեք անգամ աւելի հաստ է երեւում։ Ներս մտնելով, դուռը խնամքով ծածկում է, ապա եափնջին վերցնում, ձիւնը թափ է տալիս եւ հանդարտ քայլ է անում միջնորմի վրայ)։ *Բարով ձեզ։*

ՌՈՒՍՏ։ (լսելով դռան ձայնը առաջ է եկել Մարտիրոսին ընդունելու) Ասածու բարին։

ՄԱՐՏ։ Դրսում մի արհաւիրք է սկսել, որ գազանը գազանութիւնով տնից դուրս չի գալ (հանում է հաստ մաշկեայ ձեռնոցները, ապա խիստ մաշուած յայն վերարկուն, այնուհետեւ մի լայն ջուխայ, յետոյ բաշլըղը)։ *Ձիւնը կարկտի պէս է զարկում մարդու երեսին։ Մարմինս փետացել է* (սկսում է բաց անել վզին փաթաթած երկայն կարմիր շարֆը)։ *Ասացի գնամ ապա Ռուսաստանի մօտ վայ է, չգնամ վայ է։ Եթէ գնամ կարող եմ մրսել, առանց այն էլ զիւքամ ունիմ։* (երեք անգամ հագնում է) *Իսկ եթէ չգնամ, ապա Ռուսաստանը կարող է նեղանալ։* (բաց է անում երկրորդ ջուխայի վրայ կապած հաստ ասուեայ գոտին)։

ՋԱՒԱԴ։ Հէր օրհնած, էլ դուքանումդ հին փալաս մալաս չկաթ, որ վրէդ թափէիր։

ՄԱՐՏ։ (ուշադրութիւն չդարձնելով Ջաւադի խօսքերին) *Երկու մեծ կրակի մէջ էի։* (բաց է անում մի երկրորդ գոտի, ապա հանում է բաղիրեայ լայն կրկնակոշիկները, որոնց տակից ուրիշ կօշիկներ) *Նստեցի, մտածեցի, վերջն ինքս ինձ ասացի. «գնալու եմ, ինչ որ լինելու է թող լինի»։ Եւ եկայ։* (վերջին բառի հետ երեւան է գալիս կարմ արխալուղով, կաթն պիջակով, սեւ Ֆուրաշկայով մի հիհար, փորը մէջքին կպած մարդ)։

ՌՈՒՍՏ։ Շատ ուրախ եմ։ Մի բաժակ չային ինչ կասես։

ՄԱՐՏ։ (մօտենալով վառարան, ձեռները տաքացնում է) *Վատ չէր լինիլ։*

ՌՈՒՍՏ։ Կոնեակով։

ՄԱՐՏ։ (տարսափած) *Նոյեան փրկի՛չ։ Ինձ։ Ես վաղուց եմ ձեռք քաշել դժոխքի ջրերից։* (նստում է սեղանի քով, կանխապէս ս եղմերով Ռուս տամի եւ Ջաւադի ձեռքը)։

ՌՈՒՍՏ։ (Մի բաժակ չայ է լցնում Եւ դնում Մարտիրոսի առաջ)։

ՄԱՐՏ։ (Ջաւադին) *Ն՛ղբայր Ջաւադ, ինչո՞ւ է մեզ կանչել եղբայրը Ռուսաստանը այս զարհուրելի գիշերին։*

ՋԱՒԱԴ։ Կանչել է, որ այս ապիրատ երեկոն միասին անցկացնենք։ Չէ՞ որ Ծննդեան երեկոյ է։

ՄԱՐՏ։ (զերմեռանդօրէն) *Գիտեմ, գիտեմ։ Այս երեկոյ մարդոյ որդին ծնուել է Բէթղէհէմում, ախուռի մէջ։* (դէպի վեր նայելով) *Տէր։*

ՋԱՒԱԴ։ (առաջարկելով մի կտոր նշխարք) *Ա՛ռ, պատ բաց տար։*

ՄԱՐՏ։ Եհովան ների քեզ, եղբայր Ջաւադ, մինթէ ես պաս եմ պահում։

ՋԱՒԱԴ։ (նշխարքը դնելով իւր բերանը) *Ախ, ես միշտ մոռանում եմ, որ դու լիւթերական ես։*

ՄԱՐՏ։ Նշխարքն ես այն ժամանակ էի ուտում, երբ հեթանոս էի և երեսս խաչակնքում էի։ Այժմ, գոհութիւն երկնաւորին, ես հաւատացեալ բրիստոնեայ եմ։ Բայց Ցիսուսի ծնունդը մենք էլ ենք տօնում. միայն աղօթքով, աղօթքով։ (ձեռներն իրարու կցելով, գլուխը ձեզ ուրեմամբ թեքում է դէպի մէջքը, աչքերը ուղղում է դէպի երկինք) *Աստուած, Աստուած, դու քո մինիկ որդուն վերցրիր, ուղարկեցիք այս փչացած աշխարհը, որ մեզ ազատի գեհենից։ Նա եկաւ մեր մեղքերը հաւաքեց, մի մեծ տոպրակի մէջ ածեց, վերցրեց, տարաւ դժոխքը թափեց։ Մենք ազատուեցինք, բայց հեթանոսները, փարիսեցիները և սադուկեցիները նրան տանջեցին, խաչ հանեցին, ոտները ծակեցին. Նա մեռաւ, թաղուեց, երեք օրից յետոյ յարութիւն առ*

ռաւ, նստեց հրեշտակների թևերի վրայ, բարձրացաւ երկինք, կողքիդ նստեց։ Թող օրհնւի նրա անունը։ Ամեն։ (երեսին չի խաչակնքում) *Այսպէս ենք մենք աօնում Աստծու աօնները։* (սկսում է բեյ խմել երանելի դեմքով)։

ՏԵՍԻԼ Յ.

Նայիմ, Զահանգիր եւ Եգոր։

ԶԱՀԱՆԳ։ (Գալիս է խորքի դռնով։ Հագած է ոչխարի մորթուց մուշտակ, վրեն սեւ չուխայ, տակից կարմիր արխալուղ։ Չուխայի վրայից եափնջի։ Գլխին դրած է կլոր, ցած գդակ, որ ծածկւած է բաշլըղով։ Եափնջին եւ բաշլըղը վերցնելով, բափ է տալիս։ Կարմիր դեմքով, սառողջ, գաւրք տղամարդ է մի քիչ հաստ փորով։ Երեսը սափրած է, բեխերը ոլորած) *Մեռայ, ձեր արևը, մեռայ։ Ձիւն չէ, փոթորիկ է։*

ԵԳՈՐ։ (գալիս է Զահանգիրի հետ խորքի դռնով։ Հագնւած է այնպես, ինչպես Զահանգը։ Բաշլըղը եւ եափնջին բափ է տալիս եւ քաշ է անում միջնորմի վրայ։ Գեղեցիկ դեմքով երիտասարդ է քսանհինգ տարեկան)։ *Քամին Շահդաղից է փչում։ Բարի երեկոյ դարգիմանդներին* (առաջ է գալիս խոշոր քայլերով ձեռ է տալիս ու նստում)։

ԶԱՀԱՆԳ։ Օհո, եղբայր Մարտիրոս, դու էլ այստեղ ես։ Ի՞նչ է ասում Եհովան։ (Ձեռով գարկում է Մարտիրոսի ուսին)։

ՄԱՐՏ։ Կամաց, չայս թափեցիր։

ՌՈՒՍՏ։ Էլ ոչ ոքի չեմ սպասում, դուռը կարելի է կողպել (փակում է խորքի դուռը եւ նիզը գցում)։

ԵԳՈՐ։ Եթէ այս երեկոյ էլ գինի չխմես, եղբայր Մարտիրոս, գլխիդ եմ ածելու։

ՄԱՐՏ։ Սատանայի ջուրը իմ փորը չի մտնիլ։

ԶԱՀԱՆԳ։ Բայց ինչու գարեջուր խմում ես, անիրաւ։

ՄԱՐՏ։ Գարեջուրը գինի չէ։ Սարգիս վարպետն ասում է, որ մեր հաւատացեալ եղբայրները բազելում գարեջուր են խմում (նայելով փակ լուսամտին)։ *Կարծեմ այդտեղից քամի է փչում։ ականջս պաղեց* (տեղը փոխում է)։

ՌՈՒՍՏ։ (աջ կողմից բերում է մի կապոյտ սրփոց եւ զցում սեղանի վրայ)։ *Համբարձումն, փլաւը դամի դրե՞լ ես։*

ՀԱՄԲ։ (այդ միջոցին գալիս է ձախ դռնով։ *Դրել եմ։*

ՌՈՒՍՏ։ Խորովածը բեր, եթէ պատրաստ է։

ՀԱՄԲ։ Աչքիս վրայ։ (զնում է աջ կողմ, զանազան ուտելեղէններ է բերում, դնում է սեղանի վրայ։ Բերում է նաեւ երկու կուլա գինի եւ մի քանի կաւէ գաւաքներ, յետոյ զնում է ձախ կողմի դռնով)։

ՄԱՐՏ։ (Համբարձումի ետեւից)։ *Տես, խորովածը հում չլինի, կարող է վնասել։*

ՌՈՒՍՏ։ (Մարտիրոսի առջեւ դնելով մի շիշ գարեջուր եւ մի բաժակ) *Այս էլ քո Բաղելի հաւատացեալ եղբայրների խմիչքը, գարեջուրը։* (ամենքը նստում են սեղանի շուրջը)։

ԵԳՈՐ։ (մի բաժակ օղի խմելով) *Ափսոս որ ազանդարներ չկան։*

ՌՈՒՍՏ։ Համբարձումին ուղարկեցի, չկարողացաւ գտնել։

ՄԱՐՏ։ Սազանդան սատանան է հնարել, որ մեզ շեղի Աստծու ճանապարհից։ Յիսուսի աշակերտները սազանդա չունէին։

ԶԱՀԱՆԳ։ Եթէ Յիսուսի անունը շատ ես ասում, ես վեր կենամ կորչեմ։ (օղի է խմում)։

ՄԱՏՐ։ (աչքերը ճեղուրեամբ ուղղելով դեպի վեր, ձեռներն իրար կցելով) *Ով Աստուած, ներիր այս հեթա-*

նոսին, որովհետև չի հասկանում թէ ինչ է ասում։ Նա չգիտէ, որ ճշմարիտ քրիստոնեան պարտաւոր է ամեն օր, ամեն ժամ, ամեն դաղդա ի տունջեան և ի գիշերի յիշել քո սուրբ անունը և աղօթել։ Ներիր, Տէր, ներիր։ Ամեն։ (զարթնուր է խմում)։

ՀԱՄԲ։ (ձախ կողմի դռնից բերում է մի շամփուր խորոված ձուկ եւ պանում է Ռուստամի առջեւ)։

ՌՈՒՍՏ։ (Ձուկը շամփուրից ճանում է մի մեծ ափսեի մէջ եւ դնում սեղանի վրայ)։

ՋԱԻԱԴ։ (Մի բաժակ գինի ածելով)։ Տղերք, շնորհաւոր Ծնունդ Քրիստոսի։

ՄԱՐՏ։ Եւ Յիսուսի, որդոյ մարդոյ։

ԱՄԵՆՔԸ։ Օրհնեալ Ծնունդ Քրիստոսի։ (գաւաթները զարկում են իրար եւ խմում)։

ՋԱՀԱՆԳ։ Եղբայր Մարտիրոս, մի Շամախու շիքեասատ ասա։ (ձուկ է ուտում)։

ՄԱՐՏ. Յիսուսի աշակերտները շիքեասատ մի-քեասատ չէին ասում։

ԵԳՈՌ։ Բայց դու առաջ ասում էիր. ես շատ եմ լսել։

ՄԱՐՏ։ Առաջ ես հեթանոս էի։ (ձուկ է ուտում)։

ՋԱԻԱԴ։ Այսինքն, հայ լուսաւորչական։

ՋԱՀԱՆԳ։ Այդ անիրաւը լուսաւորչականներին հեթանոս է անւանում։ (ձուկ է ուտում)։

ՋԱԻԱԴ. Տղերք, գաւաթներդ լեցրէք։

ՋԱՀԱՆԴ։ (Իր գաւաթը լեցնելով) Պատրաստ եմ ծառայելու։

ՋԱԻԱԴ։ Խմենք մեր անբաղդ քաղաքի կենացը։

ԱՄԵՆՔԸ։ Խմենք, խմենք։

ՋԱԻԱԴ։ Աստուած տայ, որ վերջապէս, նրա հողը հանդարտուի, քարը քարի վրայ մնայ։

ԱՄԵՆՔԸ։ Ամեն, ամեն։

ՄԱՐՏ։ Մինչև որ բոլոր հեթանոսները Յիսուսի Աւետարանը չընդունեն, մեր քաղաքը միշտ տակն ու

վրայ է լինելու։ (աչքերը վեր ուղղելով) Տէր, կարծում եմ, որ քո սիրած խօսքն ասացի։

ՋԱՀԱՆԳ։ Եղբայր Մարտիրոս, չլինի թէ քեզ այս կողմերի համար փաստոր են նշանակել։

ԵԳՈՌ։ Երևի։ Գլուխս տարել է իւր քարոզներով։ Շարունակ յորդորում է ինձ աւետարանական դառնալ։

ՄԱՐՏ։ Մեր պարտականութիւնն է ի տունջեան և ի գիշերի աշխատել մոլորեալ ոչխարներին ճանապարհի բերելու (զարթնուր է խմում)։

ՋԱԻԱԴ։ (նորից լեցնելով իւր գաւաթը)։ Տղերք, խմենք մեր դարդիմանդ ընկերոջ կենացը։ Ռուստամ, ապրես և լաւ ապրես։ (բաժակը զարկելով Ռուստամի բաժակին, խմում է)։

ԱՄԵՆՔԸ։ Ամեն, ամեն։ (անում են նոյնը)։

ՄԱՐՏ։ Աբրահամի և Իսահակի Եհովան քեզ պահի պահպանի մեղքերից։

ՌՈՒՍՏ. Շնորհակալ եմ, բարեկամներս։ Շատ ուրախ եմ, որ հրաւէրս ընդունեցիք, եկաք։ Կարօտել էի։ Օտար երկրում մարդու հոգին փառաւորում է իւր հայրենակիցներին տեսնելիս։ Ձեր կենացը։

ԵԳՈՌ։ Տղերք, այսօր ես բազարում մի նոր շամախեցի տեսայ։

ՋԱՀԱՆԳ։ Ո՞վ էր։

ԵԳՈՌ։ Ճանաչեցի։ Մեր հարևան լեզգի Օսմանից ատրճանակ էր գնում։ Զահել տղայ էր, բարձրահասակ, բարակ բարակ բեղերով, դեղնած երեսով։

ԴՐՍԻՑ։ (երկու անգամ զարկում են փողոցի կողմի դուռը)։

ՀԱՄԲ. (գալիս է ձախ կողմի դռնից, բերելով երկու շամփուր խորոված ձուկ)։

ՋԱԻԱԴ։ Կարծես, դուռը ծեծեցին։

ՌՈՒՍՏ։ (շամփուրներն առնելով Համբարձումից) *Տես ով է։*

ԵԳՈՌ։ Ո՞վ պիտի լինի այս սարսափելի եղանակին։

*ԴՐՍԻՑ։ (*նորից երկու անգամ զարկում են դուռը։

ՋԱՀԱՆԳ։ Համբարձում, առաջ հարցրու, յետոյ ներս թող։

ԵԳՈՌ։ (ծիծաղելով)։ *Զահագիրն էլի ցոյց տուեց իր քաջութիւնը։*

ՋԱՀԱՆԳ. Անցեալ տարի մի այսպիսի գիշեր լեզգիները տաններկու հոգով մտան զարաբաղցի Ղահրամանի դուքանը, իրան էլ սպանեցին, եղբօրն էլ, ծառաներին էլ, ապրանքն էլ թալանեցին։

ՄԱՐՏ։ Զգուշութիւնը լաւ բան է։

ԴՐՍԻՑ։ (երրորդ անգամ զարկում են դուռը)։

ՀԱՄԲ։ (մօտեցել է խորքի դռանը)։ *Ո՞վ ես,*

ՌՈՒՍՏ։ Բաց արա, ով որ է։

ՀԱՄԲ։ Դուռը բաց է անում։ Քամին ուժգին թափով ներս է խուժում, բերելով ձիւնի կոյտեր)։

ՄԱՐՏ. Ես կարող եմ մրսել։ (վերարկուն զցում է ուսերին։

ՏԵՍԻԼ 4.

Նոյնք եւ Սէյրան

ՍԷՅՐԱՆ։ (ներս է մտնում եափնջու մէջ փաթաթուած, գլուխն ու երեսը բաշլըղով ծածկած։

ՌՈՒՍՏ։ (վեր է կացել ձիւրին ընդառնելու)։ *Ո՞վ ես, բարեկամ։*

ՍԷՅՐԱՆ։ Աստծու հիւրը։

ՌՈՒՍՏ։ Աչքիս վրայ տեղ ունի ամեն մի հիւր։

ԱՄԵՆՔԸ։ (ոտքի են կանգնում եւ նայում նորեկին)։

ՍԷՅՐԱՆ։ Ղարիբ եմ, մի տեղ կըտաս ինձ։

ՌՈՒՍՏ. (սիրալիր)։ *Ղարիբների համար իմ դռները միշտ բացեն։ Համբարձում, վերցրու ղարիբի եափընջին։*

ՍԷՅՐԻ։ Չի հարկաւոր։ (Ինքը վերցնում է եափընջին եւ, առանց ձիւնը թափ տալու, շպրտում է մի անկիւն։ Երեսը բաց է անում)։

ՌՈՒՍՏ։ (Նայում է Սէյրանին, չի ճանաչում. միշտ սիրալիր)։ *Առաջ եկ, նստիր, պատդ բաց արա, եթէ հայ քրիստոնեայ ես։*

ՍԷՅՐ։ (մօտենում է սեղանին)։

ԵԳՈՌ։ (նորեկին ճանաչել է։ Մինչեւ Սէյրանի սեղանին մօտենալը)։ *Տղերք, ձեր արեւը վկայ, այսօրուայ իմ տեսած տղան է։*

ՋԱՒԱԴ։ (հանգիստ նստելով իւր տեղը)։ *Հինգ չլինինք, վեց լինինք։ Եկողը մեր գլխի վրայ տեղ ունէ։ Նստիր, Աստծու հիւր։*

ՍԷՅՐ։ (առանց բաշլըղը գլխից վերցնելու, բայց երեսը բաց, սառը գլուխ է տալիս ամենքին եւ նստում սեղանի ծայրին, ձեռը յենելով դաշոյնի դաստակին։ Տխուր է, զուսատ։ Աչքերը կարմրած են, բայց դէմքն արտայայտում է մի անխախտ վճիռ։ Մինչեւ այժմ չի նայել Ռուստամին եւ աշխատում է խոյս տալ նրա հայեացքներից)։

ՌՈՒՍՏ։ (հանգիստ նստում է իւր տեղը) *Այ տղայ, Համբարձում, մի դաւաթ բեր, գինի տուր։ Փլաւը բեր։*

ՄԱՐՏ։ (Սէյրանին) *Քամին թունդ է դրսում։*

ՍԷՅՐ։ Քամի չկայ։

ՄԱՐՏ։ Ինչպէս թէ չկայ։ Չե՞ս լսում ինչպէս է մռնչում գայլի նման։

ՀԱՄԲ։ (երկու կուլա նոր գինի եւ մի դաւաթ առելացնում է սեղանի վրայ։ Ապա գնում է ձախ կողմ-

մի դռնով եւ վերադառնում է ձեռին մի մեծ սկուտեղ փլաւ, որ դնում է սեղանի վրայ։

ՍԷՅՐ։ (առանց Ռուստամին նայելու, նրա առաջարկած գինին արհամարհանքով մերժում է)։ Արաղ տուէք ինձ։

ԶԱՒԱԴ։ (օղի է ածում Սէյրանի համար)։ *Համեցէք։*

ՍԷՅՐ. (մի կումով դատարկում է օղու բաժակը)։ *Կարելի՞ է մէկն էլ խնդրել։*

ԶԱՒԱԴ։ (նորից օղի լեցնելով)։ Մէկն էլ կարելի է, տասնմէկն էլ։

ԶԱՀԱՆԳ։ Մինչև կըհասնես մեր դրադուսին։ (փլաւ է ածում իւր համար)։

ՄԱՐՏ։ Եւ յետոյ կսկսես սատանաների հետ պայթաղի պարել։ (փլաւ է ածում իւր ամանի մէջ)։

ՍԷՅՐ։ (մի կումով դադարկում է օղու երկրորդ բաժակը)։ Ես սատանաների հետ շատ եմ պարել։

ՄԱՐՏ։ (սարսափ)։ Տէր մեղայ քեզ։

ՍԷՅՐ։ (դատարկ բաժակը բռնելով գաւաթի առջեւ)։ *Մէկն էլ։*

ԶԱՒԱԴ։ Աչքիս վրայ։ (լեցնում է նրա բաժակը)։

ԶԱՀԱՆԳ։ (Եգոռին) Տղան օրինաւոր կոնծում է։

ԵԳՈՌ։ Աչքիս կասկածելի է երևում։ (փլաւ է ուտում)։

ԶԱՒԱԴ։ (Սէյրանին) *Խմելուց յետոյ բերանդ բան դիր, թէ չէ սիրտդ կըխառնի։* (դնում է Սէյրանի առջեւ խորոված ձուկ)։

ՍԷՅՐ։ Ես քաղցած չեմ, ծարաւ եմ։ Հիմի գինի տուր։

ԶԱՒԱԴ։ (գինի է ածում Սէյրանի համար)։

ԶԱՀԱՆԳ։ (Սէյրանին)։ *Շիքեաստայ ասել գիտե՞ս։*

ՍԷՅՐ։ (կտրուկ)։ *Ես հոխկաբազ չեմ։ (խմում է)։*

ՄԱՐՏ։ Լաւ ասաց։

ԵԳՈՌ։ (մեկուսի Ռուստամին)։ *Օհ, շատ թունդ է կոտրատում։*

ՌՈՒՍՏ։ (Սէյրանին)։ Համեցէք, փլաւ կեր։

ՍԷՐ։ Ես իմ փլաւը կերել եմ վաղուց։ Հիմի գինի կեր։ (երեսը դարձնում է Ռուստամից)։

ՌՈՒՍՏ։ (զգում է անախորժութիւն, բայց զսպում է իրան, բաժակը բարձրացնելով) *Բարեկամ, ով որ էլ որ ես, բարով հազար բարի ես եկել։ Տղերք, խմենք մեր անծանօթ հիւրի կենացը* (քիչ կում է անում եւ գաւաթը դնում սեղանի վրայ)։

ԱՄԵՆՔԸ։ Խմենք, խմենք։ (խմում են)։

ՍԷՅՐ։ (Զոր) *շնորհակալ եմ* (խմում է մի գաւաթ գինի եւ գաւաթը շպրտում յատակի վրայ) *Եղկ։*

ՄԱՐՏ։ Ճանճ էր ընկել գաւաթի մէջ, հէ՞։

ՍԷՅՐԱՆ։ Ուրիշ գաւաթ տուէք (նայում է Ռուստամին գաղտուկ)։

ՀԱՄԲ։ (բերում է մի նոր գաւաթ եւ դնում Սէյրանի առջեւ)։

ԵԳՈՌ։ (մեկուսի, Զաւադին) *Այդ բանը ես չհաւանեցի, ի՞նչ կասես։*

ԶԱՒԱԴ։ (մեկուսի Եգոռին) *Թող դեռ տեսնենք։*

ՌՈՒՍՏ։ Գինին ընտիր գինի է, նոր եմ ստացել Սաղիանից։

ՍԷՅՐ։ (առանց Ռուստամին նայելու) *Լաւն է, շատ լաւն է* (գաւաթը բռնելով Մարտիրոսի առջեւ)։ *Էյ, ծիպլի ծատուր, գինի ածա ինձ համար։*

ՄԱՐՏ։ (վշտացած, կոմիքական շարժումով) *Ի՞նչ, ծիպլի ծատո՞ւր, ի՞նչ ասել է ծիպլի ծատուր։* (սեղանակիցներին) *Լսեցի՞ք։*

ԶԱՒԱԴ։ Աստծու հիւր, դա մեր ընկերն է ու բարեկամը։ (լեցնում է Սէյրանի գաւաթը գինով)։

ՄԱՐՏ։ Յիսուսի խոնարհ ծառայ, Ծըկըտանց

Մարտիրոս է անունս։ Ծիպլի ծատուրս որն է։ Ես վաճառական եմ։

ՍԷՅՐ։ Գիտեմ, դուք ամենքդ վաճառականներ էք։ Առնում էի, ծախում, փող աշխատում, քէֆ անում և պատիւ տալիս այդ մարդուն (առանց նայելու ցոյց է տալիս Ռուստամի կողմը։ Խմում է)։

ԵԳՈՌ։ (Զաւադին) Ես սկսում եմ կատաղել։

ԶՄԻԱԴ։ (Եգոռին) Համբերիր (նորից լեցնում է Սէյրանի գաւաթը գինով)։ Խմիր քեզ հիւրասիրողի կենացը։ Ռուստամը մեր պարծանքն է։

ՍԷՅՐ, Այո, պարծանքը։ Լաւ, լաւ (խմում է)։

ՄԱՐՏ։ (տակաւին վրդովւած) Չէ, ինչ կասէք, ա՜, Ծիպլի ծատուր։ Արիւնս խառնեց (գարէջուր է խմում է)։

ԶԱՀԱՆԳ։ Բայց, բարեկամ, դու մեզ չասացիր թէ որտեղից ես եկել, ով ես։

ՍԷՅՐ։ Մի վռազիր, կիմանաս։

ՌՈՒՍՏ։ Ինչ հարկաւոր է իմանալ ով է և որտեղից է եկել։ Բաւական է, որ դարիր է և հայ քրիստոնեայ (Սէյրանին)։ Կեր, խմիր, բարեկամ, ինչպէս քո տանը։ Դրանք լաւ տղերք են, ազնիւ, պատուական ընկերներ։

ՄԱՐՏ։ Բայց նա ինձ Ծիպլի ծատուր անուանեց, թող ասի տեսնենք, ի՞նքն ով է։

ԵԳՈՌ։ Այո, ես էլ ուզում եմ իմանալ ով է մեզ հետ սեղան նստել (յուզւած ձայնով Սէյրանին)։ Էյ, պարոն, անունդ ի՞նչ է։

ՍԷՅՐ։ (սառը, անուշադիր) Սէյրան (թերեւ լուռ ինն)։

ԱՄԵՆՔԸ։ (նայում են իրարու)։

ՍԷՐՐ։ Ճանաչեցիք։

ԶԱՀԱՆԳ։ Շահարի Շերվանում քառասուն Սէյրան կայ։ Լեզուդ ասա։

ՍԷՅՐ։ Կուժ ու կուլա ծախող Հայրապետի տղայ Սէյրան։ (նայում է զաղտուկ Ռուստամին, որ տեսնէ ինչ տպաւորութիւն գործեց նրա վրայ։ Նորից թերեւ լուռիւն)։

ՌՈՒՍՏ։ (ցնցւում է) Դա նա է (զսպում է իրան)։

ՍԷՅՐ։ (ամենքին, որ միմեանց երեսին են նայում բացի Զաւադից) Էլի չճանաչեցիք։

ԶԱՒԱԴ։ Ես ճանաչեցի (Ռուստամին նշաններով խնդրում է ցյուզել)։

ԶԱՀԱՆԳ։ Հիմի եմ հասկանում, թէ ինչու գաւաթը փշրեցիր։ Բրուտի որդին միայն ման կոտրել կարող է սովորել։

ՍԷՅՐ։ (երկիմաստ) Ճշմարիտ ես ասում։ Ես ման կոտրող եմ։

ՄԱՐՏ։ Թէև դու ինձ Ծիպլի ծատուր անուանեցիր, բայց ես կասեմ, որ քո հայրը հեթանոսների մէջ լաւ մարդ է։ Նա մի ժամանակ ուզում էր մեր սուրբ հաւատն ընդունել և Յիսուսի Քրիստոսի աշակերտ գրւել, ձեր հարւան դերձակ Բարխուդարը չթողեց։ Պէտք է ասած, աղա Ռուստամ, որ աներդ Աստծու գառներին թշնամի է։ Նա մեզ չի սիրում։ Թող Տէրը փրկէ նրան գեհենի կրակից։ (Սէյրանին) Բայց դու չմոռանաս, որ ինձ Ծիպլի ծատուր ասացիր։

ԶԱՒ։ Տղերք, գիշերն անցնում է, ժամանակ է Ռուստամին հանգիստ թողնելու։ Գաւաթներդ լեցրէք։ (լեցնում են)։

ՍԷՅՐ։ (լեցնում է իր գաւաթը ուիսկոյն եւ եր դատարկում)։

ԶԱՒ։ (Սէյրանին) Լաւ ես կոնծում, խօսք չունիմ։ Բայց, բարեկամ, մի քիչ սպասիր, բան ունիմ առելու։ (ոտի է կանգնում) Տղերք, շնորհակալութիւն ասենք մեր դարդիմանդ ընկերոջն ու բարեկամին։

ԱՄԵՆԲԸ։ (բացի Սեյրանից) Շնորհակալութիւն, շնորհակալութիւն։

ՋԱՀ։ Ռուստամ, Աստուած մի ուրախութիւնդ հազար անի, հազար հոգսերդ մի։

ԱՄԵՆԲԸ։ (բացի Սեյրանից) Ամեն, ամեն։

ՋԱՀ։ Ռուստամ, սեղանդ միշտ բաց լինի սրտիդ պէս, սիրտդ ուրախ սեղանիդ պէս։ Վատ օրդ այս լինի, լաւ օրիդ օր չհանի։ Գործիդ յաջողութիւն, կեանքիդ երկարութիւն։

ԱՄԵՆԲԸ (բացի Սեյրանից) Ամեն, ամեն։

ՋԱՀ։ (ոգեւորելով) Միշտ մեր պարծանքը լինիս քո նամուսով, քո պատուով, քո մեծ ու պստիկ ճանաչելով։ Ռուստամ, դու Դաղստանում ազնիւ ու քաջ մարդու անուն ես հանել, փառք ու պատիւ քեզ։ Մենք հպարտանում ենք, որ ունինք քեզ նման հայրենակից և բարեկամ։ Այսպէս է, չէ՞, տղերք։

ԱՄԵՆԲԸ։ (բացի Սեյրանից) Այդպէս է, այդպէս է։

ՋԱՀ։ Մենք գիտենք, որ դու քո նամուսի համար առիւծ ես, բայց գիտենք, որ դու մեծերի մօտ մեծ ես, պստիկների մօտ պստիկ, զօրաւորների դէմ զօրաւոր, անզօրների համար պաշտպան, որ ոչ գայլերից ես վախենում, ոչ գառներին ես արհամարհում։ (բարձր) Ապրի մեր Ռուստամը (գաւաթը դատարկում է)։

ԱՄԵՆԲԸ։ (բացի Սեյրանից) Ապրի, ապրի (գաւաթները զարկում են Ռուստամի գաւաթին եւ խմում)։

ՄԱՐՏ։ Թող Եհովայի օրհնութիւնը քեզ վրայ լինի։ Ամեն։ (նայելով Սեյրանին կատաղի հայեացքով)։ Ծիպլի ծառուր։

ՋԱՀ։ Դէհ, տղերք, մէկ էլ լեցրէք բաժակներդ։

ԱՄԵՆԲԸ։ (լեցնում են գաւաթները բացի Սեյրանից)։

ՋԱՀ։ Տղերք, ես այստեղ եկայ ամենից առաջ։ Եկայ ու Ռուստամին տեսայ ուրախ, զւարթ։ Նա նոր խուր ընտանիքից նամակ էր ստացել։ Նա այնքան ու-

բախ էր, որ տեսնէիք, չէիք ճանաչիլ։ Էհ, բարեկամներ, մենք պակաւած չենք, հասկանալ չենք կարող ընտանիքի քաղցրութիւնը։ Բայց մեր ընկերը, գոհութիւն Աստծոյ, այդ քաղցրութիւնը վայելում է։ Այսպէս է, թէ՞ չէ։

ԱՄԵՆԲԸ։ (բացի Սեյրանից) Այդպէս է, այդպէս է։

ՋԱՀ։ Դէհ, խմենք, ուրեմն, Ռուստամի ընտանիքի կենացը։ Տայ Աստուած, որ նա միշտ բաղդաւոր լինի, միշտ այնպէս ուրախ, ինչպէս ես տեսայ նրան այսօր։

ԱՄԵՆԲՆ։ (բացի Սեյրանից) Ռուստամ, ընտանիքիդ կենացը (գաւաթները զարկում են Ռուստամի հետ եւ խմում)։

ՋԱՀ։ Մի բան էլ ասեմ, խօսքս վերջացնեմ։ Հասկացող մարդիկ ասում են, որ ընտանիքն առանց զաւակների բաղդաւոր չէ։ Էհ, այս էլ խմենք և Աստծուց խնդրենք, որ նա մեր Ռուստամին շուտով պարգեւի իր նման մի զոյ տղայ։

ԱՄԵՆԲԸ։ (բացի Սեյրանից) Ամեն, ամեն, հուռռա...

ՄԱՐՏ։ Յիսուսը կպարգեւի։

ՍԷՅՐ։ (միշտ նստած է, մինչ բոլորը կանգնած են։ Խորհում է, շրթունքները կրծոտելով)։

ԵԳՈՌ։ (շարունակ դիտել է Սեյրանին, բաւականին գրգռուած) Էյ, դարիբ, վո՞ր ես կենալու ոտքի, թէ՞ չէ, խմելո՞ւ ես այս կենացները, թէ չէ՞։

ՋԱՀԱՆ։ Դարիբը հարբեալ է, շարժուել չի կարող։

ԵԳՈՌ։ (մեկուսի Զաւադին) Ստոտանան ասում է դրա կողքը ծակիր (ձեռը սեղմում է դաշոյնի դաստակին)։

ՋԱՀ։ Համբերիր։

ՍԷՅՐ։ (բարձր) Էյ, ո՞վ է հարբած, ո՞ւ։ Տեսնենք։ (ոտքի է կանգնում, ուղղում իրան, մի հայեացք ձգում բոլորի վրայ եւ, գլուխը բարձրանելով, աջ ձեռը սեղ-

մուտ դաշոյնի դաստակին, ձախ ձեռով գաւաթը բարձրացնում)։ Թամադա։

ՉԱՒ։ Լսեցէք, լսեցէք, դարիբն է խօսում։

ԱՄԵՆՔԸ։ (յարուտ են իրանց ուշադրութիւնը)։

ՍԷՅՐ։ Թամադա, ինչպէս հրամայեցիր, ես էլ խմում եմ Ռուստամի կենացը։ Ես էլ եմ ցանկանում նրան երկար կեանք, առողջութիւն, հարստութիւն, տուն-տեղ, բազդաւորութիւն, ձեզ նման դարդիմանդ ընկերներ, այսպէս ուրախ ուրախ սեղաններ և ինձ նման անկոչ հիւր։

ՉԱՒ։ Ապրես բարեկամ, ապրես։

ՉԱՀԱՆԳ։ Մարդը խօսել իմացել է։

ԵԳՈՌ։ Թող տեսնենք ինչ է ասելու։

ՄԱՐՏ։ Բայց ես ծիպլի ծատուրը չեմ ներել նրան։

ՌՈՒՍՏ։ (ամբողջ ժամանակ միեւնոյն դիրքում կանգնած, շարունակ դիտում է Սէյրանին)։

ՍԷՅՐ։ Թամադա, դու ասացիր, որ Ռուստամը ձեր պարծանքն է, որ նա Դաղստանում ազնիւ մարդու ու քաջ տղամարդու անուն ունէ։ Բայց դու այն էլ ասացիր, որ նա իւր նամուսի համար առիւծ է։ Ես հարցնում եմ այդ մարդուն. ինչ ասել է նամուս (գաւաթը դնում է սեղանի վրայ եւ ձեռը առելի ամուր սեղմում դաշոյնի դաստակին։ Ամենքը տարակուսանքով նայում են նախ միմեանց, ապա Ռուստամին։ Իսկոյն իւր հարցի պատասխանը ստանալով, քիչ լռութիւնից յետոյ)։ Հ՞ը, հարցնում եմ, ինչ ասել է նամուս։

ՌՈՒՍՏ։ (յուզմունքը հազիւ զսպելով) Նամուսը գեղեցիկ գիւղանների կերակուր չէ։

ՍԷՅՐ։ (դառը հեգնութեամբ) Աֆարիմ, աֆարիմ, իսկ և իսկ իմ ուղածն ասացիր (գաւաթը բարձրացնելով)։ Թամադա, ինչպէս հրամայեցիր, ես էլ խնդրում Աստծուց, որ նա այդ մարդուն պարգեւի մի ղոչ տղայ։ Ցանկանում եմ, որ այդ տղան լինի այնքան

նամուսով, որքան ինքը։ (ծիծաղում է դառն ծիծաղով)։

ԱՄԵՆՔԸ (բացի Ռուստամից) Շատ լաւ, շատ լաւ։

ՍԷՐԱՆ։ Տայ Աստուած, որ տղան լինի հարազատ ծնունդ, որ նա աչքունքով, երեսմեերեսով նմանուի այդ մարդուն, որ ամենն մի տեսնող ասի, հա, դա Քօչարեանց Ռուստամի զաւակն է, իսկ և իսկ նրանն է, ուրիշինը չէ։

ՉԱՒ։ (լուրջ, խիստ) Յետոյ, յետոյ։

ՍԷՅՐԱՆ։ Որովհետև, լսեցէք, որովհետև, անէծք չար սատանին։

ՉԱՀԱՆ։ Որովհետև գինին գլխիդ շատ է զօռում։

ԵԳՈՌ։ (նորից գրգռելով)։ Թողէք, թողէք տեսնենք ինչ է դուրս տալիս։

ՍԷՅՐ։ Որովհետև հաստատ գիտեմ, որ Ռուստամի տղան կամ աղջիկը—Աստծուն է յայտնի—նմանելու է իւր իսկական հօրը։

ՉԱՀԱՆ։ (հեգնաբար) Բան ասաց, լաւ, տեղդ նըստիր, դատարկապորտ։

ՌՈՒՍՏ։ Իսկական հո՞ը։ Ի՞նչ ես ուզում ասել, տղայ։

ՍԷՅՐ։ Հարիֆ ես, հասկացիր ինչ ասացի։ Ա, եղկ (առանց խմելու գաւաթը շպրտում է յատակի վրայ։ Ընդհանուր զմայլութիւն, յուզում։ Լռութիւն մի քանի վայրկեան)։

ՉԱՒԱԴ։ Էյ, Ղարիբ, դու հարբած չես, դու խելագար ես։

ԵԳՈՌ։ (կատաղի) Ինչո՞ւ փշրեցիր գաւաթը։

ՍԷՅՐ։ Փշրելով գաւաթը, ես փշրում եմ այն մարդու նամուսը, որին այդքան պատիւ էք տալիս։

ՌՈՒՍՏ։ Լակո՛տ։ (կորցնելով ինքն իրան, ուզում է յարձակուել Սէյրանի վրայ, բայց նոյն վայրկեանին զրոպում է իրան) Ոչ, ոչ, պէտք է լսել մինչև վերջը։

ԵԳՈՒ։ Շուն, շան որդի։ (դաշոյնը մերկացնելով, ուզում է զարկել)։

ՋԱՒ։ Գնա, կորիր այստեղից, լիրբ։

ՌՈՒՍՏ։ Կացէք։ Ես չեմ թողնիլ այդ մարդու գլխի մի մազին անգամ դիպչել։ Նա իմ հիւրն է։ Մենք մենակ մարդու վրայ յարձակուելը նամարդութիւն է։ (միանգամայն գսպելով իրան, դառնում է Սէյրանցին) Տղայ, ես քեզ չեմ ճանաչում։ Անունդ լսել եմ, բայց քեզ առաջին անգամն եմ տեսնում։ Դու եկար, դուռս ծեծեցիր, ես բաց արի։ Ասացիր Աստծու հիւրն եմ։ Ընդունեցի։ Ասա, ինչու համար ես եկել։

ՍԷՅՐ։ (տանջանքով) Նամուսի համար եմ եկել, նամարդ, նամուսի համար։ Տանջանքն ու յուսահատութիւնն են ինձ բերել այստեղ։ Սարեր ու ձորեր եմ անցել, անքուն գիշերներ եմ անցկացրել, անհուն տառապանքներ եմ քաշել, որ գամ և վերջապէս երեսիդ ասեմ այն, ինչ որ ասացի։ Չհասկացար, լաւ, աւելի պարզ կխօսեմ։ Ես մի տղայ էի, որին մայրերը մատով էին ցոյց տալիս։ Ծնողներիս միակ զաւակն էի։ Ես ունէի մի հարսնացու, որ գոհար էր գոհարների մէջ։ Նրա կեանքովն էի ապրում, նրա շնչովն էի շնչում ես։ Դու նրան խլեցիր իմ ձեռքից։ Խլեցիր, օգտուելով նրա գաղտն հօր խստութիւնից և քո հարստութիւնից։ Դու ինձ անպատուեցիր, ստորացրիր։ Այսօր իմ ընկերների երեսին մտիկ անել չեմ կարող։ Նրանք ծաղրում են ինձ։ Նրանք ինձ անուանում են աննամուս։ Շատ եմ մտածել, շատ եմ տանջուել հէնց այսօր, հէնց այս երեկոյ, մինչև որ վճռել եմ գալ այստեղ, գալ և այս աղիզ երեկոյ, հէնց քո ընկերների առաջ, վրէժ առնել։ Դէ, ես իմն արի, արա դու էլ, ինչ որ ուզում ես։

ՌՈՒՍՏ։ Լակոտ, սուտ ես ասում։ Իմ կինը քո հարսնացուն չի եղել։

ՍԷՅՐ։ Ամբողջ մեր փողոցը գիտէ։ Վկայ են մեր բոլոր հարևանները։

ՌՈՒՍՏ։ Ես չեմ ուզում ճանաչել քո հարևաններին։ Սուտ ես խօսում. ասում եմ, սուտ է։

ՍԷՅՐԱՆ։ Քո աներոջ Աւետարանի կողքին է գրուած։

ՌՈՒՍՏ։ Գրուած է և ջնջուած։ Լակոտ, ես ուրիշի պատառը գողացողներից չեմ։ Դէհ, էլ մի երկարացնիր, չոքիր իմ առաջ, չոքիր և ներողութիւն խընդրիր, եթէ կեանքը թանգ է քեզ համար։

ՍԷՅՐ։ Եթէ ես քեզ նման մարդուց վախենայի, այստեղ չէի գալ։ Աննամուս։

ՌՈՒՍՏ։ (վազում է դեպի ճախ պատը, վերցնում է քաշ արած դաշոյնը և յարձակւում է Սէյրանի վրայ)։ Կտոր-կտոր պէտք է անել շուն շան ձագին։

ՋԱՒ։ (բռնում է Ռուստամին) Ես չեմ թողնիլ, որ ձեռներդ կեղտոտես։

ՋԱՀԱՆԳ։ (նոյնպէս բռնելով Ռուստամին)։ Թող գնայ կորչի լիրբը։

ՄԱՐՏ։ (ձեռներն իրար կցելով, աչքերն ուղղում է դեպի վեր)։ Յիսուս, Յիսուս. ազատիր մեզ արիւնհեղութիւնից։

ՌՈՒՍՏ։ (ազատելով ազատուել Զաւադի և Զահանգիրի ձեռներից)։ Թողէք ինձ, ես նրան չեմ սպանիլ։ Ոչ, ոչ, նրան ուրիշ կերպ պիտի պատժել։ Նա տղամարդ է, նա մեն մենակ եկել է այստեղ վրէժ առնելու։ Դաղստանում այդպիսի թշնամու հետ կուռում են։ Փռեցէք յատակի վրայ մի եափնջի։ Մենք կըկռուենք դաշոյններով։ Եւ ով մեզանից ուրը եափնջուց դուրս դրեց, նա է աննամուսը, նա է վախկոտը։ Դէ, շուտ փռեցէք եափնջին։

ՍԷՅՐԱՆ։ (արագութեամբ իւր եափնջին փռում է յատակի վրայ, մերկացրած դաշոյնը ձեռին)։ Համեցէք-

ես պատրաստ եմ։ Կնիկը մի մարդ պիտի ունենայ։ Թող մէկն ու մէկը մեզնից կորչի։

ԶԱՒԱԴ։ (մռնչալով)։ Կորիր, լիրբ, կորիր, ասում եմ։ Վաղը ես քո հաշիւը կվերջացնեմ։ (Ռուստամին, ճագիւ պաշելով նրան)։ Ես չեմ թողնիլ քեզ այդ շան հետ մի եափնջու վրայ կանգնել։ Դա անպատուութիւն կլինի։

ՄԱՐՏ։ (ձեռներն իրար կցելով)։ Եհովայ, Եհովայ, Աբրահամի և Իսահակի Աստուած։

ԵԳՈՌ։ Ես կըկռեմ նրա հետ եափնջու վրայ։ (ուզում է մէջ տեղ մտնել, դաշոյնը մերկացնելով)։

ՌՈՒՍՏ։ (ձիգ անելով ազատուել Զաւադի եւ Զահանգիրի ձեռներից)։ Ոչ ոք, ոչ ոք, բացի ինձնից։ Նա իմ ձեռքով պիտի պատժուի, միմիայն իմ ձեռքով, (կռծոտում է իրան բռնող ձեռները)։ Աա, թողէք, ասում եմ, ես կխելագարուեմ։

ՍԷՅՐ։ (կատաղի ծիծաղով)։ Հա, հա, հա, ինչպէս է կապտել (դաշոյնը դնում է պատեանի մէջ)։ Կատաղիր, փրփրիր, այրուիր։ Քո կնիկն տուաջ իմն է եղել։

ՌՈՒՍՏ։ (ցնչասպառ)։ Ապացոյց, ապացոյց եմ ուզում։

ՍԷՅՐ։ (կծու ծիծաղով)։ Հա, հա, հա, ապացոյց։ Դնա, բաց արա կնոջդ կուրծքը և տես խալը, սև խալը նրա աջ ծծի տակ։ (եափնջին արագ վերցնում է եւ դուրս վազում խորքի դռնով։ Քամին վզգալով ճիւռնի կոյտեր է թափում ներս։ Ամենքը սարսափի մէջ են։ լռութիւն)։

ԵԳՈՌ։ Նա դուրս եկաւ քո յարկի տակից, այժմ ես կարող եմ նրան սպանել։ (եափնջին վերցնելով, վազում է փողոց)։

ՀԱՄԲ։ (ամբողջ տեսարանի միջոցին կուչ եկած կանգնած է մի անկիւնում։ Շտապով ծածկում է խորքի դուռը)։

ՏԵՍԻԼ 5.

Նոյնք, առանց Սէյրանի եւ Եգոռի։

ՌՈՒՍՏ։ Ինչ ասաց նա։ Խալը, սև խալը կրծքի վրայ։ Ահ, ճաքեց սիրտս, կտոր կտոր եղաւ։ Դէ, թողէք, դէ բաւական է, անիրաւներ, բաւական է։ (Ազատուում է Զաւադի եւ Զահանգիրի ձեռներից)։ Խալը, սև խալը։ (թուլացած նստում է աթոռի վրայ, դաշոյնը ընկնում է ձեռքից)։

ԶԱՒ։ Զուր տուէք, ուշքը գնում է։

ՀԱՄԲ։ (շտապով ջուր է մատուցանում)։

ՌՈՒՍՏ. Ոչ, ուշքս վրէս է։ Գնդակներ են պտտում մարմնիս մէջ։ (ջուրը մերժելով)։ Ոչ, ոչ, ես կնիկ չեմ, որ ուշաթափուիմ։ Մի վախենաք, չեմ մեռնիլ։ Խալը, սև խալը։ Համբարձում։

ՀԱՄԲ։ Այստեղ եմ, աղայ։

ՌՈՒՍՏ։ Դնա, ձիս թամբիր։

ԶԱՒ։ Խելքի եկ, Ռուստամ, շունն անգամ չի հաւատալ այդ լրբի խօսքերին։

ԶԱՀ։ Եգոռը կսպանի նրան։

ՄԱՐՏ։ Եհովան կպատժի նրան։

ՌՈՒՍՏ։ Իսկոյն, իսկոյն թամբիր ձիս, առանց մի բոպէ ուշացնելու։

ՀԱՄԲ։ Բուքը սաստկացել է, քամին ծառեր է պոկում արմատից։

ՌՈՒՍՏ։ (կատաղի)։ Լռիր, շուն, ձիս ասում եմ։ (վեր է կենում)։

ՀԱՄԲ։ (շտապով գնում է ձախ կողմի դռնով)։

ԶԱՒ։ Բայց ինչ ես ուզում անել։

ՌՈՒՍՏ։ Լաւ խաբեցին, լաւ քանդեցին տունս, լաւ կեղտոտեցին երեսուն ու երկու տարուայ պատիւս։ Ռուստամը մի լպստած պատառ ուտող, Ռուստամը մի

անառակ կնոջ մարդ։ Ո՞վ խլեց իմ գդակը գլխիցս։ Մայր, մայր, ես այդ աղջկան չէի ճանաչում, ոչ էլ նրա ծնողներին։ Ես ոչ ոքի չէի ճանաչում այդ անիծուած քաղաքում։ Թամքիր ձիս, Համբարձում, Թամքիր, գլուխս ուսերիս վրայ չի կանգնում, բայց ես կպահեմ նրան։ Կպահեմ, մինչև որ տեսնեմ այդ խալը։ Ինչ յիմարն եմ ես։ Ինչո՞ւ երբէք չեմ նայել նրա կրծքին։ Լաւ, շատ լաւ, հիմա կըտեսնենք, կըստուգենք։ Թամքիր Համբարձում, Թամքիր նժոյգս։ Նա ինձ հինգ օրում կտանի տեղ կհասցնի։

ՄԱՐՏ. Ամենակարող Աստուած, այս եղանակին։

ՋԱՒ։ Ամօթ է, Ռուստամ, խելքի եկ, կինդ անմեղ է։

ՋԱՀԱՆ։ Ի հարկէ, անմեղ է։

ՌՈՒՍՏ։ Լռեցէք. դուք ինձ չթողիք, որ ես ժամանակին նրա լեզուն կտրեմ, այժմ ուշ է։ Ի՞նչ, անմեղ է։ (դառը ծիծաղ)։ Հա, հա, հա, ո՞վ կարող է հաստատել։ Եօթը սարերի ետեւում, մի պառաւ կնոջ ձեռքին, մեն մենակ։ Խաբեցին ինձ, Ջաւադ, շատ անաստուած խաբեցին։ Կրծքի խալը, սև խալը։ Ահ, ինչու ես թուչուն չեմ, որ այս գիշեր հասնեմ այնտեղ։ Բայց ոչինչ, իմ ձին լաւն է։

ՋԱՀԱՆ։ Այս ուշ գիշերին, այդ զարհուրելի եղանակին։

ՄԱՐՏ։ Քամին մռնչում է գայլի պէս։ Դու Դաղըստանի ձորերում կթաղուես ձիւնի տակ։

ՌՈՒՍՏ։ Ինձ համար այսուհետև ոչ քամի կայ, ոչ ձիւն, ոչ Աստուած։

ՄԱՐՏ. (սարսափած Ռուստամի վերջին խօսքերից)։ Յիսուս, Յիսուս, ի՞նչ ասաց նա։

ՌՈՒՍՏ. Ամեն ինչ խաւարուեց աչքումս։ Ես անանամեան, իմ երեխան ուրիշինը։ Անիծուիս դու, Համբարձում, ինչո՞ւ ուշացար։ Հա, պէտք է հագնուել։ (վերցնում է ձախ կողմի անկիւնում դրած երկար կօշիկները, հագնուում է, կապում է մէջքին դաշոյնը, հագնուում է վերարկուն, ուսերին գցում եաթնջին եւ գլխին դնում սպիտակ չուլլահին)։

ՋԱՒ։ Գոնէ սպասէր մինչև առաւօտ, թող լոյսը բացուի։

ՌՈՒՍՏ։ Լոյսը չի բացուելու, Ջաւադ, արեգակը խաւարեց։ Լսեցէք, բարեկամներս, խանութս յանձնում եմ ձեզ։ Ով գիտէ ինչ կարող է պատահել։ Եթէ յետ չգամ, ծախոտեցէք ամեն բան, գոյացած գումարը մօրս ուղարկեցէք։

ՀԱՄԲ։ (գալիս է ձախ կողմի դռնով)։ Ձին պատրաստ է։

ՌՈՒՍՏ։ Դէհ, մնացէք բարով, տղերք։ Ինչ աբրած, Աստուած կամեցաւ, որ մեր ազիզ երեկոն այսպէս վերջանայ։ Մնաք բարով։

ՋԱՒ. Գոնէ համբուրուենք (համբուրուում են)։ Բարի ճանապարհ։ (յուզուած)։ Գնա, պէտք է գնալ։

ՋԱՀԱՆ։ (համբուրուելով)։ Փող ունիս մօտդ։

ՌՈՒՍՏ։ (գրպանը շօշափելով)։ Բաւական է ինչ որ կայ։ Մնաս բարով, եղբայր Մարտիրոս։ (համբուրում է)։

ՄԱՐՏ։ Յիսուսի օրհնութիւնը լինի քո ընկերը։ Տես, չմրսես։

ՌՈՒՍՏ։ (վեցնելով պատից քաղ արած մտրակը, գնում է ձախ կողմի դռնով։

ՋԱՒ.
ՀԱՄԲ. } (հետեւում են նրան)։

ՋԱՀԱՆ։ Դու չես ուզում ճանապարհ դնել։

ՄԱՐՏ։ Վախենում եմ դուրս գալ, կարող ես մրսել։

ՋԱՀԱՆ։ (գնում է ձախ կողմի դռնով)։

ՏԵՍԻԼ Գ.

Մարտիրոս եւ Եգոր

ԵԳՈՐ։ (խորքի դուռը բացուում է սոսկալի դղրդիւնով։ Քամին աւելի է սաստկացել։ Ցոգնած եւ ուժասպառ)։

ՄԱՐՏ։ (սարսափով)։ *Սպանեցէք։*

ԵԳՈՐ։ Դժբաղդաբար, ոչ։ Գնաց, անյայտացաւ խաւարի ու բուքի մէջ։

ՄԱՐՏ. (հառաչելով)։ *Գոհութիւն Աստծու։ Թէ չէ ինձ էլ վկայ պիտի կանչէին։ Դուռը ծածկիր։ Վուու, ինչպէս է փչում, մարմինս զարգանդում է*)

ՔԱՄԻՆ։ (քամին սուլում սաստիկ)։

ՎԱՐԱԴՈՑԸ

ԱՊԱՐՈՒԱԾ ՀՈՐԻԶՈՆԴ

ՌՈՒՍՏԱՄԻ ՎՐԷԺԸ

Տեսարանը ներկայացնում է Ռուստամի բնակարանը Շամախում։ Նոյն սենեակը, ինչ որ երկրորդ գործողութեան ժամանակ, նոյն կահ-կարասին, հարկաւ, բացի հաշի սեղաններից։ Պատերի տակ դրած են հնաձև ընկուզենու աթոռներ։ Ձախ պատի առջև դէպի աւանսոն, մի մեծ կլոր միոտանի սեղան, առանց ծածկոցի։ Աջ պատի առջև, լուսամուտների մօտ մի թախտ, պարսկական գորգով ծածկուած։ Վառարան չկայ, նրա փոխարէն սենեակը տաքացնում է թախտից ոչ հեռու դրած մի մեծ երկաթեայ կրակարան (մանղալ) *վրէն մի երկաթեայ կրակակալ։*

ՏԵՍԻԼ 1.

Սանամ եւ Շպպանիկ։

ՍԱՆԱՄ։ (Նստած է թախտի վրայ մի ոտը ծալած, միւսը ձգած։ Ուրախ տրամադրութեան մէջ է։ Ձեռին բռնած է մի երկայն, հաստ ծխամորճ կեռասի կարմրագոյն փայտից։ Մետաքսեայ քսակից վերցնում է ընտիր ծխախոտ եւ լեցնում ծխամորճի կաւէ կարմրագոյն գլուխը։ Հագած է մեխակագոյն բաւշեայ արխալուղ, եզրերը ոսկեթելով զարդարած, կապտագոյն մետաքսեայ շապիկ, գունաւոր փոխան։ Ոտներին եւրոպական կօշիկներ)։ *Անցեալ օրն ինքն ասաց։*

ՇՊՊ։ (Նստած է Սանամի դէմուդէմ ծալապատիկ։ Հագնուած է աւելի հասարակ քան հարսանիքի երեկոյ։

Ոտներին սեռ չուստեր, գլխին մի հասարակ կինեմոնացոյն շալ։ Անկարգ մազերը կիսով չափ սրօղել են թուխ թուխ եռ չոր չոր դեմքը։ Քիչ նման է գնչուհուն)։ *Հաա, դէ շուտ ասա, որ ես էլ ուրախանամ է։ Ուրեմն քանի՞ ամիս է։*

ՍԱՆ։ Իմ հաշուով պէտք է որ չորս ամիս լինի։

ՇՊՊ. Սպասիր ես ասեմ (հաշուում է մատների վրայ)։ *Հիմի յունուարուն ենք, չէ՞։ Հա, յունուար, փեբրուար, մարտ, ապրիլ, մայիս, դա էլ յունիս։ Աստծով Համբարձումանին կունենաս մի գեղեցիկ թոռնիկ։*

ՍԱՆ։ Երանի տղայ լինի։ (ծխամորճը լեցրել է, նշան է անում Շպպանիկին կրակ դնելու ծխախոտի վրայ)։

ՇՊՊ. Անպատճառ տղայ կլինի, սիրտդ ուրախ պահիր։ (վեր է կենում, երկաթեայ կրակակալով վերցնում է մի վառ կրակ մանդալից եռ դնում Սանամի ծխամորճի վրայ։ Երբ սա ծխախոտը վառում է, ածուխը վերցնում է ու զցում մանդալի մեջ)։

ՍԱՆ. Դու ինչի՞ց գիտես, որ տղայ կլինի։ (ծխում է)։։

ՇՊՊ։ Անցեալ օրը պոչաւոր աստղ երևաց երկնքի վրայ, օրէնք է, որ պոչաւոր աստղ երևալու տարին միայն տղաներ են ծնւում։

ՍԱՆ. Աստուած քո ասածը կատարէ։ (տեսնելով Սուսանին, աչքով ունքով զգուշացնում է Շպպանիկին)։

ՏԵՍԻԼ 2.

Նոյնք եռ Սուսան։

ՍՈՒՍԱՆ։ (գալիս է ձախ կողմի դռներով, ձեռքին մի սկուտեղ, վրեն երկու բաժակ սուրճ կաթով։ Գլուխը ծածկած է շքեղ ոսկեզարդ ճուբխիով, կարմիր բռռով։

Հագնուած է անհամեմատ շքեղ, բան իւր ծնողների տանը։ Ոտներին աւելի նուրբ եւրոպական կօշիկներ։ Սկուտեղը դնում է Շպպանիկի ու Սանամի առջեռ եռ ուզում է հեռանալ)։

ՇՊՊ։ Կանգնիր, մի լաւ մտիկ անեմ քեզ, այ մարալ։ Երէկ ծնողներիդ մօտն էի։

ՍԱՆ։ (հետաքրքրուած)։ *Ինչպէ՞ս են։*

ՇՊՊ։ Հայրդ ուրախ, մայրդ ուրախ—բաղդաւոր։ Էհ, ապրիր հիմայ, լալայ, տես ինչ տուն բերեց քեզ Շպպանիկը։ (Սանամին)։ *Բոյը չինար, աչքերը գիլաս գիլաս, ունքերը զալամով քաշած, մատներ ունէ շիմշադի պէս։* (վեր է կենում, պինդ գրկում է Սուսանին եռ համբուրում)։ *Ըհ, Շպպանիկը մախմար մախմար թշերիդ մատաղ։*

ՍՈՒՍԱՆ։ (ամօթխածութիւնից, կարմրելով երեսը դարձնում է եռ լռռ գնում է ձախ կողմի դռնով)։

ՏԵՍԻԼ 3.

Սանամ եռ Շպպանիկ։

ՍԱՆԱՄ։ Խեղճ երեխային ամաչեցրիր։

ՇՊՊ. Հը, ասա տեսնեմ, շնորհակա՞լ ես ինձանից, թէ չէ։ (նստում է եռ սկսում սուրճ խմել պնակից)։

ՍԱՆԱՄ։ Տափից մինչև երկինք շնորհակալ եմ, տափից մինչև երկինք։ (ծխամորճը դանդաղօրեն մի կողմ գնելով, սկսում է սուրճ խմել բաժակից)։

ՇՊՊ։ Համ սիրուն, համ խելօք, համ էլ պատուով, մեծ ու պստիկ ճանաչող։

ՍԱՆ։ Եռ ամօթով, օ, շատ ամօթով, շատ պարկեշտ։ Տեսնում ես այս լուսամուտները, այս երեք չորս ամսայ մէջ մի անգամ էլ չի մօտեցել, որ փողոց մտիկ անի։

ՇՊՊ։ Քեզ էլ սիրում է, ի հարկէ, ու պատուում։

ՍԱՆ։ Օրհնուի նրա ծնունդը։ Ամեն գիշեր ինքն է ինձ տեղերս ու ինձ պառկեցնում։ Մինչև քնելս մէջքս ճմռում է։ Շաբաթ օրերը գլուխս լանում է։ Էլ չեմ խօսում հիվել կարելու մասին։ Ինձերի դոլմայ է եփում, որ մատներդ էլ հետը կուտես։ Թոռ գործելում նմանը չկայ։ Մի խօսքով, կարող եմ ասել, որ ոսկի է։

ՇՊՊ։ (ուրախ ուրախ)։ Տեսնում ես, տեսնում ես։ Դէ, թող օրէս դէն էլ թշնամիներս ասեն Շպպանիկն այս է, Շպպանիկն այն է։ Դիղիրի դի, դիր դիղիրի դիր։ (ջրմա է զարկում եւ նստած տեղը պարում)։ Դիլ, դիլ, դիլ։

ՍԱՆ։ Աղջի, դէ պար ես գալիս, մարդավարի պարիր, որ քէֆս բացւի։

ՇՊՊ։ Աչքիս վրայ։ (շալը գլխից դէն գցելով, արագ ոտքի է կանգնում եւ սկսում է պարել, ջրմա զարկելով)։ Այ, հաա, հա... Ծափ տուր, ծափ տուր, Սանամ խանում։ Դիրիրի, դիրիրի, դիդի, դիդիլ, դիդիլ, դիդիլ։ Ծափ տուր հա, ուխայ, ուխայ, չալղուս բռնեց, չալղուս բռնեց։ (պարում է)։

ՍԱՆ։ (ծափ տալով, շարունակ կուշտ կուշտ ծիծաղում է բարձրաձայն)։ Զմեռնես, դու Շպպանիկ, չմեռնես, ապանեցիր ինձ։ Դէ, լաւ, հերիք է, թէ չէ, իմ պարս էլ բռնում է։ (նստած տեղը պարում է)։

ՇՊՊ։ (դադարում է պարել եւ, շալը գլխին գցելով, նստում է)։ Օհ, քամիս դուր եկաւ։

ՍԱՆԱՄ։ (տակաւին ծիծաղելով)։ Օհ, թուլացայ, թուլացայ։ Սատկած, գիշեր-ցերեկ պարում ես։

ՇՊՊ։ Ինչու չեմ պարիլ։ Ոչ փող ունիմ, ոչ պարտք։ Մի մարդ ունիմ զուռնաչի, գիշեր ցերեկ փչում է։ Զփչելիս՝ կոնծում է։ Հէնց որ գլխին զարկում եմ, լափաշւում է ձկնի պէս, խումփում է խոզի

պէս։ Այս քաղաքն իմ տունն է, քոռ ու քաչալ իմ ղուլն է։ Այստեղ ուտում եմ, այնտեղ խմում, աղջիկներին պոկում, խալաթները ստանում։ Բայց քեզանից նեղացած եմ, Սանամ խանում, շատ են նեղացած։

ՍԱՆ։ Ինչու, ա կնիկ։

ՇՊՊ։ Մի՞թող է ինչ օրին բերեցիր գլխիս հարսանիքի միւս օրը, երբ եկիլ էի խալաթս ստանալու։

ՍԱՆ։ Ախ, Շպպանիկ, մի խօսիր դրա մասին։ Օ, չգիտես Ռուստամս ինչ դրութեան մէջ էր այդ երեք օրը։ Տունը քանդւի բամբասողների, ինչ ասեմ։

ՇՊՊ։ Ախար չէ՞ որ ես Շպպանիկն եմ։ Քաղաքը կաթսա է, ես շերեփ, կարող եմ այսպէս էլ խառնել, այնպէս էլ։ Բայց ես աննամուս չեմ, չէի թողնի, որ քեզ նման պատուաւոր կնոջ տունը թքած պատառ մնայ։

ՍԱՆ. Դէ, անցածն անցել է. թողնենք։ Հիմա որդիս ինձանից այնքան շնորհակալ է, այնքան, որ ասել չեմ կարող։ Նա Սուսանին սիրում է իւր աչքի լոյսի պէս։

ՇՊՊ. Ըհհ, Շպպանիկը Ռուստամիդ ջանին մատաղ, երբ է՞ գալու։

Սան։ (հառաչելով)։ Վայլահ, չգիտեմ։ Առաջ գրել էր, թէ Զրօրհնէքին այստեղ կըլինի. չեկաւ։ Հիմա գրում է, թէ Զատկին է գալու։

ՇՊՊ։ Նամակ գրելիս ինձանից շատ շատ բարով արա և գրիր, որ այն սատկած մարդուս համար մի կտոր լեղու շալ բերի չուխացու։

ՍԱՆ։ Աչքիս վրայ։ Մատիս թել կապիր, որ չմոռանամ։ (մեկնում է ձեռը)։

ՇՊՊ։ (իւր շալի ծոպերից մի թել պոկելով, նապում է Սանամի մատին)։ Երեք տարին մի չուխա է մաշում, այնքան հարբում է ու փողոցներում շնթռնում։ Հոգիս

դուրս եկաւ շատ ծեծելուց։ (Լսւում է երեկոյեան զանգերի ձայն)։

ՍԱՆ։ (երեսին խաչակնքելով)։ Զանգերը տւին։ Այսօր կիրակմուտ է, պէտք է եկեղեցի գնալ։ (բարձր)։ Աղջի, Սուսան։ (վեր է կենում)։

ՏԵՍԻԼ 4.

Նոյնք ու Սուսան։

ՍՈՒՍԱՆ։ Համմէ։ (երեւում է ձա'ս կողմի դռների մէջ)։

ՍԱՆ։ Զարշովս տուր ինձ։

ՍՈՒՍԱՆ։ (դուրս է գալիս ձախ կողմի դռներից Սանամի չարշովը ձեռքին)։

ՇՊՊ։ (վեր է կենում)։ Էհ, ես էլ գնամ, մի քանի տներ ունեմ մտնելու։ (Սուսանին)։ Եկ, մին էլ պաչեմ այդ թշերդ։ (ճամբուրում է Սուսանին)։ Բարով մնաս։ (գնում է խորքի դռներով)։

ՍԱՆ։ (Սուսանի օգնութեամբ փաթաթել է չարշովի մէջ)։ Ես եկեղեցի եմ գնում. չտխրես առանց ինձ։ (գնում է խորքի դռներով)։

ՏԵՍԻԼ 5.

Սուսան մենակ, յետոյ Սուսամբար։

ՍՈՒՍԱՆ։ (ուղեկցելով Սանամին եւ Շպպանիկին մինչեւ խորքի դուռը, յետ է գալիս, դատարկ բաժակները վերցնում է, տանում ձախ դռներով, վերադարձնում է մի տեսակ յոգնած։ Հառաչում է։ Նորից զանգի ձայն։ Ցնցւում է, երեսին խաչակնքում։ Զարթում է յատակի վրայ երեսը դէպի արեւելք եւ աղօթում, երեք

անգամ ճակատը հպելով յատակին)։ Երկնային դատաւոր, մի բան եմ խնդրում քեզանից՝ արտասուքը աչքերիս, որ այն խեղճ տղան ինձ մոռանայ և իմ անբաղդ ծնողները բաղդաւորւեն։ Ամեն։ (ոտքի է ելնում)։

ՍՈՒՍԱՄԲ։ (գալիս է խորքի դռներով՝ ջարշավով եւ եւրոպական կօշիկներով)։ Բարով, Սուսան։ (ճամբուրում է։ Զարշաւը վերցնում է ու մի կողմ դնում)։

ՍՈՒՍԱՆ։ (ուրախանալով)։ Ինչ լաւ արիր, որ եկար, սիրտս ճաքում էր տխրութիւնից։

ՍՈՒՍԱՄԲ։ Դռների մօտ սկեսրիդ պատահեցի, ասաց մենակ ես, եկայ։ (նստում է)։

ՍՈՒՍ. Որտեղ էիր։ (նստում է)։

ՍՈՒՍԱՄԲ։ Մարիամ բաջու մօտ։

ՍՈՒՍ։ (հետաքրքրւած)։ Ինչպէս է խեղճ կինը։

ՍՈՒՍԱՄԲ։ Էհ, խեղճ ասես, թողնես։ Պառաւել է, լղարել, կուչ եկել։

ՍՈՒՍ։ (տխուր), Անիծում էր ինձ։

ՍՈՒՍԱՄԲ։ Նա քեզ չի անիծում, Սուսան, ծնողներիդ է անիծում։ Զանգերի ձայնը որ լսեց, սկսեց կուրծք թակել, Աստուած կանչեց. «Էնիկդ օրս ընկնի, Բարխուդար։ Ասում էր։ Տափը փուշ դառնայ, նա ոտաբաց, ֆառոաշներ ընկնեն նրա հետից, վազ տայ, վազ տայ, տեղ չհասնի, աման ալլահը, կսկծալի հառայը, դադ ու բեդապը, երկինք բարձրանայ, Աստծուն չհասնի։ Ինչ գիտես, էլի այս տեսակ հազար ու մի անէծքներ։

ՍՈՒՍ։ (խորին սարսափով)։ Աման, աման, Սուսամբար, իմ ծնողներն այդ անէծքների տակից դուրս գալ չեն կարող։ Իմ դիշեր ցերեկւայ աղօթքները չեն փրկիլ նրանց։ Օ, սարսափելի է։ Նրան էլ տեսար։

ՍՈՒՍԱՄԲ։ Սէյրանի մասին ես հարցնում։ Նա այստեղ չէ։

ՍՈՒՍ։ Այստեղ չէ։

ՍՈՒՍԱՄԲ։ Ահա մոտ երկու շաբաթ է գնացել է Դաղստան։

ՍՈՒՍ։ (վախեցած)։ Դաղստան։ Ինչու համար է գնացել։

ՍՈՒՍԱՄԲ։ Լեղգու շալ բերելու։ Մայրն ասում է, ուզում է այժմ առուտուրով պարապել։ Բայց դու ինչու վախեցար, սպրտնեցիր։

ՍՈՒՍ։ Ոչինչ, ոչինչ։ Սիրտս մի կասկած ընկաւ։ (աշխատում է զսպել իրան)։

ՍՈՒՍԱՄԲ։ Ես զարմանում եմ քեզ վրայ, Սուսան, որ դու էլի մտածում ես Սէյրանի մասին։

ՍՈՒՍ։ Կարող եմ չմտածել, քանի որ ես եմ նրա անբաղդութեան պատճառը։

ՍՈՒՍԱՄԲ։ Իսկի էլ դու չես, հայրդ է մեղաւորը։

ՍՈՒՍԱՆ։ Ոչ ոչ, Սուսամբար, ես եմ մեղաւորը։ Ճշմարիտ է, հայրս խիստ մարդ է, բայց նա իւր նամուսի գերին է ու իւր խօսքի տէրը։ Նա պատւիրել էր, որ ես մինչև պսակւելս չտեսնւեմ Սէյրանի հետ, չպիտի տեսնւէի։

ՍՈՒՍԱՄԲ։ Էհ, ինչ պատահեց, որ տեսնւեցիր, աշխարհը տակն ու վրայ եղաւ։

ՍՈՒՍ։ Հարցրու հօրս, տես ինչեր էր մտածում իմ մասին։

ՍՈՒՍԱՄԲ։ Գիտեմ։ Նա կարծում էր, որ դու...

ՍՈՒՍ։ (ընդհատելով)։ Հապա, հէնց այդ էր, որ տանջում էր նրան։ Պէտք է տեսնէիր, թէ ինչ օր էր քաշում նա մինչև պսակւելս։ Շատ անգամ ամօթից տնից դուրս չէր գալիս։

ՍՈՒՍԱՄԲ։ Գիտեմ։ Հարսանիքիդ երրորդ օրը ես ձեր տանն էի։ Ահ, ինչպէս ուրախացան ծնողները երբ Շելպանիկը պարելով և երգելով մտաւ և աչքալոյս ասաց։ Մայրդ ասում էր, որ հայրդ թոկ էր սապնել վզովը գցելու, եթէ դու պարզ երես դուրս չգայիր։

Երանի գիտենայի այժմ մնա զղջում է, որ քեզ փչացած էր համարում։

ՍՈՒՍ։ Զղջում է, Սուսամբար, զղջում է։ Ամեն անգամ ինձ տեսնելիս ամօթից կարմրում է։ Բայց ինչ օգուտ, որ ինձ էլ անբաղդացրեց, այն խեղճ տղային էլ։ Լսիր, Սուսամբար։ Սրանից երեք օր առաջ երազումս տեսայ նրան։ Աստուած իմ, ինչպէս էր փոխւել։ Ես մօտեցայ նրան, ձեռը բռնեցի։ Թւում էր, որ մենք Երեխաներ ենք, թթի ծառի տակ։ Խօսիր, ասացի, խօսիր, Սէյրան, ինչու ես տխուր։ Հայրդ ծեծել է քեզ։ Նա չխօսեց, ձայն չհանեց։ Ծուռ-ծուռ մտիկ արաւ երեսիս, շուռ եկաւ և հեռացաւ։ Մնացի մենակ։ Ահ, նա փախչում էր ինձանից ինչպէս մի զզւելի օձից։ Ես գոռացի և ինքս իմ ձայնից զարթնեցի։

ՍՈՒՍԱՄԲ։ Կարող եմ ասել, որ դա շատ լաւ երազ է։ Նա քեզ է մոռացել, դու էլ նրան կըմոռանաս, պրծու, գնաց։

ՍՈՒՍ. Ես առաւօտեան բաց արի «Երազագիրքը», նայեցի։ Այնտեղ ասւած է. «օրը չար է, երազը երրորդ օրը կատարի»։ Այսօր երրորդ օրն է. առաւօտից դէս ես ահ ու սարսափի մէջ եմ։ (Գրկում է Սուսամբարին եւ հանգարտ լալիս)։

ՍՈՒՍԱՄԲ։ (համբուրելով Սուսանին, շոյում է նրա գլուխը)։ Լաւ, հանգստացիր։ Հողես Երազագիրք շինողի գլուխն էլ։ Իսկի չտեսայ, որ նրա ասածը կատարւի։

ՍՈՒՍ։ Սիրտս, սիրտս է վկայում, որ իմ գլխին մի փորձանք է գալու։

ՍՈՒՍԱՄԲ։ Ուֆ, հոգիս բերանս բերեցիր քո ախ ու վախով։ Դէ, հերիք է ինչքան լաց եղար։ Գնայ գարմանդ բեր, ածեմ, մի քիչ քէֆդ բացւի։

ՍՈՒՍ։ (աչքերը սրբելով ու Սուսամբարից բաժանւելով)։ Գարմանդ չունիմ, Սուսամբար, կոտրւեց, դէն գցեցի։

ՍՈՒՍԱՄԲ։ Գիտես ինչ. եթէ այսուհետև էլ լաց ես լինելու, ես քո տունը ոտ չեմ դնիլ։

ՍՈՒՍ։ (ժպտալով)։ Լաւ, լաւ, մի նեղանար, էլ լաց չեմ լինիլ։

ՍՈՒՍԱՄԲ։ Աւելի լաւ է եկ նստենք այստեղ և մտիկ անենք փողոցով անցնողներին։ Դա մեր միակ զբաղմունքն է։ (նստեցնում է լուսամտին եւ նստում թախտի վրայ։ Լուսամտից դուրս նայելուց յետոյ։ Սպասիր, սպասիր, աղջի, այդ ձիաւորն ո՞վ է, որ մօտենում է ձեր դռներին։ Աղջի, մարդդ գալիս է, մարդդ։ (ծափ է տալիս ուրախ ուրախ)։ Այս էլ քո երազը։ (Վեր է կենում)։

ՍՈՒՍԱՄԲ։ (ցնցւել է) Սխալւում ես, մարդս Զատկից առաջ չի կարող գալ։

ՍՈՒՍԱՄԲ։ Քեզ բան եմ ասում։ Նա ինքն է, սպիտակ ձիով շուլլահիից ճանաչեցի։ Այ, տես, ձիուց ցած եկաւ, ներս է մտնում (յետ դառնալով)։ Դէհ, աչքդ լոյս։ Բայց ինչ պատահեց քեզ։

ՍՈՒՍԱՆ։ (գուռնատւել է, դողում է) Դա լաւ նշան չէ, Սուսամբար։

ՍՈՒՍԱՄԲ։ Ցիմար յիմար մի խօսիր։ Վազիր առաջը, վզովը փաթաթւիր։ Դէհ շուտ, լաւ, ես կգնամ, որ պաշպշելդ չտեսնեմ։

ՍՈՒՍ։ (իշխելով իրան) Ահ, Սուսամբար, աղաչում եմ, ինձ մենակ չթողնես։

ՄՈՒՍԱՄԲ։ Գնա, գնա։

ՍՈՒՍ։ (գնում է խորքի դռներով)։

ՏԵՍՈՒԼ Գ.

Նոյնք եւ Ռուստամ

ՍՈՒՍԱՄԲ։ (Շարշոնը վերցնում է եւ պատրաստւում է գնալու)։

ՌՈՒՍՏ։ (գալիս է խորքի դռներով ճանապարհի հագստով, ձեռքին մի խուրջին։ Դեմքը հոգեկան տանջանքներից եւ յոգնածութիւնից աղաւաղւել է։ Ներս մտնելով, խուրջինը դնում է մի անկիւնում, վերցնում է ուսերից հրացանն սուր եափնջին։ Նայում է Սուսամբարին եւ գլխի շարժումով պատասխանում է նրա բարեւին)։

ՍՈՒՍԱՄԲ։ (երեսը շալով ծածկելով)։ Բարով հազար բարի եկար։ (տեսնելով, որ իւր ներկայութիւնն անախորժ է Ռուստամին, փաթաթւում է շարշոնի մէջ եւ գնում է դեպի խորքի դուռը։ ուր հանդիպում է Սուսանին)։

ՍՈՒՍԱՆ։ (յետ է գալիս խորքի դռներով։ Նշաններով խնդրում է Սուսամբարին իրան մենակ չթողնել),

ՍՈՒՍԱՄԲ։ (մերժում է Սուսանի խնդիրը եւ դուրս գնում)։

ՏԵՍՈՒԼ 7.

Ռուստամ եւ Սուսան

ՍՈՒՍ։ (Առաջ է, գալիս. ճնշած է, բայց ուշքը ժողովել է։ Կանգնում է Ռուստամից հեռու, սպասողական դիրքում)։

ՌՈՒՍՏ։ (բառական լռութիւնից յետոյ) Ո՞վ էր այդ կինը։ (շուլլահին վերցնում է եւ մի կողմ դնելով նստում)։

ՍՈՒՍ։ Վալադանց Սուսամբարը։

ՌՈՒՍՏ։ Որտեղ է սկեսուրդ։

ՍՈՒՍ։ Եկեղեցի է գնացել։

ՌՈՒՍՏ։ (մեկուսի) Ինձ համար աղօթք անելու։ (հառաջում է) Ծառան ձին տարաւ ախոռատուն։

ՍՈՒՍ։ Տարաւ,

ՌՈՒՍՏ։ Պիտի ասէիր, որ գարի ու գարման շատ տայ։

ՍՈՒՍ. Ասացի (վերցնում է խուրջինը, հրացանն ու եափնջին, տանում միւս սենեակ եւ իսկոյն վերադառնում)։

ՏԵՍԻԼ Տ.

Նոյնի եւ Սանամ

ՍԱՆԱՄ։ (դրսից) Ղմրթ ես ասում։ Ա՛հ, ա՛հ (շտապով ուրախ ուրախ գալիս է խորքի դռնով) Ռուստամ, բալաս, թարթափիլ անեմ ոտներիդ տակ։ Եկար։ Բարով հազար բարի ես եկել։ (ջարշովը վերցնում է եւ Ռուստամին մի քանի անգամ համբուրում)։ Կարօտած մայրդ բոլոր մատաղ։ Աստուած աղօթքներս լսեց։ Աղաչում էի նրան, որ ինձ շուտ արժանացնի տեսութեանդ, արժանացրեց։ Թող մէկ էլ կարօտս առնեմ։ (ուզում է կրկին համբուրել)։

ՌՈՒՍՏ։ (ասստ. բայց ոչ կապիտ, նրում է Սանամին, ոտքի է կանգնում) Բաւական է։

ՍԱՆ։ (հիասթափուած) Չե՞ս թողնում, որ քեզ համբուրեմ, ամօթ քեզ։ (տօնը փոխելով) Ա՛խ, կուրանամ ես, խելքս Աստուած առել է։ Դու ցրտից ես դալիս։ Աղջի, Սուսան, ծառային հրամայիր սամավարը դնի, որ մարդդ տաք տաք չայ խմի։

ՍՈՒՍ։ (ուզում է գնալ ձախ կողմի դռներով)։

ՌՈՒՍՏ։ Հարկաւոր չէ։

ՍՈՒՍ։ (կանգ է առնում)։

ՍԱՆ։ Ի՞նչ է պատահել քեզ, որդի, ի՞նչ ու աչքունքդ թթուած է։

ՌՈՒՍՏ։ Հինգ օր ու հինգ գիշեր եմ անցկացրել ձիու վրայ։

ՍԱՆ։ Հինգ օր ու հինգ գիշե՞ր, քար կտրէի մայրդ։ Նա տաք տնում նստի, դու Դաղստանի սարերը չափչփե՞ս ձիւն ու ձմեռ։ Հանգստացիր, որդի, հանգստացիր։ Աղջի, Սուսան, տեղեր պատրաստիր մարդուդ համար։ Կուզե՞ս։

ՌՈՒՍՏ։ (թող պատրաստի, ծխախոտ է ծխում, վեր է կենում ու սկսում յետ ու առաջ քայլել)։

ՍՈՒՍ. (միւս սենեակից բերում է մի վերմակ, մի նեթքնարկ եւ սկսում անկողին պատրաստել թախտի վրայ։ Յետոյ վառում է երկու մոմ սեղանի վրայ)։

ՍԱՆ. Բայց առաջ մի բան կեր, յետոյ կհանգըստանաս։ Երեւի, քաղցած ես, լաւ ճաշ ունեմ, փչաւ պատրաստեմ։

ՌՈՒՍՏ։ (ներսային) Ես ոչինչ չեմ ուզում, ոչ ուտել, ոչ խմել, գլուխս մի ցաւեցնիր։

ՍԱՆ։ (վշտացած) Լաւ, լաւ, չեմ եփիլ, մի նեղանար, բայց գիտես...

ՌՈՒՍՏ. (անհամբեր ընդհատելով) Դնա սենեակդ։

ՍԱՆ։ Դու ինձ դո՞ւրս ես անում։ Լաւ, լաւ (յանկարծ մի բան յիշելով, նենգամիտ ժպիտով) Հա, հասկացայ, ինչ միամիտն եմ։ Լաւ, լաւ, գնումեմ։ Դէ, ի հարկէ, դու չահիլ, նա չահիլ։ Մի բարձի ծերանաք, վայելեցէք։

ՌՈՒՍՏ։ (վրդովւելով) Ցիմարոյիմար բաներ ես խօսում, պառաւ։

ՍԱՆ. Ես մեղայ Աստծու, ես մեղայ Աստծու, էլ չեմ խօսիլ։ Ի՞նչ անեմ, ուրախութիւնից խելքս կորցրել եմ։ Տեսնը, Սուսան, տեսնը։ Զասացի՞ քեզ, որ այս գիշեր լաւ երազ եմ տեսել։ Գիտե՞ս, Ռուստամ, դու նստած էիր սպիտակ ձիու վրայ։ Սպիտակ ձին անմեղութիւն է։

ՌՈՒՍՏ։ (խիստ) Մի երկարացնիր։ Բարի գիշեր։

ՍԱՆ։ Գնում եմ, գնում եմ, որդի։ Բարի գիշեր։ Տէրը քեզ հետ (ճանդարտ քայլերով գնում է ձախ կողմի դռներով, բացուն արտասուելով)։

ՏԵՍԻԼ 9.

Ռուստամ եւ Սուսան

ՌՈՒՍՏ։ (Անցուդարձ է անում, բեղերը ներքին պորելով։ Առանց Սուսանին նայելու)։ Կողպիր այդ դռները։

ՍՈՒՍ։ (որ վերջացրել է գործը, կանգնել է մի անկիւնում տխուր, ճեզ, բայց արդեն վճռական դէմքով. ծածկում է ձախ դուռը)։

ՌՈՒՍՏ։ (նստում է անկողնի վրայ եւ նայում Սուսանին զննական հայեացքով) Մօտ եկ։

ՍՈՒՍ։ (անշարժ է)։

ՌՈՒՍՏ։ (ձայնը բարձրացնելով) Մօտիկ եկ, ասում եմ.

ՍՈՒՍ։ (մի քանի քայլ առաջ է գալիս)։

ՌՈՒՍՏ։ Մոտիկ արա աչքերիս։

ՍՈՒՍ։ (նայում է նրա աչքերին եւ սարսափած երեսը դարձնում)։

ՌՈՒՍՏ։ Ինչու վախեցար։

ՍՈՒՍ։ Աչքերդ արիւն է կոխել, մի նայիր ինձ այդպէս (երեսը ծածկում է ձեռներով)։

ՌՈՒՍՏ։ Դուռը կողպեցիր։

ՍՈՒՍ։ Ծածկեցի։

ՌՈՒՍՏ։ Ես քեզ հրամայեցի կողպել (վեր է կենում, արագ մօտենում ձախ կողմի դռան, կողպում եւ բանալին վերցնում)։ Ահա, այսպէս։ Ա՛հ, եթէ կարելի լինէր ձեր ամօթը այսպէս կողպել և բանալին շպրտել աղբանոց (բանալին ձգում է յատակի վրայ) Անպատկառ։

ՍՈՒՍ։ (ուժգին ցնցուում է, բայց իշխում է իրան եւ գլուխը հպարտ բարձրացնում) Ինչու ես ինձ անպատուում։

ՌՈՒՍՏ։ Նրա համար, լիրբ, որ դու ինձ խայտառակել ես ամբողջ քաղաքում,

ՍՈՒՍ։ Ինչով եմ քեզ խայտառակել։

ՌՈՒՍՏ։ Հարցրու այս անկողնին։ Ասա, քանի՞ անգամ ես անպատուել այդ անկողինը նրա հետ։

ՍՈՒՍ։ Չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել։

ՌՈՒՍՏ։ Անմեղ մի ձեւանար. ես համբերութիւն չունիմ։ Պատմիր բոլորը, ինչ որ արել ես։

ՍՈՒՍ։ Ես ոչինչ չեմ արել, թող ինձ հանգիստ։

ՌՈՒՍՏ։ Խոստովանիր, ասում եմ, քանի որ ուշ չէ։ Ասա։ Ճանաչում ես կուժ ծախող Հայրապետի տղայ Սէյրանին։

ՍՈՒՍ։ (ցնցուում է, բայց եւ իսկոյն արիանում) Ճանաչում եմ։

ՌՈՒՍՏ։ Դէ, դէ, շարունակիր, պատմիր։

ՍՈՒՍ։ Ես պատմելու ոչինչ չունիմ։ Բոլորը յայտնի է քեզ։ Սէյրանը մեր հարեւանի որդին էր։ Մեր ծնողները երեխայ ժամանակներս մեզ նշանել են այնպէս, ինչպէս սովորութիւն է մեզանում նշանել։ Մենք մեծացել ենք, նա փչացել է։ Հայրս չի հաւանել նրան և ինձ տուել է քեզ։ Բայց ինչու համար է հարց ու փորձը, քանի որ դու ամեն բան գիտես։

ՌՈՒՍՏ։ Ես էլ կարծում էի յիմարի պէս, որ ամեն բան գիտեմ։ Անպատկառ։

ՍՈՒՍ։ Մի անպատուիր ինձ անմեղ տեղը, գլխիդ վրայ Աստուած կայ։

ՌՈՒՍՏ։ Չկայ իմ գլխին Աստուած։ Նա ինձանից խռովել է այն օրից, երբ դու ոտք ես դրել իմ տունը։ Դէ, մի երկարացնիր, ասա. սիրե՞լ ես այդ լակոտին։

ՍՈՒՍ։ (քիչ տատանուելով, վճռական) Սիրել եմ։

ՌՈՒՍՏ։ (ցնցուելով) Ա՜հ, լաւ, շարունակիր։

ՍՈՒՍ։ (արիանալով) Ականջ դիր, Ռուստամ, ես ոչ մարդկանց զրպարտութիւններից եմ վախենում, ոչ քո դաշոյնից, որի վրայ այդպէս սեղմել ես ձեռդ։ Ես միայն մի երկիւղ ունիմ։ Դա Աստծու ահեղ դատաստանն է։ Այն օրը, երբ դու և ես կկանգնենք այդ դատանի առաջ, դու կզղջաս քո սասծների համար։ Ես անմեղ եմ քո անկողնի մօտ.

ՌՈՒՍՏ։ Սուտ ես ասում, լիրբ, սրանից հինգ օր առաջ քո սիրականը իմ խանութում, չորս ընկերներիս և ծառայիս առաջ, խոստովանեց, որ դու պատկանել ես նրան։

ՍՈՒՍ։ (անջատի զայրացած) Այդ անկարելի է, սուտ է։ Սէյրանը չէր կարող այդ ասել։

ՌՈՒՍՏ։ Բաց արա կուրծքդ (դողում է յուզմունքից)։

ՍՈՒՍ։ Ես վախենում եմ քեզանից։ Դու կարող ես ինձ սպանել։

ՌՈՒՍՏ։ (ամեղագոչ) Կուրծքդ։

ՍՈՒՍ։ Մի՛ արա, մեղք եմ, մի՛ արա։

ՌՈՒՍՏ։ Կուրծքդ (յարձակւում է Սուսանի վրայ)։

ՍՈՒՍ։ (փախչում է դեպի խորքի դուռը) Օգնեցէք, օգնեցէք, նա ուզում է ինձ մորթել։

ՌՈՒՍՏ։ (մօտենում է և բռնում Սուսանին) Զայնդ կտրիր, շան աղջիկ։

ՍՈՒՍ։ (ջոքում է Ռուստամի առաջ) Աղաչում եմ, մի՛ սպանիր, խեղճ եմ, խնայիր։

ՌՈՒՍՏ։ (գնում է Սուսանի կուրծքը) Ահա, ահա նա, քո անմեղութիւնը։ Սև խալը, խալը։ Ես խանչալիս ծայրով դուրս կբերեմ և շներին կշպրտեմ։ Սատկիր, անառակ։ (դաշոյնը խրում է Սուսանի կուրծքը)։

ՍՈՒՍ։ (ընկնելով յատակի վրայ) Արդանդիս երեխան վկայ, անմեղ եմ։

ՏԵՍԻԼ 10.

Շոյնք և Սանամ

ՍԱՆԱՄ։ (մինչեւ Սուսանի մեռնիլը դռների ետեւից գոռում է) Ի՞նչ պատահեց (ուժգին զարկելով դռներին)։ Բաց արէք, բաց արէք։

ՌՈՒՍՏ։ (կանգնում է մի անկիւնում, արիւնոտ դաշոյնը ձեռքին եւ նայում է Սուսանին)։

ՍԱՆԱՄ։ Ինչ պատահեց։

ՌՈՒՍՏ։ Աստծու դատաստանը կատարուեց, մայրս։ Ուրախացիր քո բերած հարսով։

ՍԱՆԱՄ։ (տեսնելով Սուսանի դիակը, սարսափած)։ Գազան, գազան, այդ ի՞նչ արիր։ (վազում է դեպի լուսամուտ, կոտրում ապակին եւ դեպի փողոց) Օգնութի՛ւն, օգնութի՛ւն, այստեղ եկէք։

ՏԵՍԻԼ 11.

Նոյնք, Հարեւաններ երկու սեռից եւ Սէյրան

ՀԱՐԵՒԱՆՆԵՐ։ (Ներս են խուժում խորքի դռներից կանայք եւ տղամարդիկ։ Ոմանք գիշերուայ հագուստով են)։

ՍԷՅՐԱՆ։ (վազում է ներս խորքի դռներից ճանապարհի հագուստով։ Գունատ է, մազերը գզգզած, աչքերը կարմրած։ Խելագար է)։ Բռնեցէք Ռուստամին, մի՛ թողնէք մօտենայ թութի ծառին։ Ես սուտ եմ ասել։ Սուսանն անմեղ է։ Խալը մայրս է տեսել բաղնիսում, ես չեմ տեսել։

ՌՈՒՍՏ։ (ցնցուում է Սէյրանի խօսքերից) Նա ան-

մեղ էր, հողիս էլ կորաւ (դաշոյնը ձեռքից բաց թողնելով, ընկնում է հարեւանների գիրկը)։

ՍԷՅՐԱՆ։ (տեսնելով Սուսանի դիակը, արձակում վայրենի ճիչ) Ա՜հ, աս, նա ընկած է։ Վեր կաց, Սուսան, վեր կաց, քեզ համար թուք եմ թափ տալիս։ (բռնում է ներկայ եղողներից առաջին պատահողին եւ թափահարում իբրեւ ծառ.) Վեր.կաց (կատաղի ճիչ) Ա՜հ, ահ, ահ...

ՄԻ ՀԱՐԵՒԱՆ։ Նա խելագարւել է. կապոտենք նրան։

ՍԱՆԱՄ։ Բալաս վայ, վայ բալաս (կուրծքը կեղեքում է)։

Վ. Ա Ր Ա Դ Ո Ց Ը

Վ Ե Ր Ջ

ԳՈՒՅՏԵՆԻԵՐԳ

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Աբելեան Ա. Էքսպրոպրիացիա. կատակ. մի գործ, 20
» Գիւղի վարժապետ, պիէս երկու գործ. 30
» Անկոչ հիւր, պիէս մի գործ. 25
» Խելագար Մինաս, պիէս մի գործ. 20
» Պոէտի երազը, պիէս մի գործ. 20
» Մարւոց հրաշքներ, պիէս 3 արարւած. 60
» Նշանուածներ, պիէսա 3 գործ. 60
» Գարբեջուկ, մանկական թատրոն 1 գործ. 10
» Գաճաճը, զաւեշտ մի գործողութեամբ. 10
Արաքսեան Պ. Ժողովրդական թատրոն, Ժողովածու Ա. Թանգագին համրոյր, Ցանկալին և անսպասելին, Լուսանկարչութեան պատուհաս, Բաբելոնեան խառնակութիւն, Աւետիս Աղա, Շփոթուած ծառայ. 1
Ժողովածու Բ. Գող, Պաշտօնս է Խռամփալ, Զուքանչի Գալուստը, Կրէչինսկի իւրկայով, Սիրահարուած մայր, Արեան դէպք. 1
Արաքսեան Պ. Սիւրպրիզ, վոդէվիլ 1 արար. 20
Արարատեան Ա. Սուտ ճգնաւոր, վոդ. 1 արար. 20
Աւետեան. Թատրոն. Գրադարան հատոր Ա. Սիրտը հանելուկ է, Վէրջէի գալոնիքը, Ինչպէս թողին նրանք տեսիլը, Առաջարկութիւն, Էս էլ քեզ 200000, Կանացի ցանցառութիւն. 1
Հատոր Բ. Զուարճալիք, Միրառ մինստրին, Գազանի յետևից. Փոթորիկ, Զարաճճի, Զարագուշակ նստարան. 1
Ատրպետ. Շուշան օպերա 3 արար. 1

Անդրէէ Լ. Անաթէմա թարգմ. Ա. Յ. . . 1
Աղայեան Ա. Զար մարդու վերջը, դրամա 5 գործ. 30
Բրակո. Պատուաւորներից մէկը, կոմեդ. 1 արար. 15
Գոգոլ. Ամուսնութիւն, կատակ 2 գործ. թ. Պոշեանի 30
» Վերաքննիչ, կատակ 5 արար. թարգմ. Լ. Տ. 50
Գիւլխանդանեան Յով. Գրչի մարգը, կեանքի դրամա 3 գործ. և մէկ պատկերով. . . 20
Գեոթէ. Ֆաուստ ողբերգութիւն թարգմ. Գ. Բ. 2
Դը-կիւրել. Նոր կուռք, 3 արար. Թ. Տ. Վ. . 30
Դաղեան Վ. Բարի է Սուրիկը, 2 գործ. . . 15
Երիցեան Ա. Սխալ հաշիւ, կոմեդ. 4 գործ. . 50
Եսայեան Յ. Սօնայի նշանդրէքը կամ մօրիքուլի վրէժը, վոդեվիլ մէկ գործողութեամբ. . 15
Ինիկարմարտի շաւարը կամ մօդնի իւպկա վոդ. 1 գործողութեամբ. 20
Եակովլև. կանացի հետաքրքրութիւն կամ Ադամ ու Եւա. կատադ. 2 գործ. թարգման. Վրոյր. 30
Զուզերման Գ. Պատիւ, կոմեդիա 4 արարուածով թարգմ. Յ. Ղարագեօզեանց. . . . 50
Էշէգարա. Մարիանա, դրամա 3 գործ. թարգմ. Ա. Կրասիլնիկեան. 1
Թառայեան Ս. Թաղնուած կայծեր, դր. 5 գործ. 1 25
Թումանեան Յ. Սրտաւազդ, պատկերով. . . 30
» Խոլերա վոդեվիլ 1 արար. . . . 20
Իբսէն. Հասարակութեան նեցուկները, դրամա չորս գործ. թարգմ. Լ. Բաբայեան. . 50
Լուազօն. Արիւնի Աւետարանը, դրամատիքական ոնցք 1 գործող. թարգմ. Տ. Զաւէնի. . 25
Լէննի. Նիւբէ կամ Մարմարեայ վարժուհին 3 ար. 20
Լիակատար ցանկը պիէսների կազմ. Ա. Թարխան. 50
Գոմի բակում, կատակերգութիւն մանկական. . 12
Հաուպտման. Ջուլհակներ, դրամա 4 գործ. . 40
» Կառապան Հենշէլ, դրամա 5 գործ. թարգմ. Լ. Բաբայեանի . . . 50

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. Մ. ...
ՍՍՍՌ ...

Ղազարեան Յակ. Եաղ Աստ, վոդեվիլ մէկ արարուածով և երկու պատկերով. . . . 25
Ղարաջեան. Փուչ զաւակ, դրամա 5 գործ. . 50
Մանուէլեան Մ. Դրամատիկական էտիւդներ, Գիրք առաջին, Գանգէ, Շեղուածքներ, Ուշէ, Վերջինը, Դէպի քայլողը, Լոյսը. . . 35
Մելիք Մաթէոսեան. Սուրէնի կարդալը, մանկակ. 7
» Մենք ապագայ հերոսներ ենք վոդ. 1 գործ. 25
Մէրէ Շարլ, «Հիդրա», դրամա 6 գործ. թարգմ, ֆրանսարէնից Վ. Փափազեան. . . 50
Միրբո. Գործը գործ է պահանջում, կատ. երեք գործ. թարգմ. բնագրից Կ. Ջալալեան. . 40
Մուրացան, Ռուզան, դրամա չորս գործ. . . 1 50
Մոլիեռ. Կեղծ ազնուհիք. 40
Մոչխուբարիձէ. Ղաչաղ Արսէն, դրամա 4 գործ. 20
Մադաթեան Վ. Կրոթ-Կրոթ, վոդեվիլ 1 արար. 25
Նկարիչ. Խելքի տոպրակներ, 3 գործ. . . 30
Շանթ. Եսի մարդը, դրամա հինգ արար. . . 60
» Հին Աստուածներ. 60
Շահ-Պարօն, Անտոն Սիմոնիչ, դրամա 4 գործ. . 40
» Աշխէն, դրամա 5 գործ. . . . 25
» Արմէն ու Ֆաթման դրամա 5 գործ. . 25
Շէքսպիր Ռոմէօ և Ջուլիէտ, ողբերգ. 5 արար. . թարգմ. Յովհ. Խան Մասեհեանցի. . . 60
» Արքայ Լիր, ողբ. հինգ արար. նոյնի թարգմ. 50
» Վենետիկ վաճառականը. » . 40
» Ինչպէս կուզէք. » . 50
» Օտէլլո, ողբերգ. 5 արար. Թ. Սուլխանեանի. 60
Շիլլեր. Աւազակներ, թարգմ. Փ. Վարդանեան . 50
Շիրվանզադէ Եւգինէ դրամա 3 գործ. . . 50
» Պատուի համար դր. 4 գործ. . . . 60
» Կործանուածը դրամա » » . . . 50

» Զարոգին դրամա չորս գործ. . . 75
» Նամուս դրամա » » . . . 75
» Աւերակների վրայ դր. 3 գործ. . . 50
» Շարլատանը, կոմեդ. 1 գործ. . . . 30
Պատկանեան. Հռիփսիմէ կամ փրկութիւն Հայաստանի 1 ր. Սանդուխտ. դր. 3 գործ. . 50
Պշիբշևսկի. Երջանկութեան համար, դրամա երեք գործ. թարգմ. Ս. Շխեանց. . . . 50
» Ջիւն, դրամ. 4 արար. Տէր-Գրիգորեան. . 40
Պուշկին. Ցաւերժահարսը. . , . . 15
Պարոնեան Արևելեան առասպարոյժ, կատադերգ. 50
Սարդու. Ոգեհարցութիւն, թատերգ. երեք արարուածով թարգմ. Մելիք-Ադամեանց. . . 50
Սարդարեան-Արեշատեանց. Երազ կամ Օսդան Պետրովիչն Եղեմում, ֆէյերիա 1 գործ. . 20
Սօսին Կ. Լաքաթա փրանս. վոդ. 1 արար. . 25
Սունդուկեան Գ. Սէր և ազատութիւն կատակերգութիւն հինգ արարուածով. . . . 1
» Էլի մէկ զոհ, կոմեդիա 5 ար. . . . 1
» Պէպո, կատակ. չորս արարուածով. . . 50
» Ամուսիններ, կատակ. չորս արարուածով. . 1
» Օսկան Պետրովիչն էն կհանքումը, 1 արար. 30
» Գիշերվան սաբրը խէր է, կատակ. մէկ ար. 30
» Խաթաբալա, կատակ. 4 ար. և 6 պատկ. . 50
» Բանդած օջախ, կատակ. երեք. արար. . 50
» Բաղնիսի Բօխչա, կատակ. երեք. արար. . 40
» Եւ այլն կամ նոր Դիոգինէս, 2 արար. . 40
» Ժորժ Դանդէն կամ շփոթուած ամուսինը, կատակ. 3 արար. թարգմ. Գ. Սունդուկեան 40
Վարդանեան Ա. Անարխիստը. վոդեվիլ 1 արար. 15
Տէր-Գրիգորեանց Մ. Էս էլ քի մոցիքլութիւն. . 20
Տիրացեան. Որոմ ցանողները կոմեդ. 3 գործ. . 35

Դիմել Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ". Г. И. Галустяну; Штабная улица, д. Лалаева, № 2.

Հայաստանի Ազգային գրադարան
NL0439043

48323